ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(75-րդ տարի) **Թիվ-7** (1653) Հուլիս 2021

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Յայտարարութիւն
(էջ 1)

2- Առաջնորդող
Պայքարը կշարունակվի մինչև հաղթական ավարտ (էջ 2-3)

3- Քաղաքական
Հրաչ Վարժապետեան
Ի՞նչն էր պատճառը (Խորհրդարանական արտահերթ ընտրութեան լոյսին տակ) (էջ 4)
Արմեն Ասրյան
Պատմության դասերը և 2020 թ. աշնան աղետի պատճառներն ու պատասխանատուն (մաս 2-րդ) (էջ 5-10)
Անի Մելքոնյան
Դավաճանությունների դերը հայկական պետականությունների կործանման մեջ (էջ 11-15)

4- Հասարակություն
Սիւզան Խարտալեան
Ողբերգութիւնը եւ մենք շաղկապուած դաւադիրներ ենք (էջ 16-17)

5- Աշխարհաքաղաքական
Արփի Աբրահամյան
Ռազմավարական նշանակության հայ-ռուսական պայմանագրեր և համաձայնագրեր (էջ 18-22)

6- Տարածաշրջանային
Արտյոմ Տոնոյան
Մի քանի դիտարկում Ադրբեջանում իրանաֆոբիայի դրսևորումների շուրջ (էջ 23-25)

7- Դաշնակցական բեմ
Աւօ Գաթրճեան
Պատառիկներ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն Կուսակցութեան Ծածկանուններու բառարան»-ից (էջ 26-33)

8- Պատմության լուսարձակ
Մարիամ Վռամի Հովսեփյան
Հայկական պատվիրակությունների ակնկալիքները և Սևրի դաշնագիրն ըստ Կ.Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի հրապարակումների (1918-1920 թթ.) (էջ 34-43)

9- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն
Ձերբազատինք նաեւ ներքին խտրականութենէն (էջ 44)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՅԴ Հայաստանի 24-րդ գերագույն ժողովը, քննելով Հայաստանի Հանրապետությունում ստեղծված քաղաքական և անվտանգային իրավիճակը, տեղի ունեցած ընտրական և հետընտրական գործընթացները, երկրում առկա բարոյահոգեբանական մթնոլորտը, **արձանագրում է, որ՝**

-խորհրդարանական ընտրությունները չհանգուցալուծեցին երկրում արդեն տևական ժամանակ շարունակվող քաղաքական և ներհասարակական ճգնաժամը,

-երկիրը պարտության հասցրած իշխանությունը, հունիսի 20-ին կայացած ԱԺ արտահերթ ընտրություններում զանգվածաբար գործի դնելով վարչական, ֆինանսական լծակները, կեղծիքները, հանրությանը մոլորեցնելու, ապատեղեկացնելու բոլոր անթույլատրելի մեթոդները, կարողացավ վերարտադրվել, ինչը լրջագույն մարտահրավեր է մեր ազգային անվտանգության և պետականության համար,

-ԱԺ արտահերթ ընտրություններում Հայ Յեղափոխական Դաշնակցությունը գործընկերների հետ ձևավորեց «Հայաստան» դաշինքը, իր բազմահազար նվիրյալ շարքերով վճռական մասնակցություն ունեցավ ընտրապայքարին, իսկ «Հայաստան» դաշինքը դարձավ այս իշխանությունների իրական և գլխավոր այլընտրանքը,

-հետընտրական շրջանում օրվա իշխանությունը շարունակում է հանրության պառակտման, երկրում ջրբաժանների խորացման, քաղաքական հետապնդումների սանձազերծման, Արցախյան հիմնախնդրի անտեսման, երկրի անվտանգային համակարգի միտումնավոր քայքայման, ազգային արժեքների և հաստատությունների դեմ կազմակերպված արշավի քաղաքականությունը,

-վտանգավոր չափերի են հասնում արտագաղթի ծավալները, ինչն ուղղակի հարված է մեր պետականությանը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույ ն ժողովը, ելնելով ստեղծված իրավիճակից, հայտարարում է՝

- հետամուտ է լինելու հայրենադավ իշխանության հեռացման պայքարին, հանդես է գալու իբրև արմատական ընդդիմություն, գործադրելու է քաղաքական պայքարի բոլոր հնարավոր միջոցները,
- հիմք ընդունելով «Հայաստան» **դաշինքի** համագործակցության Հռչակագիրը, կարեւորելով և գնահատելով Դաշինքի ձևավորումը ու շարունակվող սերտ և արդյունավետ համագործակցությունը, հարգանքի եւ վստահության հենքով շարունակելու է գործընկերությունը՝ համատեղ ուժերով ընդհանուր նպատակների իրագործման ուղղությամբ,
- հավատարիմ է լինելու Արցախի Հանրապետության անկախության ճանաչման, տարածքային ամբողջականության վերականգման, տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության պայքարին,
- վճռականորեն հակազդելու է մեր երկրի տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և ինքնիշխանությունը վտանգող գործընթացներին, ՀՀ զինված ուժերի կազմաքանդմանն ուղղված և ազգային-հոգևոր հաստատությունների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ իրականացվող՝ օրվա իշխանությունների քողարկված և բացահայտ քայլերին ու գործողություններին,
- գործադրելու է բոլոր ջանքերը հանրային համախմբվածության ամրապնդման, ապազգային, հակապետական դրսևորումների դեմ ազգային դիմադրական ցանցային շարժում ձեւավորելու ուղղությամբ,
- մշտապես ուշադրության ներքո է պահելու մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության, սոցիալական խնդիրների լուծման հարցերը,
- ընդդիմանալու է Հայաստանի և Սփյուռքի միջև խզում առաջացնելու եւ պառակտում սերմանելու, կայացած ավանդական կառույցների դերակատարության նսեմացման փորձերին:

ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունները, հայոց բանակը, մեր ժողովրդի ապագան վտանգի մեջ են:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը կոչ է անում կուսակցական շարքերին, երկրի ապագայով մտահոգ մեր հայրենակիցներին շարունակել վճռական պայքարը՝ օր առաջ հայրենադավ իշխանություններին հեռացնելու և ուժեղ Հայաստան կառուցելու համար:

ՀՅԴ Հայաստանի 24-րդ Գերագույն ժողով
Երևան
05 հուլիս 2021 թ.

Պայքարը կշարունակվի մինչև հաղթական ավարտ

Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները ոչ միայն լուծման հեռանկար չնախանշեցին առկա հիմնահարցերի համար, այլև ավելի սրեցին տագնապը երկրի ապագայի հարցում: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ հրապարակված արդյունքներով փրկության հույսի ու գահավիժման ընթացքի երկընտրանքի պարագայում ընտրվեց կործանման ճանապարհի շարունակումը: Իսկապե՞ս իշխանական ուժի ի սկզբանե որդեգրած անօրինական գործունեությունն ու կեղծարարությունը, ուղեղների լվացման ժամանակակից տեխնոլոգիաները կանխորոշեցին ընտրությունների ելքը, թե՞ ժողովուրդն ողջ խորությամբ չգիտակցեց պետականության ու իր ապագայի առջև ծառացած աղետի մեծությունը: Կարելի է ասել, որ այդ ամենը փոխկապակցված է, և մեկը բխում է մյուսից: Դժվար է այդ մասին բարձրաձայնելը, սակայն պետք է խոստովանենք, որ հայ ժողովրդի մի զգալի հատվածն այսօր գտնվում է բարոյահոգեբանական անկման, իրավիճակի ոչ համարժեք գնահատման, քաղաքացիական պատասխանատվության կորստի, ինչպես և ազգային շահի հարցում ապակողմնորոշվածության ու շփոթի մեջ: Այո, ժողովուրդներին կարելի է ներշնչել ինքնանվիրումի ու անձնազոհության ոգի, գաղափարական ու բարոյական վեհ արժեքներ, հավատարմություն՝ հավաքական շահին, և կարելի է նույն ժողովրդի զանգվածային գիտակցության մեջ ներարկել այդ ամենի հակառակը: Այդ սատանայական հակառակը, ստորացուցիչ պարտվողականությունն ու ազգային հավաքական նպատակներից նահանջը հայ ժողովրդին ներշնչվեցին բախտախնդիր, պիղծ ու օտարասուն տարրերի կողմից՝ Հայաստանում իշխանությանը տիրելու առաջին օրերից, իսկ ամենասարսափելի հոգեփոխությունը բոլորիս աչքի առաջ տեղի ունեցավ մեկ օրվա ընթացքում: Պայքարի վճռականությամբ ու հաղթանակի հավատով տոգորված հանրությունը հուսալքվեց, թուլացավ սեփական ճակատագիրը տնօրինելու նրա կամքը, երբ 2020 թվականի նոյեմբերի 10-ի առավոտյան տեղեկացավ, որ 44 օր պարուրված է եղել կեղծիքի թմբիրի մեջ, որ պատերազմի յուրաքանչյուր օր կրել է տարածքային ու մարդկային թանկագին կորուստներ և ի վերջո հայտնվել է ջախջախիչ պարտության հանդիման: Հետևողականորեն ներշնչվող դատապարտվածության զգացման, տեղի ունեցող հայավնաս իրադարձությունները թաքցնելու կամ աղավաղված ներկայացնելու պայմաններում, հանրության համար դժվար ընկալելի, համակերպելի դարձավ ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքների հանձնումն՝ առանց դիմադրության զիջումը թշնամուն:

Նոր պատերազմի, նորանոր ու ավելի սարսափելի կորուստների շարունակական սպառնալիքների ազդեցության ներքո գտնվող մեծ զանգվածներին հնարավոր է հաշտեցնել ոչ միայն կրած, այլև հավանական նոր պարտությունների և զիջումների հեռանկարի հետ: Հոգեկան վայրիվերումների հանգամանքը շահարկելով՝ ողբերգական անցքերի ցնցումը չհաղթահարած հանրությանը պարտադրվեցին արտահերթ ընտրությունները:

Ազգային շահերի դեմ գործող օտարի ու թշնամու կամակատար իշխանության «հաղթանակը» անմիջապես շնորհավորեցին միջազգային տարբեր բևեռներ ներկայացնող դիտորդները, սրանով փաստացի արտահայտելով իրենց աջակցությունը գործող իշխանություններին, ինչպես և համաձայնությունը հայտարարված արդյունքների վերաբերյալ: Իհարկե, ոչ ոք ակնարկ իսկ չարեց մուրճը թափահարելով՝ մրցակիցների հասցեին սպառնալիքներ տեղացող, հենց ընտրարշավի ընթացքում քաղաքական հալածանքներ կիրառող և զանգվածային ընտրախախտումներ թույլ տված քաղաքական ուժի առաջնորդի և երկրի թիվ մեկ պաշտոնյայի նախընտրական «գործողությունների» մասին: Իրենց հերթին իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան քրեական նոր հետապնդումների ծավալմանն այն անձանց ու պաշտոնյաների նկատմամբ, որոնք համարձակվել էին չենթարկվել թելադրանքին և չծառայել իշխանությանը: Այսպիսով՝ երկրում նոր թափ է հավաքում պետական համակարգի, բանակի քայքայման գործընթացը: Հնչող հայտարարությունները վկայում են, որ պետական կառույցի դեմ ուղղված ոտնձգությունների թիրախում լինելու է մասնավորապես իրավական համակարգը և՝ ոչ միայն:

Սրանով հանդերձ՝ գլխավոր աղետը, որն ընտրությունների ճանապարհով հնարավոր չեղավ կանխել, մնում է թշնամի հարևանների հետ պայմանագրերի կնքման հեռանկարը, ըստ որի՝ Հայաստանը սահմանային ու դիրքային լուրջ կորուստներ կունենա, և վերջնականապես խաչ կքաշվի Արցախի հարցի վրա:

Հայաստանի վարչապետի անօրինական պաշտոնակատարը հուլիսի 7-ին, դեռ չվերահաստատված իր պաշտոնական կարգավիճակում, բանակցությունների համար Կրեմլում հանդիպեց Ռուսաստանի նախագահի հետ: Վերջինս, շնորհավորելով նրան ընտրությունների արդյունքների կապակցությամբ, նշել է. «Կարծում եմ, դա կարևոր է բոլորի, առաջին հերթին՝ Հայաստանի, հայ ժողովրդի համար, նկատի ունենալով այն, որ նման դժվար, սուր հարցերը կարելի է լուծել միայն արդյունավետ աշխատանքի հնարավորության դեպքում, ինչի համար ամենակարևորը ժողովրդի վստահությունն ունենալն է: Այն Դուք ունեք, դա ցույց տվեցին ընտրությունների արդյունքները, ինչը շատ կարևոր է, իրականում դա ամենագլխավորն է: Երկրի համար նման դժվարին պահերին դա ամենակարևոր պայմանն է հետագա զարգացման»: Դժվար չէ կռահելը, որ հիմնական «դժվար, սուր»

հարցերը մնում են Ադրբեջանի և Թուրքիայի հետ պայմանագրերի կնքումը, երբ երկու դեպքում էլ խոսքը կարող է վերաբերել Արցախից ու Հայաստանից գրավված ներկա դիրքերի՝ որպես սահման ճանաչմանը, Հայաստանով վերջիններիս միջանցքի կամ միջանցքների տրամադրմանը: Այդ ամենի դիմաց, որպես «պարգևատրում», ինքնիշխանության երաշխիքները հավերժորեն կորցրած Հայաստանը կարող է բացել իր գիրկը թուրք-ադրբեջանցիների և ադրբեջանաթուրքական կապիտալի առջև: Մոսկովյան այս նույն հանդիպման շրջանակում ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը, պատասխանելով հարցին, թե նախատեսվո՞ւմ են բանակցություններ ադրբեջանական կողմի հետ, ասել է. «Ադրբեջանական կողմի հետ շփումները շարունակվում են: Բոլորը համաձայն են, որ եռակողմ պայմանագրերի դրույթների կատարումը շատ կարևոր է և այլընտրանք չունի: Եվ այս շրջանակներում շփումներ են իրականացվում ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմի հետ» (Պեսկովի խոսքը մեջբերել է ՏԱՍՍ-ը):

Ինչ վերաբերում է եռակողմ պայմանագրի դրույթների՝ կարևոր ու անայլընտրանք լինելուն, ապա ակնհայտ է բոլորի համար, որ այն առայժմ շահեկանորեն միակողմանի է Ադրբեջանի համար, իսկ Հայաստանը ոչ միայն դեռ ոչինչ չի ստացել, այլև շարունակում է նահանջն ադրբեջանական խաղաղ զավթողականության դեմ: Նիկոլ Փաշինյանի խայտառակ առաջնորդությամբ Հայաստանը արագորեն վերադարձրեց ադրբեջանցի գերիներին, խախտելով կնքված հայտարարությունը՝ շարունակեց առանց կռվի Արցախի տարածքները զիջել, իսկ այժմ Հայաստանի տարածքներն է զիջում նույն թշնամուն, արգելելով Հայաստանի ցանկացած ինքնապաշտպանական նախաձեռնությունը, գնալով որևէ օրինականության սահմաններում չտեղավորվող գործարքի, գերիների հերթական խմբաքանակների դիմաց վճարում է պետական հույժ գաղտնի փաստաթղթերով:

Ակնհայտ է այն, որ մենք արտաքին որևէ ուժից որևէ բան պահանջելու կամ նրա դիրքորոշումից դժգոհելու իրավունքը չունենք: Եթե մի պետություն ու ժողովուրդ չեն պաշտպանում սեփական շահերը, ապա օտարը պարտավոր չէ անել այդ բանը: Յուրաքանչյուրն առաջնորդվում է սեփական շահերով, իսկ եթե որևէ երկրի ղեկավարություն պատրաստակամ է սպասարկելու օտարի շահերը, ապա ինչու՞ չփայփայել նրան, և շահագրգռված չլինել գործ ունենալու հենց նմանի հետ: Ինքնիշխան երկրի համար ամոթ ու խայտառակություն է, երբ երկրի ղեկավարն օգնության է դիմում և պատրաստ է իր պետության սահմանների պաշտպանությունը հանձնել ցանկացած արտաքին ուժի: Չկարողանալով և չկատարելով ինքնիշխանությանը բնորոշ ամենակարևոր գործառույթը՝ Հայաստանի իշխանությունն, ըստ էության, լրջորեն հարցականի տակ է դրել Հայաստան պետության այսօրվա ինքնիշխանության հանգամանքը:

Մեր բազմաչարչար երկրի համար ամենածանր ժամանակներ են: Մենք կորցրել ենք այն ամենը, ինչը հնարավոր էր կորցնել, իսկ նոր կորուստների դեպքում այլևս հայոց պետականության ինքնիշխան գոյատևման կամ վերածնության հեռանկարի մասին ավելորդ կլինի մտածելը: Հայաստանը նոր կորուստների տեղ չունի, որ նշանակում է, թե հայ ժողովրդի առջև պայքարի ուղուց բացի՝ այլ ճանապարհ չկա: Խոսքն, իհարկե, այսօր զենք վերցնելու և թշնամիներին պատերազմ հայտարարելու մասին չէ: Գլխավորը ներքին թշնամու հարցն է. մեր տան խնդիրը մեր տան մեջ պետք է լուծել: Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, թե Հայաստանում ճգնաժամը հաղթահարվել է: Իր կործանարար ծրագրերն ավարտին հասցնելու համար նրան ներքին կրավորականություն է հարկավոր, սակայն մենք այդ բանն իրեն թույլ տալ չենք կարող: Մյուս կողմից՝ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն, հետևաբար՝ մինչ այժմ կատարած հանցագործությունների համար պատասխանատվությունը նրա վրայից կարող է հանել միայն դատարանը և ոչ թե՝ որևէ ընտրություն: Իսկ հաշտվել առկա վիճակի հետ նշանակում է կանաչ լույս վառել հայրենադավների առջև: Պայքարն այլընտրանք չունի և այն նոր որակով շարունակելու համար ստեղծված են լուրջ նախադրյալներ:

Հիշենք, որ պատերազմում կրած խայտառակ պարտությունից հետո ընդդիմադիր ուժերի բողոքի կոչերին արձագանքում էր ընդամենը մի քանի հազար մարդ: Յոթ ամիս անց ընդդիմությանը կամ, այլ խոսքով, երկրի կործանարար ընթացքը կասեցնելու և ապահովության ու զարգացման գործընթաց սկսելու կոչերին, արձագանքեց առնվազն 270 հազար քաղաքացի: Նոր խորհրդարանում շոշափելի ներկայություն են լինելու իրական ընդդիմությունը ներկայացնող երկու խմբակցությունները, ինչը նշանակում է, որ իշխանության և նրա կործանարար ծրագրերի դեմ պայքարը հնարավոր է դառնում ծավալել հենց իշխանական դաշտում և՝ ոչ միայն: Այդ պայքարն այսօր արդեն ունենալու է զանգվածների հուժկու աջակցությունը:

Հուլիսի սկզբին տեղի ունեցավ «Հայաստան» դաշինքին մաս կազմող Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի կառույցի Գերագույն ժողովը, որն ամրագրեց պայքարը շարունակելու կուսակցության վճռականությունը: Պայքարը շարունակելու վճռականության մասին է հայտարարել հենց «Հայաստան» դաշինքը: Հայրենիքի փրկության գաղափարը այլընտրանք չունի, պայքարը կշարունակվի մինչև հաղթական ավարտ: ■

Ի՞նչն էր պատճառը (Խորհրդարանական արտահերթ ընտրութեան լոյսին տակ)

Հրաչ Վարժապետեան
ՀՅԴ Արևմտեան Եւրոպայի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ

Հայաստանի խորհրդարանական արտահերթ ընտրութեան արդիւնքը, այլ խօսքով՝ Նիկոլ Փաշինեանի վերընտրութիւնը հայրենի մեր ժողովուրդին նկատառելի մասի մը, բայց յատկապէս դասական Սփիւռքի լայն զանգուածին մօտ յառաջացուցած է համատարած յուսախաբութեան (հասկնալի) և յուսահատութեան (անընդունելի) մթնոլորտ մը: «Առանց Նիկոլ Հայաստան»ի համար պայքարած հատուածին մօտ հետևեալ հարցումն է, որ կը հոլովուի շարունակաբար.- Ինչպէ՞ս վերընտրուեցաւ այն մարդը, որ գլխաւոր պատասխանատուն է մեր խայտառակ պարտութեան, որ ստորագրողն է Նոյեմբեր 9ի տխրահռչակ, դաւադիր, գաղտագողի անձնատուութեան, որ իր ուսերուն վրայ ունի հինգ հազար զոհի մեղքը, որ թշնամիին ինքնակամ յանձնած է ամբողջ Կիպրոսի տարածքէն աւելի հայրենի հող, և մասամբ նորին ...

Արդար է միտք չարչրկող հարցումներու այս շարանը, սակայն ցարդ անորոշ՝ անոնց պատասխանը: Առ այդ, փորձենք գտնել, պեղել զայն, որ անհրաժեշտ է, յոյժ կենսական է, դուրս գալու համար յուսախաբութեան իրավիճակէն և շարունակելու համար քաղաքական պայքարը, այս անգամ ընդդիմութեան դիրքերէն: Որովհետև մենք տակաւին պիտի հասկնանք, թէ ինչո՞ւ հողատուն, դաւաճանը, «կապիտուլիանտը» և ամբողջ ութ ամիս նմանօրինակ այլ ածականներով պիտակաւորուած ու հեղինակազրկուած խլեակը վերընտրուեցաւ: Արդեօք զայն ընտրողներուն համար նախկին ռեժիմի վերադարձի մերժո՞ւմ էր ամէն գնով, պատերազմի վերսկսման վա՞խ, բարօր կենսամակարդակ, լուսաւոր ապագայ ունենալու տրուած անհիմն, դատարկ, ամբոխավարական խոստումներու գայթակղութի՞ւն, ընտրակեղծիքնե՞ր, ընտրախախտումնե՞ր, ընտրակաշառքը, պետական լծակներու շահագործո՞ւմ, թէ՞ ... Կամ դեռ մենք մեզի հարց տանք, ինքնաքննադատական շինիչ կարգով, թէ արդեօք մե՛ր բացթողումները ո՛ւր էին, որ չյաջողեցանք մեծամասնութիւնը համոզել, համախմբել մե՛ր փլաթֆորմին շուրջ, որ շատ աւելի բովանդակալից ու ամբողջական էր անվիճելիօրէն: Շատ աւելի խորքային ու փայլուն էր նաև ընտրարշաւքարոզարշաւի մեր ամբողջ թղթածրարն ու ընթացքը, որուն անձամբ հետևած ու մասնակցած եմ գետնի վրայ, տարբեր շրջաններու, քաղաքներու և գիւղերու մէջ: Այսուհանդերձ, արդիւնքը յստակ է:

Վերոյիշեալ հարցադրումներուն պատասխանը միանշանակ չէ հարկաւ ու թերևս ամբողջին գումարման մէջ է: Սակայն, ըստ իս, այս բոլորէն անդին և վեր, մեր մատը պիտի դնենք բո՛ւն վէրքին վրայ և առանց բարդոյթի, առանց վիրաւորանքի, առանց մեղադրանքի պիտի բարձրաձայնենք այլևս այն չոր ու դառն իրականութիւնը, թէ մեր ժողովուրդին նկատառելի մասին մօտ, հայրենիքի և Սփիւռքի մէջ՝ առաւել կամ նուազ չափով, ազգային մտածողութեան, ազգային գաղափարախօսութեան, քաղաքական միտքի ու հայկական արևելումի պակասը ոչ միայն զգալի է մեր առօրեային մէջ, այլև հիմնական պատճառն է այն արդիւնքին, զոր ունինք այսօր, զոր ստացանք ընտրութիւններուն: Փաստօրէն ընտրազանգուածը գերակշռեց ընթացիկը, անհատականը, անձնականը՝ հաւաքականէն, ազգայինէն: Այլապէս ինչո՞վ կամ ինչպէ՞ս բացատրել ընտրութեան արդիւնքը: Եւ այստեղ կը ցցուի բնականաբար մեծագոյն հարցադրումը. ինչպէ՞ս, ինչո՞ւ, ե՞րբ, ո՞վ կամ ովքե՞ր մատնեցին ազգը այս կացութեան: Արժէքներու անկման ու կերպարանափոխման գծով առարկայական ու մասնագիտական վերլուծումը, իրերու յստակ ընդգծումը, հուսկ՝ ախտաճանաչումը անհրաժեշտ է, հաւաքական պատասխանատուութեամբ, ապա անոր բուժումը նոյնքան և աւելի կենսական է, որ ի հարկէ դարձեալ կը կարօտի բոլորիս կողմէ պատասխանատուութեան հաւասար ստանձման ու հաւաքական ճիգի, անշուշտ՝ մասնագիտական մօտեցումներով, կրթական, ընկերային, մշակութային, քարոզչական ուղղորդուած ու թիրախաւորուած դաստիարակչական ծրագիրներով, ի խնդիր ազգային գաղափարախօսութեան ու մտածողութեան, ազգային արժէքներու վերականգնման, ի խնդիր նոր սերունդի մը ազգային «տեսակ»ի ձևաւորման ու կազմաւորման, որուն այլընտրանք չկայ: ■

Պատմության դասերը և 2020 թ. աշնան աղետի պատճառներն ու պատասխանատուն (մաս 2-րդ)

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Իր իշխանավարման ընթացքում նոր ուժերն ամեն ինչ արեցին պետական կառույցների արժեքը գցելու, պետական կառավարման համակարգն անգործունակ ու անբան դարձնելու, հետևաբար պետականության գաղափարը նսեմացնելու, ժողովրդի հավատն առ պետականությունը և այն մարմնավորող պաշտոնեությունը զրոյացնելու համար: Այսպես՝ պետական բարձրագույն պաշտոններում (նախարարներ, փոխնախարարներ, քաղաքապետներ, պատգամավորներ) նշանակվեցին գերազանցապես մարդիկ, որոնք չունեին աշխատանքային լուրջ կենսագրություն, բավարար աշխատանքային փորձ, աննշան իսկ ներդրում երկրի զարգացման գործում, համապատասխան կարողություն ու կրթություն, պատկերացում իրենց տնօրինությանը հանձնվող ոլորտների մասին: Կրթության ոլորտի մասին պատկերացում չունեցողը կարող էր նշանակվել նախարար, դերասանը՝ քաղաքապետ, վարսահարդարը՝ վարչապետի օգնական և այլն: Կարևորն այն էր, որ նշանակվող պաշտոնյան լիներ կուսակցություն անվանվող խմբակի անդամ կամ ուղղակի իրենց մարդը և/կամ սերտած լիներ, ըստ էության, արևմտյան տարբեր ուժերի պահանջները կամ ստրկամտորեն ծառայեր նրանց: Անձնականն ու խմբակայինը վեր դասվեցին պետության ու ժողովրդի շահերից: Դա ծանրագույն հարված հասցրեց պետությանը, պետականության գաղափարին, պետական բարձրագույն և ստորին պաշտոնյաների հեղինակությանը:

Անտեսվեցին միջազգային և տարածաշրջանային ռազմաքաղաքական ու տնտեսական մարտահրավերները, որոնք մեծապես սպառնում էին Հայաստանի անվտանգությանը: Փոխանակ ավելի ճկուն գտնվելու, որակական նոր մակարդակի բարձրացնելու հարաբերությունները տարածաշրջանում թիվ մեկ դերակատար, մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի, ինչպես նաև մեր երկրի համար «կյանքի ճանապարհի» դեր կատարող, մեր միակ բարեկամ հարևան երկիր Իրանի հետ՝ Հայաստանի նորելուկ իշխանությունն իր վարած անհասկանալի, սեփական երկրի համար վնասարար, քաղաքականությամբ փաստացի Հայաստանին զրկեց դաշնակիցներից: Հայաստանը տարածաշրջանային սուբյեկտից վերածվեց օբյեկտի:

Զրոյացվեցին Արցախյան հարցի կարգավորման ուղղությամբ մեր ունեցած ձեռքբերումները, կարծես թե ամեն ինչ արվեց հայության համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ հարցում մեզ խոցելի դարձնելու համար: Կարծում ենք՝ այլ կերպ հնարավոր չէ մեկնաբանել Նիկոլ

Փաշինյանի խոսքերն այն մասին, որ ինքը Արցախի խնդրի շուրջ բանակցությունները սկսում է զրոյից՝ իր կետից, նախ պետք է պայմանավորվել կարգավիճակի շուրջ, և եթե դրա համար անհրաժեշտ լինի պատերազմել, կպատերազմենք ու կհաղթենք: Բնականաբար, դա բացասական ազդեցություն ունեցավ միջազգային կառույցների և տերությունների վրա: Որպես հետևանք՝ Հայաստանը հայտնվեց մեկուսացման մեջ: Գուցե այդ արտահայտությունների մեջ մեզ վնասելու դիտավորություն չտեսնեինք, եթե նրա կողմից ձեռնարկվեին քայլեր՝ Հայաստանը հզորացնելու համար, սակայն, այս առումով ևս ցուցաբերվեց անհոգություն ու անպատասխանատվություն:

Պետության ու պետականության գաղափարին, պետական պաշտոնյայի կողմից իր պարտականությունների կատարմանն ու պատասխանատվության ընկալմանը հասցվեց ծանրագույն հարված: Այդ առումով թերևս զգզրելի է հատկապես այն, որ սահմանադրական կարգի տապալման մեղադրանք ներկայացվեց 2008 թ. մարտի 1-ին Հայաստանի սահմանադրական կարգը պաշտպանած երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանին, որից հետո նա ձերբակալվեց: Վերջերս ՀՀ Սահմանադրական դատարանն այդ հարցով երկրորդ նախագահին ներկայացված մեղադրանքը որակեց հակասահմանադրական:

Կաշառակերության և անարդարության դեմ պայքարի, ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու լոզունգներով իշխանության եկած խմբակն էական քայլեր չարեց այդ ուղղությամբ: Փոխարենը արտաքուստ օրինական եղանակով բռնեց անձնական հարստացման ուղին: Առանց աշխատանքում դրական լուրջ արդյունքներ արձանագրելու՝ վերջինս բարձրացնում էր իր ներկայացուցիչների աշխատավարձերը և շարունակ սահմանում հսկայական պարգևավճարներ կամ հավելավճարներ: Բնականաբար, այդ կեցվածքը

գցում էր իշխանության վարկը ժողովրդի շրջանում, մեծացնում անտարբերությունը պետության նկատմամբ:

Իշխանության եկած խմբակը, ամբոխահաճո դատարկ քարոզչությանը զուգահեռ, քայլ առ քայլ քայքայում էր ազգային համերաշխությունը: Նախանձելի հետևողականությամբ ու ջանասիրությամբ հասարակությունը պառակտվում էր սև նախորդների և անորոշ ու անդեմ սպիտակ ներկաների: Վերջինների թվում ընդգրկվեցին իրենք և լռությամբ իրենց ծառայող միամիտներն ու շահամոլները, հիմնականում սորոսականները, որոշ չափով նախկին ՀՀՇ-ականները կամ նրանց հարազատները: Նախորդների հետ հաշվեհարդար տեսնելու, անհնազանդներին ասֆալտին պառկեցնելու մասին պետական գործչին անհարիր կոչերի ներքո կատաղի պայքար ծավալվեց Արցախյան երկրորդ պատերազմի հերոսների, մասնակիցների, ազգային արժեքների, հատկապես ազգային գաղափարաբանության դեմ: Պետական բարձրագույն ատյաններում պաշտոններ ստացած անձինք դրսևորում էին փողոցային կենցաղավարություն, մտածողություն, նույնիսկ Հայաստանի խորհրդարանում և կառավարության նիստերում օգտագործում էին փողոցային լեքսիկոն ու անհավասարակշիռ կեցվածք, անում անպատասխանատու և սուտ հայտարարություններ, նույնիսկ վիրավորում իրենց կուսակցական գծից երբեմն շեղվող անձանց, այդ թվում և՝ կանանց: Հայհոյանքը, այլակարծության կոպիտ մերժումը դարձան ընդունված երևույթներ: Խոր ատելություն սերմանվեց կառավարող խմբի հայացքներից տարբեր կարծիք արտահայտողների նկատմամբ:

Հայաստանում պետական հովանավորության տակ վերցվեց և լայնածավալ ու բացահայտ բնույթ ստացավ հայության ոչնչացմանը ձգտող Թուրքիայի և Ադրբեջանի հետ խաղաղ համակեցության թուրքասիրական մահաբեր քարոզչությունը: Ամեն ինչ արվեց՝ մոռացության մատնելու թուրքերի ու ադրբեջանցիների կողմից իրականացված հայության պարբերական կոտորածներն ու թալանը: Ամեն կերպ անտեսվեցին ու անարձագանք մնացին հայկական տարածքների, այդ թվում և՝ Երևանի վերաբերյալ թուրք-ադրբեջանական հավակնոտ հայտարարությունները: Իշխանությունը որդեգրել էր իրեն ենթակա լրատվամիջոցների միջոցով ժողովրդի զգոնությունը թմրեցնելու դավադիր գործելակերպ: Պատկերը նույնն է նույնիսկ այսօր, երբ Ադրբեջանը զավթել է Արցախի մեծ մասը, Սյունիքի մի մասը, դաժանաբար սպանել է գերության մեջ գտնվող հայ զինվորականներին, նույնիսկ քաղաքացիական անձանց, այդ թվում՝ ծերերին ու հաշմանդամներին, և ամեն րոպե նոր հավակնություններ է դրսևորում Հայաստանի տարածքների և ազգային ժառանգության նկատմամբ: Հայաստանի պետական իշխանությունը յուրացրած ուժերը խոսում են Ադրբեջանի տարածքով՝ մերձկասպյան

շրջաններով, Ռուսաստանի հետ կապվելու ինչ-որ ցնորական ծրագրի մասին, իսկ իրականում մտորում են Սյունիքի տարածքով Ադրբեջանին հաղորդակցության ուղիներ տրամադրելու գնով Թուրքիայի հետ տնտեսական կապերի հաստատման մասին, ինչը միանշանակորեն աղետաբեր կլինի Հայաստանի համար:

Առանց այն էլ ոչ այդքան բարվոք վիճակում գտնվող տնտեսությունը քայքայվեց, ազգային-պետական սուղ միջոցներն օգտագործվեցին անարդյունավետորեն և մսխվեցին: Ասվածի խոսուն ապացույցներն են եկամտահարկի հավասարեցումը, պետական բյուջեից կենսաթոշակային կուտակային համակարգին հսկայական միջոցների մշտական հատկացումները, հայկականի ու Հայաստանի հետ որևէ կապ չունեցող, տարաբնույթ անմիտ կամ վնասակար միջոցառումների ֆինանսավորումը, աշխարհում երևի թե նախադեպը չունեցող պարգևավճարների կամ հավելավճարների հաճախականությունն ու չափերը, պետական պատասխանատու պաշտոններում հայտնված մարդկանց աշխատավարձերի աննախադեպ, երբեմն գաղտնի բարձրացումը և այլն: Որպես հետևանք՝ երկրի բյուջեն կրճատվեց միլիարդավոր դրամներով, իսկ մի զգալի մասն էլ փոշիացվում է: Բավական է նշել, որ 2018-2020 թթ. ընթացքում տրված պարգևավճարների ընդհանուր չափը հասնում է մոտ 200 մլն ԱՄՆ դոլարի:

Գիտության ու կրթության ճակատագիրը հայտնվեց գիտությունից անհասանելի հեռավորության վրա գտնվողների ձեռքում: Մանրադիտակն աստղադիտակից չտարբերող մարդը զբաղվում էր «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի մշակմամբ, որն ուղղված է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմաքանդմանը[1], ինչը չէր հաջողվել անել երկրի առաջին նախագահի օրոք:

Ամենից զազրելին ու դատապարտելին այն է, որ ցուցաբերվեց անտարբերություն Հայաստանի անվտանգության գլխավոր երաշխավոր հայկական բանակի նկատմամբ: Մի կողմ թողնվեցին ռազմավարական նշանակության խնդիրները՝

բանակի կազմակերպական համակարգի կատարելագործումը, զինումը կամ համալրումը արդիական նոր զինատեսակներով, ռազմական արդյունաբերության իրական զարգացումը: Պետական ամենաբարձր մակարդակով մերժվեցին ԱԹՍ-ներն ու հետախուզական արբանյակները, որոնք անհամեմատ կմեծացնեին հայոց բանակի ուժը՝ մարտավարական ու ռազմավարական կարողությունը: Վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը 2019 թ. գտնում էր, որ Հայաստանին պետք չեն արբանյակներ՝ լավ իմանալով, որ Ադրբեջանն ունի հետախուզական արբանյակներ[2]: Այնինչ հետախուզական արբանյակի միջոցով հնարավոր կլիներ թշնամու ԱԹՍ-ների շարժը ուղիղ ռեժիմով տեղորոշել և տեղեկացնել հայկական ՀՕՊ-ին, որն էլ ավելի արդյունավետորեն և քիչ վնասներով կոչնչացներ դրանք՝ փրկելով հազարավոր զինվորների կյանք և տասնյակ միավոր զինտեխնիկա:

Ընդամենը երեք տարում փոխվեցին ՀՀ զինված ուժերի Գլխավոր շտաբի երեք պետեր:

Նիկոլ Փաշինյանն իր արբանյակների հետ ցուցաբերեց անտարբերություն Հայաստանին սպառնացող պատերազմի հարցում. անտեսեց ՀՀ զինված ուժերի Գլխավոր շտաբի նախազգուշացումները Հայաստանի դեմ պատերազմի սանձազերծման հավանականության, հնարավոր պատերազմին Թուրքիայի մասնակցության, պատերազմի ընթացքի ու Հայաստանի համար դրա անհաջող վախճանի, ինչպես նաև Հայաստանի հարևանների ու միջազգային դերակատարների դիրքորոշումների մասին[3]: Կարծես միտումնավոր ամեն ինչ արվում էր, որպեսզի հնարավոր պատերազմում Հայաստանը ջախջախվի:

Ցնցումների ենթարկվեց նաև ազգային անվտանգության համակարգը: Օրը մեջ փոխվում էին անվտանգության ծառայության ղեկավարները, ըստ շրջանառվող լուրերի՝ հեռացվում փորձառու, արհեստավարժ սպաները: Անհասկանալի հանգամանքներում ինքնասպան եղան ՀՀ ազգային անվտանգության նախկին տնօրենն ու Ոստիկանության պետը:

Նոր իշխանավորների հովանավորությամբ Հայաստանում աննկարագրելիորեն ուժեղացան ապազգային ուժերը: Բանը հասավ նրան, որ Արցախի Հանրապետությունում նախագահական ընտրությունների գործընթացը հսկելու նպատակով Արցախ գործուղվեց սորոսական հասարակական կազմակերպություն՝ դրա համար ստանալով մի քանի տասնյակ մլն դրամ:

Քամահրական վերաբերմունք դրսևորվեց ազգային անցյալի, ազգային արժեքների, հայրենասիրության ու հերոսականության, անցյալի և ներկայի փառավոր հաղթանակները կերտած գործիչների նկատմամբ: Ժողովուրդը զբաղեցվեց հորինված և օտար օրակարգերով ու խնդիրներով,

հասարակության մեծամասնությունը մահացու վտանգի առաջ թմրեցվեց, պառակտվեց բազմաթիվ մանր ու թույլ հոսանքների կամ խմբերի:

Վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը, ամենայն հավանականությամբ, դիտավորությամբ անտեսեց պատմության անփոխարինելի, փրկարար դասերը: Դեռևս 2005 թ. դեկտեմբերի 9-ին Նիկոլ Փաշինյանն իր հրատարակած «Հայկական ժամանակ» թերթում տպագրված «Մոռանալ «հերոսական անցյալը»» հոդվածում հայոց պատմությունը ոչ ավել, ոչ պակաս համարում էր «խայտառակ ու նվաստացուցիչ»՝ իհարկե, իրեն և իրեն սնող հայտնի ու ստվերային ուժերին բնորոշ ձևով ծուռ հայելու մեջ ներկայացնելով այն: Նա աղավաղում էր հայոց անցյալը, դատապարտում ու նզովում նախնիներին՝ գրելով, թե. «նրանք ոչինչ չեն արել, որ մենք այսօր ապրենք ավելի արժանապատիվ ու ավելի հպարտ», «Մեր նախնիները իրենց սերունդների համար հոգ չեն տարել գոնե այնքան, ինչքան կենդանիներն են հոգ տանում իրենց բնազդով»[4]: Նիկոլ Փաշինյանը և իր արբանյակները, որոնք որևէ ներդրում չունեին մեր հանրապետության շենացման գործում, մտածում էին ոչ թե մեր երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու ռազմական զարգացման, ոչ թե եղածի վրա մի բան ավելացնելու, այլ հակառակը՝ ամեն ինչ զրոյից սկսելու անվան տակ զրոյացնելու, ոչնչացնելու, կործանելու մասին:

Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմը վերածվեց Հայրենական պատերազմի. գրեթե ողջ հայությունը՝ Հայաստանում և ի սփյուռս աշխարհի, տարվեց Արցախում պատերազմող բանակին կամավորագրվելու, հայրենիքին օգնելու գործով: Թեև թշնամու հարձակումը լավ նախապատրաստված էր, հայկական բանակն իրեն միացած կամավորականների հետ առաջին իսկ օրվանից ցուցաբերեց համառ և հաջող դիմադրություն: Այնուամենայնիվ, հայկական բանակի վիճակը ծանր

էր: Սեպտեմբերի 30-ին Հայաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Օ. Գասպարյանն անհրաժեշտ էր համարել 2-3 օրվա ընթացքում հասնել պատերազմի դադարեցմանը, «Հակառակ դեպքում այս ինտենսիվությամբ վարվող մարտական գործողությունների պարագայում մեր ռեսուրսները սեղմ ժամկետում կսպառվեն.... և յուրաքանչյուր հաջորդ օրերի ընթացքում» հայկական կողմը կունենա «բանակցային գործընթացի ավելի ոչ բարենպաստ պայմաններ»: Հոկտեմբերի 5-6-ին Օ. Գասպարյանը Նիկոլ Փաշինյանի և Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանի հետ հեռախոսազրույցի ժամանակ հայտնել էր. «....մենք չունենք ռեսուրսներ, որ երեք ուղղություններով կանգնեցնենք» հակառակորդին[5]:

Թվում էր, թե Հայաստանի իշխանությունները կցուցաբերեն պատասխանատվություն, կմոբիլիզացնեն հանրապետության և համայն հայության մարդկային ու նյութական ռեսուրսները և ամեն ինչ կանեն թշնամուն ջախջախիչ հակահարված հասցնելու համար: Ցավոք, այդպես չեղավ, և շուտով բացահայտվելու էր անհավատալին:

Հայաստանի, և Արցախի, իշխանության պատասխանատուները կարծես թե դիտավորյալ քայլեր կատարեցին պատերազմում ոչ թե հաղթելու, այլ Հայաստանը ջախջախիչ պարտության հասցնելու համար: Կարծես թե ամեն ինչ արեցին, որ հայոց բանակը քանդվի, Հայաստանի դիմադրողականությունը թուլանա, որ պետական և ազգային ռեսուրսները, համայն հայության՝ ահռելի ծավալի օգնությունը մսխվեն, ոչնչանան կամ չհատկացվեն գործող բանակին:

Պատերազմի ընթացքում այդպես էլ քայլ չձեռնարկվեց երկրի տեղեկատվական անվտանգությունն ապահովելու համար: Կռվող բանակի համալրման գործը մատնվեց քաոսի: Կամավորագրված և պահեստազորից զորակոչված հազարավոր հայորդիների այդպես էլ նորմալ չնախապատրաստեցին կամ առհասարակ չնախապատրաստեցին պատերազմին: Շատ հաճախ ռազմաճակատի համալրումն իրականացվում էր անկազմակերպ և չկանոնակարգված ձևով, ռազմաճակատ մեկնողներին առանց բավարար չափով սպառազինելու: «Ամեն ինչ անկազմակերպ էր, կամավորականների մեծ մասը կռիվ չէր տեսել, հասկանում եք՝ վախեցած էին բոլորը»,- նշում է պատերազմի մասնակից գնդապետ Կորյուն Ղումաշյանը[6]: Այդօրինակ վկայությունները չափազանց շատ են: Ըստ հայ և օտարազգի փորձագետների, մասնակիցների ու ականատեսների՝ հաճախ կամավորագրվածներից ու պահեստազորից կազմված զորամասերը չէին ուղարկվում ռազմաճակատ կամ ուղարկվում էին սխալ ուղղությամբ և ընկնում էին թշնամու օդուժի և հրետանու ուղիղ նշանառության տակ, հաճախ զորամասերն ուղարկվում էին այնպիսի տարածքներ, որոնք արդեն թշնամու վերահսկողության տակ էին: Ի միջի այլոց, պետական իշխանությունները պարտավոր էին համալրման կազմակերպման մասին հոգ տանել պատերազմից շատ ավելի վաղ՝ հնարավոր պատերազմին պատրաստ լինելու համար: Սակայն չէին արել: Խորհրդարանը նույնիսկ պատերազմի հավանականության աճի շրջանում՝ 2020 թ. օգոստոսին, չէր ընդունել աշխարհազորի մասին օրենքը, ինչը կկանոնակարգեր մոբիլիզացիայի խնդիրը և զգալիորեն կբարելավեր պատերազմին երկրի պատրաստվածության մակարդակը [7]:

Այն պարագայում, երբ ամբողջ աշխարհը, նույնիսկ պետություն չունեցող խմբավորումները գնում են զորքերի կազմակերպական մակարդակի բարձրացման, մեզանում որդեգրվեց կանոնավոր բանակը ջոկատային, դաշտային մակարդակի իջեցնելու գործընթաց, ինչը նշանակում էր մասնատել ու թուլացնել բանակը, գցել նրա մարտունակությունը, հարվածային ուժը, մսխել հայոց ռազմուժի մարդկային պոտենցիալը: Ի՞նչ է նշանակում պետության և կանոնավոր բանակի առկայության դեպքում երկրի բնակչությանը կոչ անել կազմելու ջոկատներ և մեկնելու ռազմաճակատ, եթե ոչ ռազմական պոտենցիալի ջլատում և բանակի ու ռազմաճակատի կազմաքանդում: Բա էլ ինչի՞ համար է պետությունը, ինչի՞ համար են պետության բարձրագույն գործադիր և օրենսդիր մարմինները՝ Պաշտպանության նախարարությունով հանդերձ:

Վարչապետի կողմից, որը նույնիսկ զինվորական պարտադիր ծառայություն չէր անցել, բայց դարձել էր գերագույն գլխավոր հրամանատար, հոկտեմբերի սկզբներին կատարվեց հայոց պատմության մեջ աննախադեպ մասշտաբի ստոր քայլ: Այն ժամանակ, երբ ակնհայտ էր, որ Ղրականը (Ղաբրայիլ) ընկնելու է թշնամու ձեռքը, ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը որոշեց առանց համապատասխան նախապատրաստական գործողությունների՝ հրետակոծության, հետախուզության, շփոթեցնող հարվածների և այլն, գրավել Լելեթեփեի բարձունքը, ինչը այլ բան չէր կարող նշանակել, քան հայկական բանակը իր հազարավոր զինվորականներով ու զինտեխնիկայով ուղարկել կործանման[8]: Այդ չմտածված կամ հայկական բանակին անդառնալի հարված հասցնելու նպատակով արձակված հրամանի հետևանքով գլխովին ջախջախվեցին Իվանյանի (Խոջալու) և Ֆիզուլիի տանկային զորամասերը, Մեխակավանի և Արալեռի զորամասերի մնացորդները, ԿՊՇ (ЦОР) հետևակի և զինտեխնիկայի զգալի մասը: Մինչդեռ այդ ուժերի վերադասավորումը կարող էր հնարավորություն տալ թշնամուն ծանր հակահարված հասցնելու մի փոքր ուշ ռազմական շատ ավելի բարենպաստ բնագծերում: Բանը հասավ այնտեղ, որ երկրի ղեկավարի պաշտոնը զբաղեցնողը բանակի նախապատրաստվող հակահարձակման մասին հայտարարեց հեռուստատեսությամբ՝ կարծես

թշնամուն հատուկ զգուշացնելու համար:

Եթե 1918 թ. մայիսին հայկական զինուժի խիստ սահմանափակության պայմաններում երկրի ղեկավարներն ամեն ինչ անում էին կռվող բանակի թիկունքն ու թևերը թուրքերի անակնկալ հարձակումներից պաշտպանելու համար, ապա 2020 թ. աշնանը բավարար քանակությամբ զինուժի առկայության պայմաններում կարծես թե միտումնավոր կռվող բանակի թիկունքն ու թևերը թուլացնում կամ մերկացնում էին, կռվող և իրենց դիրքերը վստահորեն վերահսկող զորամասերը հեռացվում էին իրենց անխոցելի դիրքերից ու բնակավայրերից: Այլապես ինչպե՞ս բացատրել Ջրականի վերոնշյալ գործողությունը, թշնամու զորքերի հեշտ անցումը դեպի Շուշի Հադրութից Շուշի ձգվող անանցանելի մոտ 70 կիլոմետրանոց «Դժոխքի կիրճով» կամ Բերձորի (Լաչին), վերջապես՝ Շուշիի հանձնումը թշնամուն: 2020 թ. աշնան պատերազմի մասնակից Կորյուն Ղումաշյանը, որը հոկտեմբերի 22-ին Լաչինի միջանցքով դուրս էր եկել Արցախից, հոկտեմբերի 24-ին՝ վերադարձի ժամանակ, տեսել է Լաչինը փակ: Այդ կապակցությամբ նա նկատում է. «Թուրքը ծափ տալով հասել էր Լաչին՝ առանց դիմադրության, ո՞նց հասկանամ»:

Պատերազմի ընթացքում կործանարար հարված չհասցվեց թշնամու ռազմական ու տնտեսական ենթակառուցվածքներին, ինչը թույլ կտար պարտության մատնել թշնամուն, առնվազն խնայել հազարավոր հայորդիների կյանք: Դա այն դեպքում, երբ թշնամին հետևողականորեն ոչնչացնում էր մեր թե՛ ենթակառուցվածքները, թե՛ զինուժը, ըստ որում՝ հաճախ հրապարակայնորեն իրագործվող ծայրահեղ դաժանություններով: Ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ թշնամու դեմ չկիրառվեցին «Իսկանդեր»-ներն ու մյուս կործանիչ զինատեսակները, չպայթեցվեցին Մինգեչաուրի ջրամբարտակը, ջէկ-ը, Բաքու-Ջեյհան նավթամուղը, Բաքու-Էրզրում գազամուղը, Գանձակի օդանավակայանը, թշնամու ԱԹՍ-ների տեղակայման հրապարակները և այլն: Ինչպե՞ս բացատրել հակաօդային պաշտպանության համակարգի, դրանում ընդգրկված զինատեսակների չհամակարգված, ոչ արդյունավետ տեղաբաշխումն ու օգտագործումը, ինչի հետևանքով թշնամին ոչնչացրեց կամ զավթեց մեր հակաօդային կայանքների մի զգալի մասը:

Պատերազմի ընթացքում մսխվեցին ազգային-պետական միջոցները: «Հայաստան» համահայկական հիմնադրամին փոխանցված հարյուր միլիոն դոլարներից ավելի գումար մտցվեց բյուջե, և վերածվեց պարգևավճարի: Հայաստանի քաղաքական իշխանությունը ստանձնած խմբակը նույնիսկ պատերազմի ընթացքում չմեղմեց իր ընչաքաղցությունը: Երբ ժողովուրդն իր վերջին կոպեկն էր հատկացնում հաղթանակի համար, երբ երեխաները մթերք էին վաճառում և ստացած գումարը հատկացնում բանակին, երբ նույնիսկ Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու ապրող մեր հայրենակիցները կամավորագրվում էին հայոց բանակին, որպեսզի թշնամուն կանգնեցնեն ու փրկեն հայրենիքը, «պետական այրերը» Արցախ մեկնելու համար գործուղման գումարներ էին ստանում:

Վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը պատերազմի առաջին իսկ օրերից համառորեն անտեսեց Հայաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի և քաղաքական ուժերի ներկայացուցիչների արտահայտած մտահոգություններն ու պատերազմը դադարեցնելու մասին առաջարկությունները՝ լավ իմանալով, որ Հայաստանի դեմ կռվում են ադրբեջանա-թուրքական կանոնավոր զորքերն ու միջազգային ահաբեկչական ջոկատները, և որ պատերազմի օր առաջ դադարեցումը հրամայական անհրաժեշտություն է: Իսկ գուցե նա ցանկացել և փորձել է զինադադարի հասնել, բայց այդպիսի հնարավորություն չի եղել: Պատերազմի սկսվելուց մի քանի օր անց «վարչապետը» հրապարակավ հայտնեց, որ մերժում է Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի օգնությանը դիմելու առաջարկությունները և դրա կարիքը չի տեսնում: Ավելին՝ 2020 թ. հոկտեմբերի 19-20-ին, երբ Հայաստանի ռազմական դրությունն ավելի էր ծանրացել, «վարչապետը» մերժեց զինադադար հաստատելու մասին Ռուսաստանի նախագահի միջնորդությունը[9]: Ինչո՞ւ մերժեց, մի՞թե ոչ նրա համար, որ Հայաստանը մատնի աղետի: Չէ՞ որ զինադադար հաստատելու դեպքում մեր ձեռքում էին մնում առնվազն Շուշի քաղաքը, Շուշիի, Հադրութի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի շրջանների մեծ մասը:

Եթե փոքր-ինչ զուգահեռներ անցկացնենք ոչ այնքան հեռավոր 1918 թ. անցքերի հետ, կտեսնենք, որ Մայիսյան հաղթական հերոսամարտերից հետո նոր ստեղծվող երկրի պատասխանատուները, չնայած որ մի շարք ճակատամարտերում հաղթել

էին, ավելորդ ոգևորություն չցուցաբերեցին, այլ, սթափ գնահատելով իրավիճակը, դադարեցրին ռազմական գործողությունները և գնացին ծանր, իրենց երեսնամյա ձգտումներից շատ հեռու Բաթումի հաշտության պայմանագրի կնքմանը, որպեսզի գոնե ապահովեն ձեռք բերվածի ամրագրումը: Իսկ ահա 2020 թ. աշնանը երկրի ղեկավարի պաշտոնը զբաղեցնողը զինադադարի ստորագրման չգնաց այնքան ժամանակ, մինչև չկործանեց գրեթե ամեն ինչ, մինչև հայոց բանակի ձեռքում գտնվող Շուշին չհանձնեց թշնամուն, մինչև չունեցանք 5.000-ից ավելի զոհ, 10.000-ից ավելի վիրավոր, անդամալույծ, անհետ կորած և գերի, մինչև չկոտրեց Հայաստանի դիմադրողականությունը: Փոխարենը նա ժողովրդից գաղտնի, լայն շրջանառության մեջ դրված մոտալուտ հաղթանակի մասին պաշտոնական տեղեկատվության տարափի պայմաններում նոյեմբերի 9-ին ստորագրեց կապիտուլյացիոն ակտ՝ անելով այնպիսի զիջումներ, որոնց մասին թշնամին 1994 թվից ի վեր չէր էլ երազել, և որոնք Հայաստանին հասցնում են ծանրագույն հարված՝ ջուրը գցելով նախորդ գրեթե 30 տարիների պայքարի արդյունքը: Կարծում ենք՝ «վարչապետի» հայակործան դիտավորության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն ակտը ստորագրելուց հետո նա այդպես էլ նույնիսկ հրաժարական չտվեց, ավելին՝ շարունակեց նորանոր զիջումներ անել հայ ժողովրդի թշնամուն և ճնշումներ գործադրել հայրենիքի փրկության համար պայքարող ուժերի նկատմամբ:

Համոզված կարող ենք ասել՝ սթափվելու, թմբիրից դուրս գալու, համախմբվելու և ազգային արժեքներով շարժվելու, հայրենապաշտ ու բանիմաց պետական իշխանություն ընտրելու, պատմության դասերը հաշվի առնելու դեպքում հայ ժողովուրդը կկարողանար շատ արագ բուժել իր արնածոր վերքերը, վերականգնել ուժերը և բռնել գիտակրթական, ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական հզորացման ուղին: Պետք է ստեղծել գերհզոր՝ պատերազմի դաշտում մարդկային գործոնի ներկայությունը գրեթե բացառող զինված ուժեր չձգտել պատերազմի, բայց իմանալ, որ եթե թշնամին նման փորձ անի կստանա կործանիչ հարված: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի հասնել Արցախյան հիմնախնդրի հայանպաստ լուծմանն ու մեր խաղաղասեր ժողովրդի համար ցանկալի խաղաղության հաստատմանը: Մենք պարզապես այլընտրանք չունենք: Կարծես ամեն ինչ հստակ էր, սակայն երկրի թիվ մեկ պաշտոնյան, քարանձավային էակի պես մուրճ թափահարելով և շարունակելով ատելության քարոզն ու սպառնալիքները դարձյալ կարողացավ վերարտադրել իր կործանարար իշխանությունը: Որ չափով այդ հարցում դեր խաղաց ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությամբ զոմբիացված ժողովրդի մտքի շփոթը ու որ չափով ընտրության ելքը կանխորոշեցին ընտրակեղծիքները: Փաստն

այն է, որ ընտրության արդյունքները վիճարկման ներկայացվեցին Սահմանադրական դատարան, ու անկախ նրանից, թե ի վերջո ինչ կվճռի երկրի բարձրագույն դատարանը, հոդս է ցնդում արդար ու ազնիվ ընտրություններ անցկացնելու մասին «թավշյա հեղափոխության» առաջնորդի նկատմամբ զանգվածների կողմից գրեթե սրբացման միֆը: Հայաստանի առջև ծառացած բախտորոշ խնդիրենրը չհաղթահարվեցին, հետևաբար և կշարունակվի երկիրն ու պետությունը փրկելուն ուղղված պայքարը: ■

Հղումներ

1. Տես http://www.Yerkir.Am/news/view/235821.HtmlFbclid=iwar3zid-4nid98qgtd7bvju6et9h1hzf3fygkjajgawjqqrdfkhpqgfxvbye:
2. Տես http://www.yerkir.am/news/view/235619.html?fbclid=IwAR2K-v76D_DmivzLzSiceDmdc-naVaj8iHc3moTnKRfnSsaQb5Q_qsGLK2t0:
3. Տես http://www.yerkir.am/ news/view/ 235824.html?fbclid= IwA R2WabN-IYU2kYDd-VAjbg9E4L8O_QiSFLV_0kUl1Arb5wI51t3QPi-YJ-VA:
4. «Հայկական ժամանակ», Երևան, 2005, դեկտեմբերի 9:
5. https://yerevan.today/all/society/80919/samvel-babayany-pa-tahabar-asac-chshmartoutyouny?fbclid=IwAR0GO913gpi3ACVZ5h_l0E75-tL2e2Jki98gB1QDayfkF2s_aa05BS41N8A.
6. http://yerkir.am/news/view/234226.html?fbclid=IwAR1ifp8NrY1s-55F7AFYaXTnaNTe-3DcNRwI-xB1cREY5ArcFO2h6XwaHw1M:
7. Տես http://www.yerkir.am/news/view/235824.html?fbclid=IwAR-2WabN-IYU2kYDd-Vajbg 9E4L8O _QiSFLV_0kUl1Arb5wI51t3QPi-YJ-VA:
8. Տես http://yerkir.am/news/view/235075.html?fbclid=IwAR1DC5zqM-2MUzwCOxQydj-JfMlK17_NoVf2rAFnMPR61NJKlYg3rabXr2BM:
9. Տես https://www.rbc.ru/rbcfreenews/5fb4474f9a7947bf2574be33:

Դավաճանությունների դերը հայկական պետականությունների կործանման մեջ

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Հայոց բազմահազարամյա պատմության մեջ պետականությունների պատմությունը մոտ 5000 տարեկան է, սկսած Արատտայից (Ք.Ա. 28-26-րդ դարեր) հայկական պետական կազմավորումները հաջորդել են միմյանց՝ ժամանակի ընթացքում վերածվելով մեկ կենտրոնացված հայկական պետության և ընդգրկելով ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Սակայն հայոց պատմության մեջ քիչ չեն եղել նաև պետականազուրկ ժամանակներ, որոնք հաճախ տևել են դարեր և իրենց ողբերգական կնիքն են դրել Հայաստանի ու հայության ճակատագրի վրա:

Տարբեր ժամանակներում՝ հայկական պետականությունների անկմանը նպաստել են ոչ այնքան արտաքին թշնամիները կամ ռազմական պարտությունները, որքան ներքին պառակտություններն ու դրանց հետևանքով տեղի ունեցած դավաճանությունները: Հենց դավաճանության հետևանքով էր, որ 428 թ. ընկավ հայոց Արշակունյաց թագավորությունը:

Այժմ, մի փոքր մինչև 428 թվականն ընկած իրադարձությունների մասին:

Պապ թագավորի դավադիր սպանությունից հետո, հայոց Արշակունյաց թագավորությունը զգալիորեն թուլացավ: Դրան հաջորդած խժդժությունները, ներքին անհաշտությունները, հայ նախարարների կենտրոնախույս ձգտումներն ի վերջո հանգեցրին Հայաստանի բաժանմանը Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև (387 թ.): Հռոմին անցավ Հայաստանի արևելյան, իսկ Պարսկաստանին արևմտյան հատվածը, կարճ ժամանակ անց՝ Արշակ Գ-ի մահից հետո Հռոմը վերացրեց հայկական թագավորությունը, նույնը 389 թ. փորձեց անել Պարսկաստանը՝ գահազրկելով և բանտարկելով Խոսրով Դ-ին: Սա առաջ բերեց հայ նախարարների հուժկու դիմադրությունը, որի արդյունքում էլ պարսից արքան տեղի տվեց և գահ բարձրացրեց Խոսրով Դ-ի եղբորը՝ Վռամշապուհին (389-414 թթ.):

Սմբատ Բագրատունին թագադրում է Արշակունի վերջին արքա Արտաշես Արտաշիրին

Թեմայի վրա շատ չծանրանալու համար, ասենք միայն, որ Վռամշապուհ արքայի մահից հետո, պարսից արքան հայոց գահին նշանակել էր իր դրածոյին՝ Շապուհ անունով: Հայ նախարարները, սակայն, դիմադրեցին և նրանց պահանջով 322 թ. Հայաստանի արևելյան մասում Վռամ 5-րդ Գողը գահին բարձրացրեց Արտաշես (Արտաշիր) Արշակունուն, կարճ ժամանակ անց, սակայն, նորից սկսվում են ներքաղաքական զգվոտոցները, նախարարները իբր դժգոհ էին արքայի վարած շվայտ կյանքից՝ իրականում արքան փորձել էր սահմանափակել նախարարների իրավունքները, բարձրացավ դժգոհությունների ալիքը, ի վերջո նախարարները որոշեցին գահընկեց անել Արտաշիր արքային՝ փորձելով իրենց կողմը գրավել նաև Սահակ Պարթև կաթողիկոսին: Վերջինս ընդդիմացավ՝ ասելով. «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին…, ինչպե՞ս կարելի է այդ իմ ախտավոր ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է[1]»: Սակայն հայ նախարարները չլսեցին հայոց կաթողիկոսի խորհուրդը, գտնելով, որ ավելի լավ կլինի եթե ժամանակ առ ժամանակ մի պարսիկ գա ու իրենց ղեկավարի: Իհարկե պարսից արքան օգտվեց այս առիթից և պարսկասեր նախարարներին հրահրեց կեղծ ապստամբության ու նրանց պահանջով 428 թ. գահընկեց արեց Արտաշիր Արշակունուն: Հայաստանը վերածվեց պարսկական մարզպանության:

Հայոց Արշակունյաց թագավորությունն ընկավ, սակայն պետական ինստիտուտները հիմնականում պահպանվեցին, մասնավորապես՝ ուժեղ ավագանու և կայուն զինական ուժի շնորհիվ հնարավոր եղավ 457 տարի անց՝ Բագրատունիների անգիջում պայքարի շնորհիվ 885թ. վերականգնել հայոց թագավորությունը:

Հայոց պատմության մեջ առավել ողբերգական և, կարելի է ասել նաև, կործանարար էին

դավաճանությունները Բագրատունյաց թագավորության անկման շրջանում:

Հովհաննես-Սմբատ թագավորի կյանքի վերջին տարիներին նրա արքունիքում առաջնակարգ դերակատարություն ուներ Սարգիս Սյունեցին՝ առավել հայտնի Վեստ Սարգիս անունով: Վերջինս ձգտում էր ստանալ Անիի թագը, բայց Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ. «ոչ ընդունեցին զնա ազգն Բագրատունեաց…[2]»:

Վեստ Սարգիսը Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հետ հասավ նրան, որ բյուզանդական արշավանքից վախեցող Հովհաննես-Սմբատ արքան Անին կտակեց Բյուզանդիային (արքայի թուլակամությունը ևս կարելի է դավաճանություն համարել):

Ի վերջո, երբ Վեստ Սարգիսն ու Պետրոս Գետադարձը հայոց երիտասարդ արքա Գագիկ Բ Բագրատունուն համոզեցին և ուղարկեցին Բյուզանդիա, իբր կայսեր հետ բանակցելու (իրականում արքան ձերբակալվեց), իսկ Բյուզանդիան ձգտում էր ամեն կերպ նվաճել մայրաքաղաք Անին, Սահակ Պարթևի դեռ 428 թ. տված դասը չսերտած և նրա հակապատկեր՝ իր արծաթասիրությամբ հայտնի Պետրոս Գետադարձ կաթողիկոսն ակտիվացավ և որոշեց իր մոտ պահվող քաղաքի բանալիները հանձնել Բյուզանդիային: Այդ նպատակով նա դիմում է բյուզանդական կուսակալին. «Իբրև ետես հայրապետն Պետրոս զայսպիսի խորհուրդ, թէ ու՛մ և ի՞նչ ի գնալ է քաղաքս, առաքէ առ այն (բյուզանդական կուսակալին- Ա.Մ.), որ ունէր զիշխանութիւն արևելից կողմանն, որ նստեր ի

Ամենայն հայոց կաթողիկոս Սահակ Պարթև

քաղաքն Սամուսատ…և գրէ, թէ Ծանո՛ թագաւորին, թէ մեզ զինչ հատուցանէ փոխարենս, և ես տայ զքաղաքս և զայլ ամուրս որ յաշխարհիս են: Իսկ նա, իբրև լուաւ, փութապէս ծանոյց թագաւորին. և լուեալ թագաւորին, գանձինք և իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, և այսու տիրեցին Անւոյ և ամենայն աշխարհին[3]»:

Հայոց կաթողիկոսը՝ գանձի և իշխանության, իսկ Վեստ Սարգիսը թագավոր դառնալու ակնկալիքով, ժողովրդի մի հատվածի համաձայնությամբ՝ մայրաքաղաք Անին հանձնում են Բյուզանդիային:

Այսպիսով, 1045 թ. փաստորեն Անին հանձնվեց Բյուզանդիային, և հայոց թագավորությունն ընկավ, իսկ դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները սկիզբը դրեցին հայոց պատմության երկարատև ողբերգական մի շրջանի, երբ թագավորության անկումից հետո քոչվոր ցեղերի շարունակական հարվածների տակ կործանվեց նաև պետականությունը՝ անգամ թագավորական իշխանության բացակայությամբ երկրի կայունությունը պահող հայ նախարարական տները աստիճանաբար քոչվորների հարվածների տակ հեռացան պատմության ասպարեզից, վերացվեց հայկական զինուժը, ինչը կոտրեց հայ ժողովրդի դիմադրելու կարողությունը, սկսվեց ավերի, թալանի, հարյուրամյակների ստրկության ու կոտորածների՝ ոչ թե մեկ, այլ մի քանի դարը (որոշ հեղինակներ համարում են 800 տարի, ոմանք՝ 600, ոմանք էլ 500 տարի), մինչև 1918 թ. մայիսի 28-ի արշալույսը, երբ ավելի քան կես հազարամյակի փլատակների վրա՝ Արամի, Դրոյի, Սիլիկյանի ու մյուս նվիրյալների գերմարդկային ջանքերի գնով նորից հառնեց հայկական պետականությունը, թեև փոքրիկ ու գրեթե անկենսունակ թվացող, բայց կես հազարամյա ստրկությունից հետո՝ առաջին հայկական պետականությունը:

Եվ թվում էր, որ այդ պետությունը դարեր շարունակ օտարների լծի տակ հյուծվող, ստրկացած ու հլու մորթվող հայության բոլոր շերտերի համար առանձնակի հոգածության և սիրո առարկա պետք է լինի, և կարծես այդպես էլ կար, բացառությամբ հայության ներսում բույն դրած օտարոտի տարրերի՝ հայ բոլշևիկների, որոնք հեշտությամբ գործիք դարձան հայկական պետականությունը կործանել ձգտող

թուրքի ու Ռուսաստանի բոլշևիկյան շրջանակների ձեռքում:

Անիի դավաճանական հանձնումից պակաս ողբերգական հետևանքներ չունեցավ 1920 թ. հոկտեմբերի 30-ի Կարսի դավաճանությունը:

Բավականին շատ է քննարկվել այն հարցը, թե ի վերջո ինչ տեղի ունեցավ Կարսում, ինչն էր պատճառը, որ հայկական բանակը, որը բավարար չափով հանդերձավորված ու զինված էր, առանց կռվի հանձնեց Կարսը, այն դեպքում, երբ թվում էր, թե Կարսում են հավաքվել բազմաթիվ հայրենասեր հայ երիտասարդներ, բայց «Այդ «հայրենասեր» հայ երիտասարդները, հայտնվելով դիրքերում, վճռական պահին նախ սկսում էին գոռալ, թե «... մեր ընկեր բոլշևիկների դեմ մենք կռվել չենք ուզում, եկող թուրքերը մեր ընկերներն են», հետո ցուցադրաբար գցում էին զենքը և դիմում փախուստի, հորդորելով մյուս զինվորներին հետևել իրենց օրինակին[4]»:

Հայոց բանակի վրա իր քայքայիչ ազդեցությունն էր ունեցել հայ բոլշևիկների կողմից տարվող դասալքության քարոզը, քեմալա-լենինյան ուժերի դաշնակից հայ բոլշևիկների նպատակն էր՝ ամեն կերպ հասնել հայ-թուրքական պատերազմում Հայաստանի Հարապետության պարտությանը և հայկական պետականության վերացմանը. այդ մասին է վկայում նաև նրանց հղված մեզ արդեն քաջածանոթ «Հույժ գաղտնի» վերնագրված հեռագիրը, որն այսօր պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այդ հեռագրում կարդում ենք.

«Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի Գարնիզոն մեկնող բոլշևիկներին անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝ Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի: Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի): Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի

Անիի պարիսպների ընդհանուր տեսքը

Կարսի բերդը

իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև՝ Արևելքի խորհրդայնացումը: Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Սրա համար պետք է.

Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, դրանք են.

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին

բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը՝ վերադառնան թիկունք գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց: Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին՝ ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից:

Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով՝ Հայաստանը ընդմիշտ կկապվի Ռուսաստանի հետ, ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին և սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործի:

Ծանոթություն - Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել: Հայաստանի կոմ. կուս. կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դովլաթյան, Ա. Հովհաննիսյան Նո. 218, Բաքու, 1920 ՍԵՊ. 20[5]»:

Ահա, այս և նմանատիպ այլ դավաճանությունների հետևանքով ընկավ Կարսը, բայց իրական ողբերգությունը տեղի ունեցավ հետո, որովհետև Կարսի անկումը շղթայական ազդեցություն ունեցավ և ի վերջո հանգեցրեց հայկական պետականության

կորստին, չգիտեին արդյոք հայ բոլշևիկները, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ Կարսի անկումը, վստահաբար գիտեին, և համերաշխ էին Մուստաֆա Քեմալի արտահայտած մտքի հետ՝ «Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը[6]»: Քեմալի այս նպատակի հետ լիովին համերաշխ է նաև ժամանակի հայտնի բոլշևիկ գործիչ Անաստաս Միկոյանը. «….միտքը «Մեծ, Միացյալ և Անկախ Հայաստանի» մասին հանդիսանում է խիստ հետադիմական, վտանգավոր ու հանցավոր ցնորական մի գաղափար, որի դեմ պետք է պայքար ծավալի բոլշևիկյան կուսակցությունը….[7]»:

Ուրեմն գիտակցաբա՞ր էին արդյոք հայ բոլշևիկները զոհաբերում Հայաստանը, կարող ենք վստահաբար պնդել, այո՛, որովհետև «Հայկական պետությունը վերացնելու, Հայաստանի տարածքներ նվաճելու իր ձգտումներում, ինչպես արդեն ասացինք, Թուրքիան մենակ չէր. նրա հետ էր ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանը, այլև հայ բոլշևիկը, որն այնքան էր օտարացել իր ազգից ու թշնամանքով լցվել հարազատ պետության նկատմամբ, որ առանց վարանելու զոհաբերեց իր ազգի ու պետության շահերը՝ հանուն ինչ-որ անիրական «Համաշխարհային հեղափոխության», և այլևս կասկած չկա, որ նրանք Հայաստանը զոհաբերում էին գիտակցաբար, ոչ թե միամտության կամ անտեղյակության պատճառով[8]»:

Համաշխարհային հեղափոխության ունայն մտքերով տարված հայ բոլշևիկները հայության դարավոր թշնամի թուրքի և ռուս բոլշևիկի հետ ձեռք ձեռքի տված, ոչ միայն Միացյալ և Անկախ Հայաստանի, այլ նաև հայկական պետության գոյության դեմ էին պայքարում, և ամենևին պատահական չէր, որ Թիֆլիսի «Կոմունիստ» թերթը հոկտեմբերի 24-ին գրում էր ցնծությամբ. ««….Թուրքերի յարձակումը Հայաստանի վրայ մեծ հրճուանք պատճառեց բոլշևիկներին»: «Մնում է միայն ուրախանալ, որ Դաշնակցական Հայաստանը գտնուում է այն պոզահարող կովի վիճակում, որին Աստուած եղջիւրներ չի տուել»[9]»:

Հոկտեմբերի 30-ի Կարսի ամոթալի հանձնումը, ըստ էության, վճռեց Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագիրը: Կարճ ժամանակ անց թուրքերի ձեռքն անցավ նաև Ալեքսանդրապոլը…

Կարսի հանձնումը չափազանց ծանր նստեց Հայաստանի վրա. նախ՝ երկիրը կորցրեց իր անկախությունը, ապա՝ 1921 թ. մարտի 16-ի (իրականում 18-ի) Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով Հայաստանը զրկվեց մի շարք տարածքներից: Նույն թվականի հուլիսի 5-ին Արցախը ապօրինաբար կցվեց Ադրբեջանին, Կարսի պայմանագրով Նախիջևանը ևս տրվեց այդ երկրին: Հայաստանին մնաց միայն Զանգեզուրը, այն էլ՝ Նժդեհի գլխավորությամբ մղված երկարատև ու հերոսական պայքարի շնորհիվ:

Այսպիսով՝ հայոց նորագույն պատմության մեջ, որպես մեծագույն դավաճաններ մնացած Կասյանը, Նուրիջանյանը, Աթաբեկյանն ու մյուսները թուրքերի ու Լենինի հետ ձեռք ձեռքի տված կործանեցին հայկական պետականությունը, հանուն «համաշխարհային հեղափոխություն» կոչված անիրական մտայնության և, իհարկե, հանուն Հայաստանում, որտեղ, երբևէ ժողովրդական աջակցություն չէին ունեցել՝ օտարի օգնությամբ իշխանությունը ձեռք գցելու մոլուցքի:

Անփառունակ այս դավաճանների ապազգային գործունեության հետևանքով էր, որ Հայաստանը կորցրեց իր տարածքների մեծագույն մասը՝ Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Արցախը, Նախիջևանը, և Սևրի պայմանագրի հիման վրա՝ Վիլսոնի իրավարար վճռով մեզ հասանելիք Արևմտյան Հայաստանի 90.000 քառ. կմ-ը:

Նրանց գործունեության հետևանքով, Հայաստանը զրկվեց ժամանակի առաջադեմ ու հայրենասեր ռազմական և քաղաքական գործիչներից ու մտավորականներից, որոնք կամ սպանվեցին, կամ տարագրվեցին…

1991 թ. Հայաստանը կարողացավ վերականգնել իր անկախությունը՝ շնորհիվ դեռևս 1988-ին Արցախից սկսված համազգային զարթոնքի, հայությունը կարողացավ միահամուռ ուժերով ազատագրել նաև Արցախը, որը հայկական անկախ պետականության կայուն զարգացման և հետագա հզորացման գրավականն էր:

Թվում էր, թե հայոց պատմության մեջ դավաճանությունների էջը փակված է՝ Արցախի ազատագրումն ու Հայաստանի անկախությունը անշրջելի իրողություն, բայց այն, ինչ տեղի ունեցավ 2020-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ սառը ցնցուղ էր դավաճանությունների էջը փակած հայության կամ գոնե նրա մի հատվածի համար: 2020 թ. հոկտեմբերին լույս տեսած «Դրօշակ»-ի 10-րդ համարում, Կարսի անկմանը նվիրված մեր հոդվածում գրել էինք. «Այսօր Հայաստանի մերօրյա հանրապետության համար 1990-ականներին ազատագրված Արցախն ունի նույն կարևորությունը, ինչ Առաջին Հանրապետության համար Կարսը, և, ցավոք սրտի, այսօր էլ կան հասարակական ու քաղաքական շրջանակներ, որոնք շարունակական քարոզչություն են տանում այն ուղղությամբ, որ «այս թուրքը նախկին թուրքը չէ», «թուրքը բարեկամ է»՝ այս կոչերը համեմելով չափազանց գայթակղիչ խաղաղության խոստումով՝ միաժամանակ ծաղրելով Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարն ու վտանգավոր համարելով ազգ-բանակ հայեցակարգը[10]»:

Շուշի

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ, ցավոք, մեր մտավախությունը ճիշտ էր, Արցախը վերածեցին «Կարսի», միայն մի տարբերությամբ՝ եթե Կարսը հանձնվեց թշնամու ձեռքին գործիք դարձած և Հայաստանում իշխանություն չունեցող բոլշևիկների ջանքերի հետևանքով, ապա Արցախի դավադիր հանձնումը կատարվեց Հայաստանի՝ թշնամու ձեռքին ոչ պակաս գործիք դարձած իշխանության ձեռքով, որի ղեկավարը 2020թ. նոյեմբերի 9-ին հերոսաբար կռվող բանակի և նրա մեջքին ամուր կանգնած հայության թիկունքում դավադիր գործարքի մեջ մտավ թշնամու հետ և կապիտուլյացիոն համաձայնագիր ստորագրեց:

Փաստաթուղթ, որով Հայաստանը ոչ միայն կորցրեց Արցախի տարածքի 75%-ը, այլև թուրքը, իր ավելի քան հարյուր տարի առաջ նախ՝ Արամի, հետո Նժդեհի շնորհիվ վիժեցված պանթյուրքիզմի ծրագրին հետամուտ, հայտնվեց իր համար անհասանելի երազանք դարձած Զանգեզուրում:

Հայաստանի իշխանությունների հանցավոր անհեռատեսության հետևանքով սկիզբ է դրվել Հայաստանի Հանրապետության այդքան դժվարությամբ պահպանված տարածքի բզկտմանը, Հայաստանի ջրային և էներգետիկ ռեսուրսների թշնամուն հանձնման գործընթացին, վտանգի տակ է հայտնվել ոչ միայն Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, այլև, ինչպես ցույց են տալիս տարածաշրջանային և համաշխարհային իրադարձությունները, հայության ֆիզիկական գոյությունը:

Իսկ ինչ անել դավաճանության սարդոստայնից դուրս գալու համար՝ իհարկե, գլխավոր պայմանը պետական դավաճանություն իրականացրած անձին պետության ղեկավարի պաշտոնից հեռացնելն է, ինչը, ինչպես տեսնում ենք, բավականին բարդ է, քանզի նա դեռ անելիքներ ունի՝ թշնամու շահերը սպասարկելու տեսանկյունից, միաժամանակ հայ հասարակության մի որոշ հատված (թերևս արդեն ոչ մեծաթիվ) դեռևս չի ընկալել տեղի ունեցած ակնհայտ դավաճանության փաստը:

Պետության մնացորդացը դավաճանի ճիրաններից փրկելու համար անգիջում պայքար սկսած ընդդիմադիր ուժերը սակայն լավ են սերտել 4-րդ դարում տված Սահակ Պարթևի դասը՝ ազատել պետությունը «ախտավոր ոչխարից», միաժամանակ այն չգցելով օտարի ճիրանները (հեռացնել օրվա իշխանությանը, առանց արտաքին ուժերի միջամտության):

Իհարկե, հաշվարկված գործողությունների և ճիշտ քայլերի շնորհիվ, դեռևս որոշակիորեն պահպանված պետական ինստիտուտների հիմքի վրա, կարելի է կրկին հայկական պետականությունը ոտքի հանել, ինչը օրակարգային հարց է, և կարծում ենք, ոչ այդքան երկար ժամանակ անց հնարավոր կլինի ամբողջական իշխանափոխությամբ պետականության առողջացման, ինչու չէ, նաև վերականգնման գործընթացի սկիզբը դնել, սա դժվար, բայց ոչ անիրականանալի գործընթաց է, թեև, անգամ այդ դեպքում 2020 թ. նոյեմբերի 9-ի փաստաթուղթը հայոց պատմության մեջ կմնա, որպես մեծ պետական դավաճանություն, իսկ այդ փաստաթղթի բացասական հետևանքները, ցավոք, դեռ շատ երկար ժամանակ ենք կրելու…

Իսկ թե ինչու՞ և ինչպե՞ս ընկավ Արցախը, ինչպե՞ս և ինչի՞ դիմաց թշնամուն հանձնվեց նրա համար անմատչելի բերդաքաղաք Շուշին, այս հարցերի պատասխանը այսօրվա իշխանությունը՝ վարչապետի գլխավորությամբ, վաղ թե ուշ պետք է տա ոչ միայն պետական դավաճանության գործը քննող դատարաններին, այլ նաև ապագա սերունդներին ու պատմությանը, այն պատմությանը, որն ամենաանկաշառ դատավորն է, և արդար վճռով իր տեղն է դնում դավաճաններին ու հերոսներին, ինչպես իրենց արժանի տեղը դրեց 70 տարի «դավաճան» պիտակված դրոներին, նժդեհներին ու արամներին… Չէ՞ որ դավաճանությունը այն միակ մեղքն ու հանցանքն է, որը երբեք չի ներվում ո՛չ ազգի, ո՛չ պատմության, ո՛չ Աստծու կողմից… ■

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ. Խորենացի, Հայոց պատմություն., Եր. 1997, էջ 268-269:
2. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն., Եր., 1991, էջ 94-95:
3. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ., Եր., 1963., էջ 62-63:
4. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64), էջ 317-318:
5. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
6.Հարությունյան Վ., Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Եր., 2018, էջ 112:
7. Նույն տեղում:
8. Ա.Մելքոնյան Կարսի անկումը. պատճառներ և դասեր, «Դրօշակ» թիվ 10(1644), հոկտեմբեր 2020, էջ 42:
9. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի միջև, Պէյրութ, 1953, էջ 111:
10. Ա.Մելքոնյան Կարսի անկումը. պատճառներ և դասեր, «Դրօշակ» թիվ 10(1644), հոկտեմբեր 2020, էջ 44:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Աղբյուրներ

1. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:

բ) Գրականություն

1. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր. 1997:
2. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն., Եր., 1991:
3. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ., Եր., 1963:
4. Հարությունյան Վ., Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Եր., 2018
5. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի միջև, Պէյրութ, 1953:

գ) Մամուլի նյութեր

1. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64):
2. Ա.Մելքոնյան Կարսի անկումը. պատճառներ և դասեր., «Դրօշակ» թիվ 10(1644), հոկտեմբեր 2020:

Ողբերգութիւնը եւ մենք շաղկապուած դաւադիրներ ենք

Սիւզան Խարտալեան

Մենք ողբերգութիւնը սովորաբար կը համարենք դժբախտութիւն, բանմը, որ պարզապես կը պատահի մարդուն հետ, օրինակի համար դժբախտ արկած, պատահար, մահացու հիւանդութիւն, կամ իրավիճակ (բնական աղէտ, երկրաշարժ կամ ահաբեկչութիւն), այսինքն բան մը, որ մեր վերահսկողութենէն դուրս է: Բայց եթէ ողբերգութիւնը կ'ընկալենք որպես դժբախտութիւն, ապա մենք էական թիւրիմացութեան մէջ ենք: Պահ մը մտաբերենք յունական երեսունմէկ գերազանց անժամանցելի ողբերգութիւնները. իւրաքանչիւրը կը վերահաստատէ մէկ բան, որ ողբերգութիւնը անվերահսկելի դժբախտութեան հետ կապ չունի: Յունական այս ողբերգութիւնները հանգամանօրէն ցոյց կու տան, թէ ինչպես մենք կը համագործակցինք, թերևս անգիտակցաբար, մեզի հետ պատահած աղէտին հետ:

Ողբերգութիւնը կը պահանջէ մարդկային որոշակի մեղսակցութիւն մեզ ոչնչացնող աղէտին հետ:

Այսինքն խօսքը սև ճակատագրի մասին չէ, աստուածներու անքննելի, սակայն կասկածելի կամքէն բխող խաւարի մասին չէ, ոչ ալ աղէտալի մարգարէութեան: Ողբերգութիւնը կը պահանջէ մեր իսկ համաձայնութիւնը այդ ճակատագրին հետ:

Այլ կերպ ըսած, սա մեզ մէկը պահանջէ ազատութեան բաւական մեծ չափանիշ՝ սեփական կամքի որոշակի չափանիշ: Եւ մենք իբրև հաւաքականութիւն և իբրև հայ (անհատ մարդ) կը գտնուինք հոն ուր ենք այսօր հոս՝ մեր մեղսակցութեամբ կրլիագործենք ողբերգութիւնը, կը փակենք մեր էջի պատմութիւնը մեր իսկ ձեռքերով:

Ողբերգութեան հետ մենք դաւադրակիցներ ենք, մեր բոլոր ճիգերը, լարած ճակատագրի հետ միասին, կրդաւադրենք մենք մեր դէմ: Այսինքն՝ ճակատագիրը մեզմէ կը խլէ մեր ազատութիւնը որպեսզի մեր սև ճակատագիրը թափէ մեր գլխուն: Իսկ մենք միաժամանակ ե՛ւ գիտենք ե՛ւ չենք գիտակցիր որ լիաթոք լծուած ենք այս դաւադրակցութեան՝ առանց հասկնալու, որ բառացիօրէն կ'երթանք դեպի վերացում, ոչնչացում: Ինչպէ՞ս կարելի է եւ իմանալ, եւ չիմանալ, որ մենք մեր ձեռքերով կրսպաննենք մենք մեզ: Այո, դժուար է, բարդ է, չրսելու համար անտանելի է ընդունիլ մեր մեղսակցութեան միտքն ու փաստը:

Սակայն այդպիսին է մարգարէութեան բարդ գործառոյթը ողբերգութեան մէջ:

Հասկնալու համար, պահ մը նայինք մենք մեզի, հայ մարդուն, այսօր, դիտենք, թէ ինչպէս ես ու դուն, մենք, որ կը հաւատանք, որ ունինք լիարժէք ազատութիւն ու ազատ կամքի անկաշկանդ զգացողութիւն, բայց կրքայքայուինք, կրմաշինք, կ'ոչնչանանք ճակատագրի ուժով: Հիմա զայն կը գործադրենք օրէնքի ուժով: Սակայն երջանիկ ենք, որ մենք ենք տէրը մեր ինքնաքանդումին, մեր ինքնաոչնչացումին:

Այս փորձութեան հետ կապուած, այս մահացու փորձառութեան, որուն մէջ թաթախուած ենք, կայ նուրբ պահ մը, որ մեզմէ կրխուսանաւէ. այն, որ

մեր գոյութիւնը պարզ պատճառականութեամբ չէ որ կ'որոշուի: Ո՛չ, ճակատագիրը մեզմէ ուղիղ կը պահանջէ գիտակցուած մեղսակցութիւն ճշմարտութիւնը վեր հանելու համար: Ողբերգութեան մէջ մխրճուած կերպարներս՝ մենք, անկամ խաղալիքներ, մեքենաներ չենք: Ճշմարտութիւնը ունի իր գինը, իսկ մեր շարժը խաբուսիկ ինքնաճանաչումէն և անկաշկանդ ազատութեան պատրանքէն անդին, դէպի ճշմարտութիւն, շատ սուղ պիտի նստի մեր վրայ. շուտով գալիք ողբերգութիւնը կրմերկացնէ մեզ, մեր անփառունակութիւնը կրշպրտէ մեր երեսին:

Ճշմարտութիւնը կրհրամցնէ ցաւագին բան մը՝ մենք ներգործելու, իրադրութեանց վրայ ազդելու ոչ մէկ հնարաւորութիւն ունինք այլևս, ոչ իսկ մասնակի: Ճշմարտութիւնը ցոյց կու տայ մեր ինքնասէր ու ինքնաբաւ ըլլալու սահմանափակումները՝ մեր ինքնորոշման ծայրեզրերը, մէկ խօսքով մեր խոր կախուածութիւնը:

Ողբերգութիւնը մեր առջև կրդնէ մէկ կողմէ ազատութեան և միւս կողմէ անհրաժեշտութեան բարդ յարաբերութիւններու ամբողջ ծրարը: Մենք և մեր անհատական ազատութիւնը անընդհատ փորձութեան կրմատնուիք, այսօր այդ փորձութեան դիմաց պարտուած ենք, այս պահուն ներկայի և ապագայի որոշման հարցերուն մէջ բռնուած մեր ճակատագիրը մեզի կը յիշեցնէ մեր անցեալը. այդ անցեալէն փախուստ չունինք, ինչքան ալ փորձենք սրբել, մաքրել և ծուռ հայելիով տեսնել այն բոլորը, որ կրկոչուի անցեալ՝ ցեղասպանութիւն, հայրենիքի կորուստ, մահ ու սարսափ, այսօր բարեկամ դիտարկուող թշնամի թուրքը, մեր միւս բարեկամները, դաւաճանները... մէկ խօսքով անցեալը:

Ողբերգութիւնը սեղանին կրդնէ այն, ինչ որ կը խեղէ մեր էութիւնը և մեզ կրմղէ դէպի անցեալ. անցեալ, որ մենք կը մերժենք ընդունիլ կամ իւրացնել կարճաժամկէտ ապագայի, մեր մշտական նիւթական ծարաւի պատճառով: Այդպիսին է անցեալի ծանրութիւնը, որ իր ցանցին մէջ կը խճճէ մեզ:

Կասկած չունենանք, անցեալի ծանրութիւնը անկասկած կրփլի գալիքին վրայ: Անցեալը հերքել,

կընշանակէ ոչնչանալ. այդպիսին է ողբերգութեան հրամանը:

Ժամանակը կը թեքի և կը շրջուի ողբերգութեան պահին մէջ, ուր կ'ապրինք դուն և ես հիմա. ժամանակը դուրս կու գայ իր համաստեղութենէն, մինչ ժամանակի գծային ընկալումը՝ անցեալէն դէպի ապագայ հոսքը, ետ կը շպրտուի: Անցեալը այլևս անցեալ չէ, ապագան ինքն իր վրայ կը ծալլուի, իսկ ներկան կը չոքի անցեալի և ապագայի կորացումներու բեռան տակ:

Ողբերգութիւնը սովորաբար միջ–ժամանակներու արուեստն է, վերացող հին աշխարհի և գալիք նոր աշխարհի միջև տարածութիւն մը:

Այսօր հայերու ժամանակը խախտուած է: Հոս, այս պահուն, այլևս զուգակցում չկայ, շաղկապը կորսուած է, վերածուած է անջատումի:

Ողբերգութիւնը պումբրանկի նման կառուցուածք մըն է, երբ մեր դէպի դուրսի աշխարհ գործողութիւնները մեզի կը վերադառնան մահացու արագութեամբ: Ժամանակին մենք խնդիր լուծող էինք, հիմա մենք ենք խնդիրը: Որոշները մեզմէ ամէն ինչ կ'ընեն գտնելու համար այն կեղտն ու փտածութիւնը, որ կը քանդէ մեր ազգային, մշակութային ու քաղաքական համակարգը, կը թունաւորէ մեր ջուրերը, մահ կը բերէ մեր մայրերուն, զինուորներուն, երիտասարդներուն և երեխաներուն:

Բայց կեղտը մենք ենք: Կեղտը այն ղեկավարն է, որ լոյս աչքով ողբերգութեան դաւադրակիցն է, կեղտը մենք ենք, որ կը հանդուրժենք այդ կեղտը, կը սորվինք ապրիլ այդ կեղտի հետ և բռնել սպանդանոցի ճամբան: Բռնակալ մը ունինք այսօր, որ նստած է մեր բազկերակին, ան որոշած է չլսել, չտեսնել, չզգալ այն՝ ինչ որ կայ իր աչքին առջև, իր բերած ողբերգութիւնը:

Բայց մենք ալ բռնակալներ ենք: Մենք ևս կընայինք, բայց չենք տեսներ: Հինգ հազար մեր նահատակ զինուորները կը խօսին մեզի հետ, բայց մենք չենք լսեր:

Չենք յուզուիր, չենք զգաստանար, չենք գժուիր, միայն թէ մեր ապագան լոլիկահարուստ ըլլայ:

Եւ մենք կը շարունակենք մեր անվերջ ինքնասիրահարուած արդարա-ցումները ընկերային ցանցերու վրայ մեր յայտերով:

Ողբերգութիւնը մեզի կը յուշէ, որ մեր ցաւազրկիչ կենցաղը ապագայ չունի: Պէտք է տեսնենք իրականը, պէտք է լսենք իրականը: Մեր կուրութիւնը, մեր խլութիւնը, մեր համրութիւնը պատիժ են, թերևս այս անզգամութիւնը երբ հասնի իր ծայրը, կարենայ առաջնորդել մեզ դեպի խորաթափանցութիւն:

Պէտք է բանալ մեր ականջները և վերջ տալ այս մահերգին, ուր միայն կը լսուի «ես, ես, ես, ես եմ, իմս, իմս, ես, ես եմ, իմս է» բառերը:

Ամօթը կ'ապրի մեր աչքերուն մէջ: Սակայն խնդիրը այն է, որ մեր բռնակալը ամօթ չի զգար: Քաղաքական մեր այրերը մեզ կը մոլորեցնեն սուտ ամօթանքով, կեղծ խոնարհութեամբ, բեմադրուած արցունքներով և սուտ ներողութիւններով: Բայց մենք ևս ամօթ չունինք: Մենք նաև փոքր, անամօթ բռնակալներ ենք մեր յարաբերութեանց մէջ: Մինչև վերջ կը պնդենք, որ մեր անտարբերութիւնը, մեր անգործութիւնը մեր ընտանիքի փրկութեան համար է:

Մենք ենք և մեր այլասերումը : Դէմ դիմաց:

Այս պահուն որոշ է մէկ բան՝ մենք պարտուած ենք:

Ողբերգութիւնը դռան սեմին է: ■

Պիտեր Բրեյգել «Կոյրը առաջնորդում է կոյրին»

Ռազմավարական նշանակության հայ-ռուսական պայմանագրեր և համաձայնագրեր

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության ներկայացուցիչ,
Քաղաքագիտության մագիստրոս «Ազգային անվտանգություն» մասնագիտությամբ

Հայաստանի Հանրապետությունը Հարավային Կովկասում Ռուսաստանի Դաշնության միակ ռազմավարական դաշնակիցն է: Երկու երկրների ռազմավարական դաշնակցային համագործակցությունն առանցքային է Հայաստանի անվտանգային քաղաքականության առաջնահերթությունների շարքում, ինչը պայմանավորված է հայ-ռուսական ավանդական կապերով, հարավկովկասյան ուղղությանը վերաբերող գործընթացներում Ռուսաստանի նշանակալի ներգրավվածությամբ, առևտրատնտեսական ներուժով և տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերով, մասնավորապես, Արցախի հիմնախնդրով, հետպատերազմյան խնդիրների կարգավորման գործում Ռուսաստանի դերակատարմամբ, ինչպես նաև՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ լինելու հանգամանքով, Ռուսաստանում հայ մեծաքանակ համայնքի առկայությամբ:

ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ. ապրիլի 3-ին[1]: Երկու պետությունների միջև հարաբերությունները բնորոշվում են ամենաբարձր մակարդակներով երկկողմ փոխայցերի և հանդիպումների ինտենսիվությամբ: Ակտիվ են շփումները գերատեսչական և տարածաշրջանային մակարդակներում:

ՀՀ և ՌԴ միջև հարաբերությունները նշանավորվել են 2000 թ. սեպտեմբերի 26-ին ընդունված «21-րդ դարում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ռազմավարական համագործակցության մասին» հռչակագրով[2]: Հռչակագիրը հաստատում է երկու երկրների ժողովուրդների միջև բարեկամությունը խորացնելու և ամրապնդելու վճռականությունը, դաշնակցային լայն փոխգործակցությունը, բոլոր ոլորտներում կապերի ինտենսիվ խորացումը, կովկասյան տարածաշրջանում և ամբողջ աշխարհում հաստատուն խաղաղության, կայունության և երաշխավորված անվտանգության ապահովման միջոցով:

Համաձայն հռչակագրի 3-րդ կետի՝ ՀՀ-ն և ՌԴ-ն հաստատում են յուրաքանչյուր կողմի իրավասությունը սեփական անվտանգությունը, քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումն ապահովելու ուղղությամբ ուրույն ուղիների ընտրության հարցերում:

Հարավային Կովկասում ռազմաքաղաքական տեսանկյունից ՀՀ-ի և ՌԴ-ի համար կարևորվում է նախագահ Վլադիմիր Պուտինի առաջին պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն, 2001 թ. սեպտեմբերի 14-15-ը: Մոսկվայի նախաձեռնությամբ, Երևանը որոշ ժամանակ դառնում է ԱՊՀ շրջանակներում իրականացնող տարբեր

միջոցառումների հավաքատեղի, անցկացվում են ՀԱՊԿ-ի երեք գագաթնաժողով:

Ռազմական բնագավառում համագործակցությունը նպատակ էր հետապնդում ապահովելու երկու երկրների, ԱՊՀ հարավային սահմանների անվտանգությունը, ինչպես նաև Հարավային Կովկասի կայունությունը[3]:

Հայ-ռուսական հարաբերությունների վերընթաց զարգացումը նշանավորվել է նաև ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի 2008 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ պաշտոնական առաջին այցով, որի շրջանակներում ստորագրվել են առևտրատնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային համագործակցության համաձայնագրեր:

2011 թ. հոկտեմբերի 23-25-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահի առաջին պետական այցը Ռուսաստան, որի շրջանակներում ստորագրվել են սոցիալ-տնտեսական և ռազմավարական բնույթի յոթ երկկողմ փաստաթղթեր[4]:

Հայ-Ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերությունները ամրագրված են մի շարք համաձայնագրերով և պայմանագրերով:

1997 թ. օգոստոսի 29-ին կնքվել է «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրը:

Համաձայն 23-րդ հոդվածի՝ սույն պայմանագիրը կնքվել է քսանհինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ հաջորդ տասնամյա ժամանակաշրջանով, եթե պայմանավորվող կողմերից ոչ մեկը ոչ ուշ, քան դրա գործողության համապատասխան ժամանակաշրջանը լրանալուց մեկ տարի առաջ գրավոր չծանուցի մյուս պայմանավորվող կողմին պայմանագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին[5]:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1998 թ. նոյեմբերի 5-ից. այն հիմնված է երկու ժողովուրդների

մշակութային նմանության, հոգևոր շփման բազմադարյան ավանդույթների և բարեկամական կապերի վրա, միտված է միմյանց միջև բարեկամական հարաբերությունների, բարիդրացիության և փոխշահավետ համագործակցության անշեղ զարգացմանն ու ամրապնդմանը, նպաստելուն երկու պետությունների ժողովուրդների կենսական շահերին, նրանց համակողմանի զարգացմանն ու բարգավաճմանը՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտական, մշակութային և այլ բնագավառներում:

Համաձայն պայմանագրի, կողմերը պարտավորվում են անշեղորեն ղեկավարվել միմյանց պետական ինքնիշխանության և անկախության փոխադարձ հարգանքի, իրավահավասարության ու միմյանց ներքին գործերին չմիջամտելու, ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու, տարածքային ամբողջականության, սահմանների անխախտելիության, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների հարգման, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքներով և միջազգային իրավունքի այլ հանրաճանաչ նորմերով:

Պայմանագրի 2-րդ հոդվածը ներառում է ՀՀ և ՌԴ համատեղ պաշտպանության ապահովման, խաղաղության ու փոխադարձ անվտանգության պահպանման նպատակով սերտ համագործակցություն, հատկապես ըստ հոդված 3-ի՝ ցանկացած պետության կամ պետությունների խմբի կողմից ձեռնարկված ագրեսիայի գործողություններին հակազդելու համար կցուցաբերեն միմյանց անհրաժեշտ օգնություն, ներառյալ ռազմական՝ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան հավաքական ինքնապաշտպանության իրավունքի իրականացման կարգով[6]:

Արտաքին քաղաքականության բնագավառում, համաձայն հոդված 6-ի, կողմերը պարտավորվում են սերտորեն համագործակցել ինչպես անդրկովկասյան տարածաշրջաններում, այնպես էլ ողջ աշխարհում խաղաղության ամրապնդման, կայունության բարձրացման և անվտանգության գործում, նրանք կնպաստեն զինաթափման գործընթացի շարունակմանը ՄԱԿ-ի, ԵԱՀԿ ու ԱՊՀ խաղաղարար դերի մեծացմանն օժանդակող մեխանիզմների և ինստիտուտների կայացմանը[7]:

Բարձր կարևորություն տալով երկու պետությունների կայուն զարգացմանն ու տնտեսական ներուժի արդյունավետ կիրառմանը, երկուստեք կփոխգործակցեն շուկայական հարաբերությունների հիման վրա տնտեսական բարեփոխումների իրականացման գործում, կնպաստեն երկու պետությունների միջև տնտեսական ինտեգրացման խորացմանը, ընդհանուր տնտեսական տարածքի ձևավորման համար պայմանների ստեղծմանը, կձգտեն համակարգել

իրենց գործողությունները ֆինանսական, դրամավարկային, արժութային, հարկային, մաքսային և սոցիալական քաղաքականություն իրականացնելիս, կզարգացնեն իրավահավասար և փոխշահավետ համագործակցություն քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար և այլ ոլորտներում:

Ազգային անվտանգության ապահովման և ռազմական շինարարության հարցերը գնահատելիս, ըստ պայմանագրի 4-րդ հոդվածի՝ կարևորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության ռազմակայանի մասին երկկողմ պայմանագրերը, ինչպես նաև այլ համաձայնագրեր[8]:

ՀՀ և ՌԴ միջև 1995 թ. մարտի 16-ին կնքվել է պայմանագիր ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի տեղակայման մասին[9]: Ըստ պայմանագրի, կողմերը կընդլայնեն իրենց ազգային զինված ուժերի սերտ համագործակցությունն ու փոխգործակցության ձևերը: Կողմերից մեկի անվտանգության դեմ սպառնալիք առաջանալու կամ նրանցից որևէ մեկի վրա զինված հարձակման դեպքում, կառաջնորդվեն ռազմական օբյեկտների և կառույցների փոխադարձ օգտագործման սկզբունքով՝ ազգային զինված ուժերի համար սահմանված պայմաններով, ինչպես նաև պաշտպանական նշանակության օբյեկտների համատեղ շահագործման սկզբունքի համաձայն:

Համաձայն պայմանագրի 3-րդ հոդվածի՝ ռուսական ռազմակայանը պետք է կատարի կողմերի համապատասխան պայմանավորվածություններից բխող պարտականությունները: ՀՀ տարածքում գտնվելու ընթացքում, ՌԴ շահերը պաշտպանելու պարտականությունից բացի, ռուսական ռազմակայանը ՀՀ զինված ուժերի հետ պետք է ապահովի ՀՀ անվտանգությունը[10]:

ՌԴ ռազմակայանի զինվորական կազմավորումների գործադրումն իրականացվում է կողմերի փոխադարձ պայմանավորվածությունների, 1992 թ.

մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի, ՀՀ և ՌԴ միջև 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի հիման վրա և կողմերի օրենսդրություններին համապատասխան:

2010 թ. օգոստոսի 19-ից 21-ը ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի պաշտոնական այցը կարևորվեց «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» (թիվ 5) արձանագրության հաստատումով, որը համապատասխանում է երկու երկրների ռազմավարական հետաքրքրություններին և բխում է տարածաշրջանային մակարդակով անվտանգության և կայունության ամրապնդման շահերից: Ըստ այդ արձանագրության, ՀՀ-ի և ՌԴ-ի միջև 1995 թ. մարտի 16-ին կնքված պայմանագրի ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թվականը[11]:

«Ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 2013 թ. հունիսի 25-ին կնքվել է համաձայնագիր[12] մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին:

Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածները սահմանում են հսկողության առարկան՝ մատակարարված ռազմական նշանակության արտադրանքը և նպատակը՝ պայմանագրի շրջանակներում կնքված համաձայնագրերով մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման ստուգումը[13]:

Համաձայն 4-րդ հոդվածի, սույն համաձայնագրի իրագործման համար կողմերի լիազորված մարմիններն են՝ հայկական կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, ռուսական կողմից՝ ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայությունը:

Կողմերի լիազորված կազմակերպություններն են՝ հայկական կողմից պետական կառավարման հանրապետական այն մարմինները, որոնք իրենց կազմում ունեն զորքեր և զինվորական կազմավորումներ, ռազմական նշանակության արտադրանքի հետ կապված գործունեություն իրականացնելու հատուկ թույլտվություն (լիցենզիա) ունեցող կազմակերպությունները[14]:

Ռուսական կողմից՝ գործադիր իշխանության դաշնային այն մարմինները, որոնք լիազորված են իրականացնելու պետական պաշտպանական պատվերի պետական պատվիրատուի գործառույթ՝ ի շահ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների և այն կազմակերպությունների, որոնք ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ գործունեության համապատասխան տեսակի իրավունք ունեն:

Ռազմական նշանակության արտադրանքի հսկողությունն իրականացվում է ըստ 2002 թ. նոյեմբերի 5-ի՝ «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին» համաձայնագրի դրույթների և պահպանում է այն կողմի օրենսդրությամբ նախատեսված ռեժիմային պահանջները, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը, եթե այդ կողմի միջազգային պարտավորություններով այլ բան սահմանված չէ: Հսկողության խմբի անդամները հսկողության իրականացման ժամանակահատվածում պարտավոր են պահպանել այն կողմի օրենսդրությունը, որի տարածք մատակարարվում է ռազմական նշանակության արտադրանքը:

Հայաստանը ԱՊՀ կառույցի հիմնադիրներից է և նրա շրջանակներում համագործակցության ծրագրերի իրականացման ակտիվ մասնակիցը, հատկապես, մշակվել են համագործակցության արդյունավետ պայքարի մեխանիզմներ, այդ թվում՝ ռազմաքաղաքական, արտաքին սահմանների պաշտպանության ու վերահսկման, ինչպես նաև միջազգային ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների տարանցման և տարածման, ապօրինի արտագաղթի դեմ:

ԱՊՀ-ն ձևավորվել է 1991 թ. դեկտեմբերի 8-ին՝ Բելառուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի ղեկավարների կողմից, ովքեր ստորագրեցին Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը:

1991 թ. դեկտեմբերի 21-ին 11 ինքնիշխան պետությունները (ներկա պահին՝ 9-ը լիիրավ անդամ[15]) ստորագրեցին վերոնշյալ համաձայնագրին կից արձանագրություն, համաձայն որի, մասնակից պետություններն իրավահավասար հիմունքներով ձևավորում են ԱՊՀ-ն[16]:

Անդամակցությունը ՀԱՊԿ-ին Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից է, որն ապահովվում է անդամ-պետությունների միջև բազմակողմ կապերի շնորհիվ:

Հավաքական անվտանգության մասին Պայմանագիրը ստորագրվել է 1992թ. մայիսի 15-ին Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի ղեկավարների կողմից:

1993թ. սեպտեմբերին Պայմանագրին միացան Ադրբեջանը, Բելառուսը և Վրաստանը: Պայմանագիրն ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 20-ին՝ 5 տարի ժամկետով: Պայմանագրի երկարաձգման մասին արձանագրությունը 1999թ. ստորագրեցին 6 պետություններ (բացառությամբ՝ Ադրբեջանի, Վրաստանի և Ուզբեկստանի):

2002 թ. մայիսի 14-ին հիմնվել է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմա-

կերպությունը (ՀԱՊԿ): Նույն թվականի հոկտեմբերի 7-ին ստորագրվել է ՀԱՊԿ կանոնադրությունը: 2004 թ. դեկտեմբերի 2-ից կազմակերպությունն ունի ՄԱԿ-ի ԳԱ դիտորդի կարգավիճակ[17]:

Հավաքական անվտանգության մասին պայմանագրում առանձնահատուկ կարևորություն ունի վերջինիս 4-րդ հոդվածը, համաձայն որի՝ «եթե անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա անդամ պետությունների կողմից դա կհամարվի ագրեսիա՝ սույն պայմանագրի բոլոր մասնակից պետությունների դեմ:

Մասնակից պետություններից որևէ մեկի դեմ ագրեսիայի ակտի ի հայտ գալու պարագայում, մնացած մասնակից պետությունները կցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն՝ ներառյալ ռազմական օգնությունը, նաև կցուցաբերեն օժանդակություն իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով՝ հավաքական պաշտպանության իրավունքի իրագործման կարգին համապատասխան՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի»[18]:

ՀՀ և ՌԴ ռազմավարական դաշնակցային հարաբերություններում հիմնական ձեռքբերումներից է ազգային էներգետիկ անվտանգության ապահովումը: Դրա կարևորությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նորանկախ Հայաստանն իր պատմությունը սկսեց խոր էներգետիկ ճգնաժամով:

Էներգետիկ ճգնաժամը, որի հիմնական պատճառը ոչ թե Մոսկվան էր, այլ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը, կոտրեց 80-ականների վերջին և 90-ականների սկզբին ձևավորված հակառուսական կարծրատիպը Հայաստանում[19]:

ՀՀ և ՌԴ էներգետիկ հարաբերություններում Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էներգակիրների հիմնական մատակարարը և էներգետիկ համակարգի հիմնական ներդրողն է:

ՀՀ ներկրվող բնական գազի 80%-ը և միջուկային վառելիքի 100%-ը, վերամշակված նավթային արտադրանքի մատակարարումը կատարվում է Ռուսաստանից: Ռուսաստանի Դաշնությունը տիրապետում է համաշխարհային գազի պաշարների 17.6%-ին, գազի աշխարհի ամենախոշոր արտահանողն ու արտադրողներից մեկն է, արդյունահանում է տարեկան մոտ 500 մլրդ. խոր. մետր գազ (ամենաշատը ԱՄՆ-ից հետո):

ՀՀ շուկա ներկրվող բնական գազի համար սահմանված սակագինը որոշվում է ՀՀ և ՌԴ միջպետական հարաբերությունների վերաբերյալ կնքված համաձայնագրերով:

2013 թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կնքվել է համաձայնագիր «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների վերաբերյալ[20]:

Հայաստանում տեղակայված ՌԴ զորամիավորումը ՀՀ Հանրապետության հրապարակում մասնակցում է շքերթի

Համաձայնագրով կարևորվում են հոդված 7-ի հետևյալ դրույթները. հայկական կողմը երաշխավորում է, որ մինչև 2043 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ, սույն համաձայնագրից բխող կամ սույն համաձայնագրի հետ կապված ծագող՝ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և դրանց համապատասխան իրավահաջորդների՝ սույն համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ իրավունքները և շահերը ենթակա չեն փոփոխությունների, լրացումների, հետ կանչման կամ կրճատումների՝ առանց ռուսական կողմի նախնական համաձայնության[21]:

Հայկական կողմը երաշխավորում է, որ մինչև 2043 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ, Հայաստանի Հանրապետության օրենքներ, որոշումներ, հրամանագրեր և այլ նորմատիվ իրավական ակտեր չեն փոփոխի և/կամ չեղյալ հայտարարվի և/կամ այլ կերպ ոտնահարվի սույն համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և դրանց համապատասխան իրավահաջորդների իրավունքները և շահերը[22]:

Եթե վերը նշվածին հակառակ, մինչև 2043 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության որևէ նորմատիվ իրավական ակտ կփոփոխի, չեղյալ կհայտարարվի կամ որևէ այլ կերպ կոտնահարվի սույն համաձայնագրով «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության, «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության և դրանց համապատասխան իրավահաջորդների իրավունքները և շահերը, ապա կկիրառվեն մինչ այդպիսի նորմատիվ իրավական ակտի ընդունման պահը գործող ՀՀ օրենսդրության պայմանները[23]:

ՀՀ և ՌԴ Էներգետիկ համագործակցությունը միտված է ՀՀ էներգետիկ անվտանգության բարձրացմանը՝ ուղղված էներգակիրների ներմուծման ուղիների և արտադրության ձևերի

ՀՀ և ՌԴ զորքերի զորավարժությունները Հայաստանում

բազմազանեցմանը, նոր էներգետիկ միջուկային հզորությունների ստեղծմանը, կայուն և հուսալի էներգահամակարգի կառուցմանը:

2013-ի սեպտեմբերին ՀՀ նախագահը հայտարարեց Հայաստանի Հանրապետության՝ ՄՄ-ին (մաքսային միություն) և ՄՏՏ-ին (միասնական տնտեսական տարածք) միանալու որոշման մասին և պատրաստակամություն հայտնեց ձեռնարկելու որոշակի գործնական քայլեր՝ հետագայում նաև Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը մասնակցելու նպատակով:

2015 թ. հունվարի 2-ին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը, որն ապահովում է նոր իրական հնարավորություններ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և կառուցվածքային փոփոխությունների համար, կայուն ոլորտային բազա է ստեղծում զարգացնելու Հայաստանի և Ռուսաստանի համագործակցությունն անվտանգության հիմնախնդիրների կարգավորման հարցերում (մանրամասները հաջորդ հոդվածում):

Հայաստանի Հանրապետությունը պետք է ամրապնդի հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերությունները, շարունակի Ռուսաստանի Դաշնության հետ համատեղ ջանքեր գործադրել հատկապես անվտանգության և պաշտպանության ոլորտներում գործընկերության ամրապնդման և խորացման, առևտրատնտեսական համագործակցության առկա ներուժի լիարժեք գործարկման ուղղությամբ, ինչին չի նպաստում ՀՀ ներկայիս կառավարության վարած արտաքին քաղաքականությունը:

Ըստ ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Արտակ Զաքարյանի. Հայաստանը պարտավոր է մշակել, թարմացնել և խորացնել ռազմաքաղաքական հարաբերությունները առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության հետ: Անհրաժեշտ է նոր ռազմավարական մակարդակի համաձայնագիր, որը կլուծի Հայաստանի և Հարավային Կովկասում ռազմական բալանսի հարցը՝ երկարաժամկետ հեռանկարում[24]:

Հղումներ

1- ՀՀ-ՌԴ երկկողմ հարաբերություններ, https://www.mfa.am/hy/bilateral-relations/ru:
2- Декларация о союзническом взаимодействии между Российской Федерацией и Республикой Армения, ориентированном в XXI век, 26 сентября 2000 года, http://www.kremlin.ru/supplement/3210.
3- Վարդազարյան Մ., ՌԴ քաղաքականության զարգացման միտումները ԱՊՀ տարածքում և ՌԴ-ՀՀ հարաբերությունները 2000-ական թվականների կեսերին, http://www.ysu.am/files/karavarum.pdf:
4- «ՀՀ ԱԳՆ 2011 թ-ի գործունեության հաշվետվությունը», էջ 10-11, https://www.mfa.am/filemanager/Statics/report2011.pdf:
5- Պայմանագիր ՀՀ և ՌԴ միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532:
6- Տես նույն տեղում:
7- Տես նույն տեղում:
8- Տես նույն տեղում:
9- Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմակայանի մասին, https://uic.am/wp-content/uploads/2015/01/paym-razmabaza-1995.pdf:
10- 2010 թ. օգոստոսի 20-ին Երևանում ստորագրված՝ ՀՀ և ՌԴ միջև 1995 թ. մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 5 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65694:
11- «ՀՀ Արտաքին գործերի նախարարություն. 2010 թ. գործունեության ամփոփումը», էջ 8, https://www.mfa.am/filemanager/Statics/report2010.pdf:
12- Համաձայնագիր ՀՀ և ՌԴ միջև 2013 թ. հունիսի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության և նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին, http://www.parliament.am/draft_docs6/K-101_hamadzaenagir.pdf:
13- Տես նույն տեղում:
14- Տես նույն տեղում:
15- СНГ 30 лет спустя: историческое значение и перспективы развития, https://cis.minsk.by/news/19402/sng_30_let_spustja_istoricheskoe_znachenie_i_perspektivy_razvitija.
16- ԱՊՀ, https://www.mfa.am/hy/international-organisations/2:
17- ՀԱՊԿ, https://www.mfa.am/hy/international-organisations/1:
18- Տես նույն տեղում:
19- Սարուխանյան Ս., ՀՀ էներգետիկ անվտանգություն. Հիմնական ձեռքբերումները և մարտահրավերները, «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (40), 2011, http://www.noravank.am/upload/pdf/02.Sevak%20Sarukhanyan_21_Dar_06-2011.pdf:
20- Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88231:
21- Տես նույն տեղում:
22- Տես նույն տեղում:
23- Տես նույն տեղում:
24- https://www.tert.am/am/news/2021/06/29/zakaryan/3652783?fbclid=IwAR3I480O-IIH3qQ9k2l4cLWg9teI-mEZd0HqbSRDT89DbLi1-VeErrx5X-Ig#.YNwkjrN0MSQ.facebook

Մի քանի դիտարկում Ադրբեջանում իրանաֆոբիայի դրսևորումների շուրջ

Արտյոմ Տոնոյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

Իրանը, որպես պետություն, Իսլամական հեղափոխությունից հետո բախվեց ոչ միայն տնտեսական, քաղաքական և ռազմական բարդագույն խնդիրների և մարտահրավերների, այլև այնպիսի երևույթների հետ, որոնք իրենց բովանդակությամբ աղերսվում են Իրանի դեմ համաշխարհային մակարդակով տարված ու տարվող հակաքարոզչության և աշխարհում Իրանի «վատ իմիջի» ձևավորման հետ:

Մինչ այս արված հետազոտությունները փաստում են, որ իրանաֆոբիան և դրա քարոզն աշխարհում ԱՄՆ-ի կողմից մշակված քաղաքականություն է, որը, ունենալով Իրանը վարկաբեկելու և աշխարհում այդ պետության համար վատ համբավ ձևավորելու նպատակ, հենված է հետևյալ հիմնական քարոզչական թեզերի և դրույթների վրա:

1. Իրանը ցանկանում է ստեղծել միջուկային զենք, որը համաշխարհային սպառնալիք է:

2. Իրանը հովանավորում է ահաբեկչությունը և տարատեսակ ահաբեկչական կազմակերպությունների հովանավորող երկիր է: Այստեղ անպայման պետք է հաշվի առնել, որ ԱՄՆ-ում ահաբեկչական կազմակերպություն են համարում նաև Իրանի Իսլամական Հանրապետության «Հեղափոխության պահապանների» կորպուսը:

3. Իրանում պաշտպանված չեն մարդու իրավունքները: Այս դրույթն անմիջականորեն ազդում է դեպի Իրան զբոսաշրջության ոլորտի վրա:

4. Իրանի ռազմական արդյունաբերությունը հիմնված է հարձակողական սպառազինության արտադրության ռազմավարության վրա, որը **պոտենցիալ** սպառնալիք է տարածաշրջանի ցանկացած պետության համար:

5. Իրանի Իսլամական Հանրապետությունը միջամտում է այլ երկրների ներքին գործերին, հետևաբար կարող է անհրաժեշտ պահին ներքին ճգնաժամեր և խառնակություններ հրահրել տարածաշրջանի մի շարք պետությունների տարածքում:

6. Իրանի քաղաքական համակարգն իսլամական է, աստվածապետական, և այդ մոդելի արտահանումն Իրանի համար ունի ռազմավարական առաջնահերթություն: Հետևաբար իսլամական մեծամասնություն ունեցող ցանկացած երկիր Իրանի համար սեփական մոդելի արտահանման թիրախ է:

7. Իրանը խոչընդոտում է տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը:

Սրանք այն հիմնական դրույթներն ու քարոզչական թեզերն են, որոնք 1979 թվականից ի վեր աստիճանաբար, բայց հետևողականորեն օգտագործվել են ԱՄՆ-ի կողմից՝ աշխարհում Իրանը որպես «չարի առանցք» ներկայացնելու և «Իրանաֆոբիայի սինդրոմը» աշխարհի տարբեր հատվածներում և հատկապես մերձավորարևելյան Կովկաս-կասպյան տարածաշրջանում արմատավորելու համար: Դրա հետևանքով այսօր աշխարհի մի շարք, այդ թվում՝ եվրոպական երկրներում, կա «Իրանաֆոբիայի սինդրոմ», և այս երևույթի ձևավորման հիմքում ամենուր ընկած են եղել վերոհիշյալ 7 կետերի կամ դրանցից ածանցվող ենթակետերի տարբեր տարբերակները:

Փոքր-ինչ այլ է իրավիճակն Ադրբեջանի դեպքում: Ադրբեջանում իրանաֆոբիայի երևույթը կարծես առ այսօր չի դարձել լուրջ ուսումնասիրության առարկա այն դեպքում, որ, եթե կա այս երևույթի և մեր տարածաշրջանում դրա դրսևորումների ու առանձնահատկությունների խորքային ճանաչման ցանկություն, ապա պետք է սկսել հենց Ադրբեջանից:

Որպես ելակետ ունենալով այն դրույթը, որ ադրբեջանական ինքնությունը խարսխված է 3 հիմնական «հակա»-ների՝ հակահրանականության, հակառուսականության և հակահայկականության վրա, կարելի է ասել, որ դրա մի դրսևորում է Ադրբեջանում հայտնի այս կարգախոսը՝ «Rus, fars, ermənі – bunlar türkün düşməni» (բառացի թարգմանությամբ՝ «Ռուսը, պարսիկն ու հայը՝ նրանք են թուրքի թշնամին»: Պետք է ընդունել, որ ըստ բերված դրույթի տրամաբանության՝ Ադրբեջանում պետական և հասարակական մակարդակներում առկա է արտաքին վախի և էքզիստենցիալ

սպառնալիքների ընկալման ու տարբերակման հիմնական 3 տեսակ՝ արմենոֆոբիա, ռուսոֆոբիա և իրանոֆոբիա:

Ադրբեջանում «իրանոֆոբիայի սինդրոմը» ձևավորող հիմնական գործոնների թվում կարելի է առանձնացնել 3 հիմնական շերտ՝

1. կրոնական,
2. պատմական-քաղաքական,
3. մշակութային,
4. արտաքին:

Կրոնական գործոնի դեպքում Ադրբեջանում գործում են վերը թվարկված 7 հիմնական դրույթներից 6-ը, համաձայն որոնց՝ Իրանի քաղաքական համակարգը իսլամական է, աստվածապետական, և այդ մոդելի արտահանումն Իրանի համար ունի ռազմավարական առաջնահերթություն: Հետևաբար իսլամական մեծամասնություն ունեցող ցանկացած երկիր Իրանի համար սեփական մոդելի արտահանման թիրախ է: Ադրբեջանն, իրեն համարելով աշխարհիկ պետություն, բայց և միաժամանակ ունենալով շիայական մեծամասնությամբ բնակչություն, հետխորհրդային ողջ ժամանակաշրջանում առաջնորդվել է այն համոզմամբ, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը ցանկանում է Ադրբեջանում իրականացնել իսլամական հեղափոխություն և այն դարձնել կառավարման իսլամական մոդելով երկիր: Այդ մասին են վկայում վերջին 30 տարում այդ երկրում հարուցված բազմաթիվ քրեական գործերը, որոնցում Իսլամական կուսակցության և այլ կրոնական կազմակերպությունների անդամներ մեղադրվել են Իրանի գործակալներ լինելու և այդ երկրի ֆինանսավորմամբ Ադրբեջանում իսլամական հեղափոխություն իրականացնելու փորձերի մեջ: Ասվածի ամենավերջին օրինակներից են Նարդարան ավանի և Գանձակի դեպքերը, երբ Իրանը ոչ միայն փորձագիտական և հանրային մակարդակներում մեղադրվեց Ադրբեջանում իսլամական հեղափոխություն իրականացնելու փորձերի մեջ, այլև այդ մասին բարձրաձայնեցին իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության և խորհրդարանական տարբեր հանձնաժողովների անդամները: Ի դեպ, այդ նույն մեղադրանքով է արդեն 10 տարի Գոբուստանի կալանավայրում պահվում Իսլամական կուսակցության առաջնորդ Մովսում Սամադովը: Հենց այս խորքային վախի գոյության ուղղակի ապացույցներ են նաև Ադրբեջանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում և «Խղճի ու դավանանքի մասին» օրենքում արված տասնյակ փոփոխությունները: 1995 թվականին Ադրբեջանի Հանրապետության Ընտրական օրենսգիրքն արգելել է կրոնական և էթնիկական բովանդակություն ունեցող անվանումներով քաղաքական կազմակերպությունների մասնակցությունն այդ երկրի ընտրություններին, որի

պատճառով Ադրբեջանի առաջին գումարման խորհրդարանում պատգամավորական աթոռներ ունեցող Իսլամական կուսակցությունը հետագայում և ոչ մի խորհրդարանական ընտրության չի կարողացել մասնակցել: Նույնը վերաբերում է նաև «Խղճի ու դավանանքի մասին» օրենքում վերջին մի քանի տարիների ընթացքում արված փոփոխությունների հիման վրա արտերկրում և մասնավորապես Իրանում բարձրագույն հոգևոր կրթություն ստացած շրջանավարտների՝ **ադրբեջանական մզկիթներում սպասավորության, կրոնական քայլերթերի,** հասարակական վայրերում կրոնական պաստառներ փակցնելու արգելքների ներմուծմանը, շիայական մզկիթների մի մասի և հոսեյնիեների փակումը, նաև 2014 թվականին Հոմեյնիի աջակցության հիմնադրամի գործունեության արգելքն Ադրբեջանի Հանրապետության տարածքում:

Իրանի և Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները, թեև հաճախ իրենց ելույթներում ընդգծում են 2 ժողովուրդների պատմական և մշակութային ընդհանրությունների մասին, բայց այդ «ընդհանրություններն» իրականում ոչ այլ ինչ են, եթե ոչ Ադրբեջանում իրանոֆոբիայի և նաև դրանից բխող հակահիրանականության սնուցման աղբյուր: Այս համատեքստում կարևոր է նաև նշել ռասիստական և ատելության խոսք պարունակող այն արտահայտությունները, որոնք սովորական երևույթ են միջին վիճակագրական ադրբեջանցու բերանում՝ Իրանի մասին խոսելիս: Դրանցից են, օրինակ՝«molla rejimi»(«մոլլա վարչակարգ»),«ax-und rejimi»(«ախունդ վարչակարգ»), «mollakratiya rejimi» («մոլլայապետական վարչակարգ») և այլ արտահայտությունները:

Պատմական-քաղաքական գործոնն անմիջական կապ ունի պանթյուրքիզմի գաղափարախոսության և «Մեծ Ադրբեջանի» ու դրա մաս կազմող «Հարավային Ադրբեջանի» ծրագրերի հետ: Ադրբեջանի հասարակական-քաղաքական խոսույթում կա տարածված մի թեզ, որ Իրանի Իսլամական Հանրապետության շահերից չի բխում անկախ Ադրբեջանի գոյությունը, քանի որ այն սպառնալիք է այդ երկրի կայունությանը և տարածքային

ամբողջականությանը: Բնականաբար այս դրույթի անկյունաքարը հենց այդ երկրի և Թուրքիայի կողմից առաջ մղվող «Հարավային Ադրբեջանի» ծրագիրն է, ըստ որի, եթե կա անկախ Ադրբեջան պետություն կամ «Հյուսիսային Ադրբեջան», որի վերանվանման հարցը 2011 թվականին անգամ քննարկման դրվեց այդ երկրի խորհրդարանում, ապա մի օր այդ պետությունը փորձելու է միավորել և իր մեջ ներառել նաև «Հարավային Ադրբեջանը»: Ինչքան էլ տարօրինակ թվա, սակայն այլ պետության հանդեպ տարածքային նկրտումներն իրենց հերթին ծնունդ են տալիս մի վախի, իրանաֆոբիայի մի դրսևորման, որը բանաձևվում է հետևյալ կերպ. «Իրանը ամեն ինչ անում է և անելու է՝ անկախ Ադրբեջանն աշխարհի քարտեզից ջնջելու համար, քանի որ անկախ Ադրբեջանի գոյությունն սպառնալիք է Իրանի համար»: Ադրբեջանում համարում են, որ 1990-ականներին Իրանը հենց այդ նպատակով է «օգնել Հայաստանին»՝ Արցախյան առաջին պատերազմում, և սա արտահայտվում է Ադրբեջանում դարձյալ խիստ կիրառական 2 արտահայտություններով՝ «fars şovinist rejimi» («պարսկական շովինիստական վարչակարգ») և «ermənipərəst Iran rejimi» («իրանական հայապաշտ վարչակարգ»):

Մշակութային գործոնի հիմքում ընկած են ինքնության փնտրտուքը և դրանից բխող մշակութային յուրացման քաղաքականությունը: Նիզամի Գանձակեցուն, Խաղանի Շիրվանիին, **Բաղր Շիրվանիին**, Մահասթիին և առհասարակ Առանի ու Շիրվանի պարսկախոս բոլոր բանաստեղծներին համարելով ադրբեջանցի,



Խաղանիի արձանը Բաքվում

ադրբեջանական քարոզչամեքենան հասել է մի հետաքրքիր հանգրվանի, երբ միջին վիճակագրական ադրբեջանցին առհասարակ կասկածի տակ չի առնում այդ հեղինակների ադրբեջանցի լինելը և հայտնվում է մեկ այլ վախի մեջ՝ լսելով կամ կարդալով այդ հեղինակների իրանցի լինելու մասին: Տեղի է ունենում տրամագծորեն հակառակ մի գործընթաց. մշակութային յուրացման սեփական քաղաքականությունը վերագրվում է հենց յուրացման զոհին, և հանրությունը ներքաշվում է իրանաֆոբիայի մեկ այլ հարթություն՝ համարելով, որ Իրանը փորձում է խլել իրենց մշակութային ժառանգությունը:

Արտաքին գործոնի հիմքում ընկած են Իրան-Հայաստան և Ադրբեջան-Իսրայել հարաբերությունները: Առաջինի դեպքում կա վախ, որ Իրանը համագործակցում է Հայաստանի հետ՝ Ադրբեջանին թուլացնելու կամ, վերջին հաշվով, քարտեզից ջնջելու համար, իսկ երկրորդի դեպքում հասարակության շրջանում կա խորքային վախ, որ Իրանը կարող է պատժել Ադրբեջանին՝ Իսրայելի հետ համագործակցելու համար: Սա հաստատող բազմաթիվ ելույթներ և նյութեր կան, որոնք, ասելիքը չերկարացնելու համար, թվարկել չեմ կարող:

Ամփոփելով՝ Ադրբեջանում «Իրանաֆոբիայի սինդրոմն» ունի յուրահատուկ դրսևորումներ: Կարելի է առանձնացնել ադրբեջանական իրանաֆոբիան ձևավորող 4 հիմնական բաղադրիչ՝ կրոնական, պատմական-քաղաքական, մշակութային և արտաքին, որոնցից միայն առաջինն է ընդհանուր համաշխարհային իրանաֆոբիայի 7 դրույթներից մեկի հետ: Մնացածի դեպքերում առկա են տեղական (լոկալ) առանձնահատկություններ, որոնք իրանաֆոբիայի պրիզմայով խորքային ուսումնասիրության դեռևս ենթարկված չեն: ■

Պատառիկներ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն Կուսակցութեան Ծածկանուններու բառարան»-ից

Աւօ Գաթրճեան

Պատմութեան ընթացքին և կեանքի զարգացման զուգընթաց՝ բառարան հասկացողութիւնն ևս աստիճանաբար աւելի ընդարձակ իմաստ ու բովանդակութիւն ստացաւ: Բառարանը, սոսկ բառի բացատրական կամ թարգմանական սահմանափակումէն դուրս գալով, տարածուեցաւ տարբեր յատկանիշներու վրայ, և ստեղծուեցան զանազան բնագաւառներու յատուկ մասնագիտական բառարաններ՝ հասնելով նոյնիսկ հանրագիտարանային բառարաններու:

Բառարանագիտութեան մէջ յատուկ տեղ կը գրաւեն կենսագրական բառարանները: Անոնց նախահայրը կարելի է համարել ֆրանսիական «Լարուս» հրատարակութիւնները, որոնք աստիճանաբար ընդարձակուեցան ու կատարելագործուեցան:

Հայ բառարանագիտութեան մէջ կենսագրական տեսակի մեծագոյն նուաճումներէն են Հրաչեայ Աճառեանի «Հայոց անձնանունների բառարան»-ը, Գառնիկ Ստեփանեանի կազմած եռահատոր «Կենսագրական բառարան»-ը: Ճիշդ է, որ այս բառարանները լիարժէք են, բայց բառարանագիտութիւնը և մասնաւորաբար կենսագրական բառարանի տեսակը կը թելադրեն աստիճանական զարգացում, նորացում, որպէսզի բառարանը միշտ հասնի զարգացման նոր շրջաններու՝ լրացվելով ներկայ և կենդանի բառայօդուածներով ու անուններով:

Կենսագրական բառարանները գիտական արժէքներ են, և աւելի կը զգացուի անոնց պահանջը՝ սկսած առօրեայ գործունէութենէն մինչև գիտական ուսումնասիրութիւններ: Մտաւորական, գիտական աշխատող, ուսուցիչ թէ ուսանող կամ պարզ ընթերցող, ամէնօրեայ իր աշխատանքին մէջ կարիք ունի ստուգելու, ճշդելու և իմանալու այս կամ այն գրողի, գործիչի մասին: Բայց երբեմն և շատ յաճախ դժուարութիւններու կը հանդիպինք անցեալին կամ թէկուզև ներկայիս՝ որևէ ծածկանունի հանդիպելով:

Պէտք է նշել, որ լոյս տեսած են զանազան ծածկանուններու բառարաններ կամ այլ աշխատութիւններ: Այս առնչութեամբ կարելի է նշել Գարեգին Լևոնեանի շուրջ 3000 ծածկանուններու «Բառարան հայ ծածկանունների» գիրքը (Երևան, 1963 թ.): Կազմուած է «Մշակի» (Գ. Արծրունի) աշխատակիցներու ծածկանուններու բառարանը: Նշենք նաև Հրանդ Պետրոսեանի «Հայերէնագիտական բառարան»-ը («Հայաստան» հրատարակչութիւն, Երևան, 1987 թ.), Խիկար Բարսեղեանի, Բախտիար Յովակիմեանի, Ներսէս Գասապեանի, Հայկ Պարիկեանի և ուրիշներու աշխատութիւնները:

Հայ բառարանային գրականութեան մէջ, սակայն, գոյութիւն չունի ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութեան անդամներու կրած ծածկանուններու կամ զանազան

ծածկանուններու բառարան, որ կարողանայ բաւարարել ընթերցող ուսումնասիրողին բոլոր պահանջները, թէև յեղափոխական գրականութեան կամ կարգ մը հրատարակուած գիրքերու վերջին բաժիններուն մէջ, յատկապէս՝ անձնանուններու ցանկերու շարքին, տեղ տրուած են ծածկանուններու և անոնց կողքին իսկական անուն-ազգանունի բացատրութիւններ:

Այս պատճառով ընթացք առած է մեր «Հայ յեղափոխական դաշնակցութիւն կուսակցութեան ծածկանուններու բառարան» կազմելու աշխատանքը, որը նպատակ ունի մտաւորականին, գիտական աշխատակիցին, ընթերցողին ու մանաւանդ նորահաս սերունդին՝ պարզաբանելու իւրաքանչիւր ծածկանունի ետին թաքնուած դաշնակցականի իսկական անունը: Ուստի ձեռնարկեցինք այս աշխատանքին՝ նպատակ ունենալով դիւրացնել փնտրտուքի գործընթացը՝ պատրաստելով ծածկանուններու տարբեր բնագաւառներու ցանկ մը՝ կամրջելու համար անցեալն ու ներկան:

Այստեղ, առաջին հերթին, լուսարձակի տակ կ'առնենք ծածկանուն, կեղծանուն կամ ծածկագրութիւն և գաղտնագրութիւն բառերու հոլովոյթն ընդհանրապէս:

Անձնանուններու մէջ ուրոյն շերտ կը կազմեն կեղծանունները, ծածկանունները, մականունները, ազգանունները: Կեղծանունը կամ ծածկանունը հնարուած անձնանուն է, որ այս կամ այն հանգամանքով պայմանաւորուած՝ փոխարինած է անձի անունին (բուն՝ հիմնական անունին զուգահեռ կամ լիակատար փոխարինումով): Այսպիսի անուանումներու յաճախ կը դիմեն գրողները, արուեստի բնագաւառի գործիչները, ծածուկ գործունէութիւն նախաձեռնող անձեր:

Անձնանուններու կամ ազգանուններու ծածկանունները կամ կեղծանունները կը բաժնուին հետևեալ բնագաւառներու մէջ.

- գրական կեղծանուններ,
- գեղարուեստական կեղծանուններ,
- հաւաքական կեղծանուններ,

- քաղաքական կեղծանուններ,
- յեղափոխական կեղծանուններ,
- կուսակցական կեղծանուններ:

Յատկապէս վերջին երեք բնագաւառներու անձնաւորութիւններէն շատեր երբեմն իրենք ընտրած են ծածկանունը, կեղծանունը, ստորագրութիւնը կամ անունն՝ իրենց իսկ անունի փոխարէն: Անոնք ծածկանունի դիմած են զանազան նկատառումներով՝ խուսափելու համար գրաքննչական հետապնդումներէ, ընդգծելու համար հեղինակի անհատականութիւնը կամ վաստակը, ազատուելու համար ոչ բարեհունչ ազգանունէն:

Վերը նշուած բոլոր բնագաւառներու մէջ ներառուած անձնաւորութիւններու կարգ մը ծածկանուններ թէև կրնան ուրիշներու կողմէ յօրինուած ու նշանակուած ըլլալ, սակայն մեծ բաժինը, բնականաբար, եղած է, որ անձնաւորութիւններ իրենք ընտրած են իրենց ծածկանուններն ու կեղծանունները:

Գրողներու կեղծանունները յաճախ կը կոչեն նաև գրական անուն (յուն.՝ ψευδώνυμος, լատ.՝ pseudgnymos – «սխալ անուն», ψεύδος «փսեուդոս» – «այլ» և ὄνομα «օնոմա» – «անուն»), որ կ՚օգտագործուի մարդու կողմէ անոր հասարակական գործունէութեան (յատկապէս արուեստի բնագաւառին մէջ) մէջ՝ իրական անունին փոխարէն: Իրական անունին տակ կը հասկնան այդ անունը, որ մարդը ստացած է իր ծննդեան ժամանակ և պաշտօնապէս արձանագրուած է, գրական անունին առկայութեան պարագային կը կոչուի աւտոնիմ (յունարէնէ):

Արևելեան մշակոյթի մէջ (օրինակ՝ ճափոնականի և չինականի մէջ) գրական անուան ընդունումն ընկերային կարգավիճակի փոփոխման հետ միաժամանակ ինչ-որ ժամանակաշրջանի պարտադիր եղած է:

Գրական անունին նպատակներէն կարելի է դասել շատ երկար անունն աւելի կարճով փոխարինելու ձգտումը, աւելի հնչեղ անուն ստանալու նպատակը, մարդու ազգութիւնը գաղտնի պահելու ցանկութիւնը և այլն:

Հայ գրողներէն կարելի է նշել՝ Ռաֆֆի (իսկական անունը՝ Յակոբ Մելիք-Յակոբեան), Մուրացան (Գրիգոր Տէր-Յովհաննիսեան), Շիրվանզադէ (Ալեքսանդր Մովսիսեան), Նար-Դոս (Միքայէլ Յովհաննիսեան), Պերճ Պոշեան (Յովհաննէս Տէր-Առաքելեան), Դանիէլ Վարուժան (Չպուգքեարեան), Պարոյր Սևակ (Ղազարեան): Ինչպէս նկատելի է, ծածկանունը կարող է փոխարինել բուն անունին ամբողջութեամբ կամ միայն ազգանունին: Կան նաև խմբային ծածկանուններ, ինչպէս՝ Գամառ-Քաթիպա, որ կազմուած է երեք գրական գործիչներու (Գէորգ Քանանեանի, Մնացական Թիմուրեանի, Ռաֆայէլ Պատկանեանի) անուններու սկզբնամասերով (որոշ փոփոխութեամբ):

Մականունն անձին տրուած է իբրև լրացուցիչ, յաւելեալ անուն՝ անոր անհատականութեան բնորոշ որևէ յատկանիշ, աչքի զարնող գիծ նկատի ունենալով: Շատ տարածուած է բարբառներու, ժողովրդախօսակցական լեզուի մէջ և ունի խիստ ընդգծուած արտայայտչականութիւն: Այսպէս՝ որոշակի իրադրութեան մէջ, օրինակ՝ խօսակցական բնագաւառի մէջ գլուխի մազերը թափած, ճաղատ մարդուն (անոր բացակայութեամբ) Քաչալ անունով կը կոչեն: Ժողովրդախօսակցական լեզուի մէջ այսպիսի անուանումները կը կոչուին փուտանուն (փոտանուն), փոթ անուն: Յաճախ ասոնք հիմք դարձած են ազգանուններու կազմութեան, օրինակ՝ Զուակերեան, Աճառեան և այլն:

Եղած է նաև, որ գրական, գեղարուեստական ու հաւաքական կեղծանուններու կողքին, յեղափոխական, ռազմական, քաղաքական և կուսակցական բազմաթիւ գործիչներու ծածկանուններ ևս դարձած են իսկական անուն, ինչպէս՝ Արամ Մանուկեան, Վարանդեան…

Անձնանուններու տրուած ծածկանուններուն կամ կեղծանուններուն կը յաջորդէ ծածկագրութիւնը կամ գաղտնագրութիւնը (համեմատել՝ ծածկագիր, գաղտնագիր՝ գրութեան համակարգը կամ համակարգի առանձին տեսակներն ու տարրերը նշելու համար, վերջին նշանակութեամբ առաւել յոգնակի ձևերը՝ ծածկագրեր, գաղտնագրեր): նպատակն է գրածը հասկնալի դարձնել միայն այն մարդոց, որոնք գիտեն վերծանման բանալին:

Ծածկագրութեան գրութեան եղանակը գրութեան ինքնատիպ համակարգն է, որուն մէջ տառերը (կամ թիւերը, կէտերը և այլ պայմանական նշաններ) կ՚արժևորուին ոչ ուղղակի նշանակութիւններով և յաճախ պայմանական նշաններու այլևայլ համակցումներով այս կամ այն միտքը կը հաղորդեն: Ծածկագրութիւնը վերծանելու, ըմբռնելու բանալին (սկզբունքը) սովորաբար յայտնի կ՚ըլլայ սահմանափակ թիւով մարդոց:

Գաղտնագիրը կամ գրիփթոկրամման (grypto-gram: յունարէն κρυπτός- գաղտնի և γράμμα- գիր բառերէն) նոյնպէս գրութեան ձև է, որ նպատակ ունի գրուածը հասկանալի դարձնել միայն որոշակի անձնաւորութիւններու:

Գաղտնագիրն օգտագործուած է հին և միջին դարերէն՝ քաղաքական, ռազմական, առևտրական, արհեստակցական և այլ տեղեկութիւններ հաղորդելու համար: Առաջին գաղտնագրերէն մէկը գաւազանագիրն է (յուն. σκυτάλη- գաւազան), որ օգտագործած են հին Սպարտայի մէջ, հիմնականին մէջ՝ ռազմական գործողութիւններու ժամանակ: Ան պարզագոյն փոխարինագիր է: Մագաղաթի ժապաւէնը կը փաթթէին որոշակի հաստութեան ձողի վրայ և երկարութեամբ կը գրէին: Յետոյ գրուածը կարդալու համար հարկաւոր էր ժապաւէնը փաթթել նոյն հաստութեան ձողի վրայ:

Հին Հայաստանի գաղտնագրերու մասին կարելի է ըսել, որ հայկական գաղտնագրերու մաս մը կը պարունակեն քաղաքական տեղեկութիւններ, ծածկագրեր, միւսը՝ յիշատակարաններ, ուր գրիչները տեղեկութիւններ կը հաղորդեն իրենց մասին: Անոնք կը բաժնուին քանի մը խումբերու.

- սինակէտագիր,
- կէտագիր,

- օղակէտագիր,
- գաւազանագիր,
- փոխարինագիր,
- եղբայրագիր,
- աղաւնագիր,
- գումարագիր,
- թուանշագիր և այլն:

Ծածկագրութեան բազմաթիւ եղանակներ յայտնի են հին ժամանակներէ (յիշատակելի են Հերոդոտոսը և Պլուտարքոսը): Ծածկագրութիւնը օգտագործուած է ռազմական, դիւանագիտական, **անօրինական** քաղաքական, կրօնա-աղանդաւորական և այլ նպատակներով: Հայերը որոշ տեսակներ գործածած են 12-րդ դարէն:

Հայ միջնադարեան գրչութեան մէջ քաղաքական, ռազմական, առևտրանիւթական, կրօնա-աղանդաւորական, արհեստագործական և այլ բնոյթի տեղեկութիւններ հաղորդելու համար գրիչներն երբեմն դիմած են գրութեան այս համակարգին: Յիշատակարաններու մէջ անոնք ծածկագրութեամբ տեղեկութիւններ ձգած են նաև իրենց մասին: Հայ ծածկագրութիւնը կը ներկայանայ շարք մը տարբերակներով (տարատեսակներով). որոշ տարբերակներ գործածուած են տակաւին 12-րդ դարէն:

Յայտնի են ծածկագրութեան հետևեալ հիմնական սկզբունքներն ու միջոցները:

1. Սիւնակէտագիր ծածկագիր: Տառերու այբբենական արժէքի արտայայտումը սիւնիկներու ու կողքին դրուած կէտերու համակցումով, միացումով:

Սիւնակէտագիր կը կոչուի այն պատճառով, որ կը կազմուի սիւներէ և անոր կողքը դրուած կէտերէ: Որոշ բանասէրներ այս ծածկագրութիւնը կ'անուանեն Սիւնագիր կամ Կէտագիր: Ծածկագրութեան այս տեսակը հայ մատենագրութեան մէջ ամէնէն շատ գործածուող գաղտնագրութիւնն է:

Հայագէտ Ֆրեդերիք Միւլլերն որոշ նմանութիւն կը տեսնէ հայկական սիւնակէտագիր ծածկագրութեան և կելտական ogham կոչուող գրութեան մէջ, որ կազմուած է հինգ գծիկներու զանազան ձևափոխութիւններէ, և կը կարծէ, որ սիւնակէտագիրը վերցուած է անոնցմէ: Սիւնակէտագիրը յօրինուած է օղակէտագիրի սկզբունքով, ուր կլոր օղակներուն կը փոխարինեն ուղղահայաց կամ քիչ թեքութեամբ գրուած գծիկները, իսկ կէտերը կը մնան անփոփոխ:

2. Կէտագիր ծածկագիր:

Նախորդին համակարգն է. սիւնիկները փոխարինուած են հայկական այբուբենի տառերով:

3. Օղակէտագիր ծածկագիր՝ օղերու և կէտերու համակցումով, միացումով:

Ծածկագրաթեան այս ձևի համար հայերէն այբուբենի միաւոր տառերը (Ա-Թ) կ'արտայայտուին մէկ կլոր օղակով (o), տասնաւորները (Ժ-Ղ)՝ երկու (oo), հարիւրաւորները (Ճ-Ջ)՝ երեք (ooo), հազարաւորները (Ռ-Քֆ)՝ չորս (oooo), որոնց մօտ հորիզոնական դիրքով կամ խառն շարուած կէտերն իրենց քանակով ցոյց կու տան ծածկագրուած տառին տեղն իր համակարգին մէջ, որմէ և կը ներկայանայ օղակէտագիր ծածկագիրներու հետևեալ այբբենական շարքը.



O. O.. O... O:: O:.. O::: O:.:. O:::: O:::::.
Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
OO. OO.. OO... OO:: OO:.. OO::: OO:.:. OO:::: OO:::::.
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
OOO. OOO.. OOO... OOO:: OOO:.. OOO::: OOO:.:. OOO:::: OOO:::::.
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
OOOO. OOOO.. OOOO... OOOO:: OOOO:.. OOOO::: OOOO:.:. OOOO:::: OOOO:::::.
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Քֆ

4. Գաւազանագիր ծածկագիր. գաւազանանման պայմանական նշան՝ կէտերու համակցումով, միացումով:

5. Փոխարինագիր ծածկագիր. Այբուբենի տառերու արժէքներու փոխարինում՝ որոշակի սկզբունքով:

Փոխարինագիր ծածկագրութիւնը գաղտնագրութեան հին ձևերէն մէկն է, ըստ էութեան՝ ամենապարզը, որովհետև անով կը կատարուի հայերէն տառերու պարզ փոխակարգում, որուն համար ալ ան ստացած է փոխարինագիր անունը: Ծածկագրութեան այս եղանակի դէպքի մը մէջ ծածկագրուող բառի մէջ հանդիպող միաւորները (Ա-Թ) կը փոխարինեն հազարաւորներու շարքին (Ռ-Քֆ)՝ համապատասխան տեղեր գրաւող տառերով, տասնաւորները (Ժ-Ղ)՝ հարիւրաւորներով (Ճ-Ջ), իսկ միւս պարագային՝ միաւորները (Ա-Թ) կը փոխարինեն հարիւրաւորներով (Ճ-Ջ), տասնաւորները (Ժ-Ղ)՝ հազարաւորներով (Ռ-Քֆ): Նոյն սկզբունքով յօրինուած է նաև փոխարինագիրի երրորդ տարբերակը, երբ միաւորները (Ա-Թ) կ'արտայայտուին տասնաւորներով (Ժ-Ղ), հարիւրաւորները (Ճ-Ջ)՝ հազարաւորներով (Ռ-Քֆ):

Ծածկագրութեան այս երեք ձևերն ունին հետևեալ պատկերը.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ,
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Քֆ,
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ,
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ,

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ,
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ,
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ,

Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք,

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ,
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ,
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ,
Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք:

Այս աղիւսակները կ'օգնեն անհրաժեշտութեան պարագային հեշտութեամբ վերծանելու փոխարինագիր ծածկագիրները, եթէ անոնցմով այլևայլ հնարանքներ չեն կիրարկուած: Ծածկագրութեան այս տեսակի հնագոյն նմուշը 7-րդ դարի Աւանի արձանագրութիւնն է: Հետագային հայերէն ձեռագիրներու մէջ կը հանդիպինք աւելի շատ թիւով փոխարինագիր ծածկագիրներու:

Աւանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը

6. Եղբայրագիր ծածկագիր. փոխարինել ըստ յաջորդականութեան:

Ծածկագրութեան այս եղանակը նոյնպէս առանձին բարդութիւններ չունի: Անուանումն իսկ կը նշէ, որ ծածկագրուած բառի իւրաքանչիւր տառը կ'արտայայտուի իր համակարգի յաջորդ տառով, այսինքն՝ «Ա»-ի փոխարէն կը գրուի «Բ», «Լ»-ի փոխարէն՝ «Խ», «Ռ»-ի փոխարէն՝ «Ս», իսկ «Ք»-ի փոխարէն՝ «Ա» և այլն: Կը ներկայանայ հետևեալ ձևով.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ,
բ գ դ ե զ է ը թ ժ,

Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ,
ի լ խ ծ կ հ ձ ղ ճ,

Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ,
մ յ ն շ ո չ պ ջ ռ,

Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք,
ս վ տ ր ց ւ փ ք ա:

Այս աղիւսակով արդէն հեշտ է կարդալ եղբայրագիր ծածկագրութիւնները, եթէ գրութիւններու հեղինակներն անոնց մէջ մտածուած խախտումներ չեն կատարած, որոնք երբեմն կը պատահին: Ծածկագրողներն, ընթերցողները շփոթեցնելու համար, երբեմն կը խառնեն տառերու հերթականութիւնը և յաջորդ տառի փոխարէն՝ կը դնեն նախորդը կամ կամայականօրէն կ'ընտրեն նոյն տառաշարքի (օրինակ՝ տասնաւորներու) որևէ մէկ տառ, որ իր գրաւած տեղով շատ հեռու է ծածկագրուող տառէն:

7. Գումարգիր ծածկագիր. տառը՝ թուական նշանակութեան ուրոյն վերարժէքաւորումով:

Ծածկագրութեան այս տեսակի սկզբունքը շատ պարզ է: Ծածկագրուող տառերը ոչ թէ կը փոխարինեն մէկը միւսը, ինչպէս փոխարինագրերուն մէջ կը կատարուէր, այլ կը բաժնուին երկու և աւելի մասերու ու կը գրուին բաժնուած մասերու տառերով, այսինքն՝ «Դ»-ի փոխարէն գրուած է «ԲԲ», «Խ»-ի փոխարէն՝ «ԻԻ», «Պ»-ի փոխարէն՝ «ՆՆ» և այլն: Իսկ եթէ տառն իր թուական համարժէքով երկու հաւասար մասերու չէ բաժնուած, հետևաբար նաև բաժնուած կէսերը հնարաւոր չեն ըլլար երկու նոյնանման տառերով նշանակել, կ'օգտագործեն տարբեր տառեր: Օրինակ՝ «Հ» տառը կրնայ արտայայտուիլ և՛ «ԼԷԼԷ» և՛ «ԼԽ» ձևերով: Երկու պարագային ալ ընդհանուր թուագումարը 70 է, այսինքն՝ «Հ»: Գումարագիրներու մէջ «Ա» տառը կամ չի ծածկագրուիր, կամ կը նշանակուի լատիներէն «C»-ի, զերոյի («0») և նոյնիսկ ստորակէտի նշաններով: Երբեմն «Ա»-ն կ'արտայայտուի «00» ձևով, երբ 0-ին փաստօրէն կը տրուի կէսի իմաստը և երկու կէսերու գումարով կը հասցուի «Ա»-ն: «O»-ն կրնայ օգտագործուիլ նաև, օրինակ, «Թ» տառը գաղտնագրելով, որ տուեալ պարագային մէջ կը գրուի «ԴՕԴՕ», այսինքն՝ 4 1/2 + 4 1/2 = 9, այսինքն՝ «Թ»:

8. Երկբանալի ծածկագիր՝ տարբեր սկզբունքներու համակցուած, միացուած գործադրումով, երկու բանալի՝ վերծանման երկու եղանակ ունեցող:

9. Աքրոստիքոս (acrostic) սկզբունքի գործադրում:

Աքրոստիքոս, հին ժամանակներուն ոտանաւորներէ սկիզբ առած բանաստեղծական ձև է, որուն տողերու առաջին տառերը, վերէն վար կարդալով, կը կազմեն որևէ բառ կամ արտայայտութիւն: Ան ունի հազարամեակներու պատմութիւն: Բառաեզրի ծագումը յունարէն «ἄκρος»–«եզր» և «στίχος»-«ոտանաւոր» բառերէն է: Հետևաբար աքրոստիքոս կը համարուի բացառապէս առաջին եզրային տառերով կապակցուած ուղղահայեաց տողը: Յաճախ սկզբնատառերէն կը կազմուի այն անձին անուն-մականունը, որուն ձօնուած է բանաստեղծութիւնը: Անցեալին աքրոստիքոսի ձևն օգտագործուած է՝ գրաքննութիւնը շրջանցելու կամ երկի հեղինակին անունը թաքուն տարածելու համար: Կիրարկուած է նաև չափածոյ հանելուկներու մէջ, որուն առաջին տառերէն կազմուած է պատասխանը:

Հայ գրականութեան մէջ աքրոստիքոսի ձևը գործածած են Ներսէս Շնորհալին, Գրիգորիս Աղթամարցին, Եղիշէ Չարենցը և ուրիշներ: Եղիշէ Չարենցն իր «Գիրք ճանապարհի» ժողովածուի մէջ չորս աքրոստիքոս նուիրած է դստեր՝ Արփենիկ Չարենցին:

10. Մեզոսթիքոս (mesostic), լաբիւրինթոս (lapurintos) և թելեսթիքոս (telestico) սկզբունքի գործադրում:

Երկլեզու և գրականագիտական որոշ բառարաններուն մէջ, գրականութեան տեսութեան և տաղաչափութեան վերաբերող քիչ թիւով աշխատանքներուն մէջ աքրոստիքոսէն որոշակիօրէն կը տարբերի տողերու մէջտեղի որևէ տառով կազմուող ուղղահայեաց տողը: Ան կը կոչուի «մեզոսթիքոս» (առանձին պարագաներու մէջ՝ «մեսոստիքոս»): Այս բառին ծագումը նոյնպէս կազմուած է յունարէն՝ «μέσος»- «միջին» և «στίχος»-«ոտանաւոր» բառերէն:

Եթէ մէջտեղը թաքնուած տողը ոչ թէ ուղղահայեաց է, այլ ունի անկանոն դասաւորութիւն, բանաստեղծութիւնը

(կամ ժանրը) կը կոչուի Լաբիւրինթոս: Ասոր մէկ տարատեսակ ալ կը համարուի այն ձևը, երբ յաւելեալ տողը կը կազմուի թեքութեամբ, այսինքն՝ տողերու անկիւնագիծով: Անիկա առաւել յաճախ կ՚անուանեն Անկիւնագծային լաբիւրինթոս:

Վերջապէս, կը պատահին նաև բանաստեղծութիւններ, որոնց ուղղահայեաց տողը կը բաղկանայ եզրային, բայց՝ տողավերջի տառերէն: Անոնք ալ կը կոչուին Թելեսթիքոս (յունարէն «τέλος»-«հեռու» և «στίχος»-«ոտանաւոր» բառերէն):

Շատ հազուադէպ եղած են նաև դէպքեր, երբ նշուած ձևերէն երկուքը կամ քանի մը հատը հանդէս եկած են միևնոյն բնագրին մէջ: Բարդացուած այդ ձևը որոշ ուսումնասիրողներ, մասնաւորապէս ժամանակակից ռուս բանաստեղծ և գրականագէտ Իւան Զուտասովը, կը բնութագրեն որպէս աքրոկառուցուածք:

Մեզոսթիքոսի ձևին հայ բանաստեղծներէն դիմած է Եղիշէ Չարենցն իր «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Պատգամ» բանաստեղծութեան մէջ գաղտնագիրներով. «Ո՜վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

11. Բառերու հակառակ գրութիւն (զէնք – քնէզ):

12. Տառերու միտումնաւոր ձևափոխութիւն՝ մասնիկներ աւելցնելով կամ պակսեցնելով:

13. Այբուբենի փոխարինում մէկ այլ, սակաւ գործածական այբուբենով և այլն:

Հայկական որոշ ծածկագրութիւններու մէջ գործածուած են նաև այլագիր (օրինակ՝ յունարէն) տառեր, արաբական թուանշաններ և այլն: Այլ տեսակներէն են՝ արաբական թուանշանագիր, ճիրանաւոր, շրջագիր, վանկագիր, յունատառ, ներսիսեան, բժշկական, թալիսմանագիր ծածկագրութիւնները:

Կան ծածկագրութեան աւելի բարդ ու խրթին ձևեր, զորս կիրարկած են մասնագիտացած յեղափոխականները, հետախոյզները, լրտեսները և ուրիշներ: Այսպիսի ծածկագրութիւններու բանալին յայտնի է միայն պայմանաւորուած երկու կողմերուն:

Նկատի ունենալով «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» ծնունդին հիմնական պատճառը, որ ի սկիզբէ եղած է հայութեան գերագոյն շահերը պաշտպանելը, Հայ դատի լուծման համար պայքարիլը և ամբողջական հայութեամբ ամբողջական հայրենիք կերտելը, կուսակցութիւնը բազմատեսակ գործունէութիւն ծաւալած է, հազարաւոր գաղափարական նուիրեալներ սուրբ գաղափարի տեսլականով գործած են այս բոլորին իրագործման ի խնդիր:

Անձնազոհ ու նուիրեալ դաշնակցականներ իրենց աննկուն կամքի զօրութեամբ հզօրացուցին եռախորհուրդ սիներու վրայ հանգչող կուսակցութիւնը՝ ՀՅ Դաշնակցութիւնը: Երեք դարերու ընթացքին վստահաբար անապահով ու տագնապալից կեանք մը պիտի հալածէր կուսակցութեան գործունէութիւնը ծաւալող շարքայիններուն՝ սուլթանին, քիւրտին, թուրքին, ցարին, պոլշևիկեան և այլ իշխանութիւններու տիրապետութեան տակ ապրող հայ անհատին, յատկապէս՝ դաշնակցական շարքայինին: Վարձկաններով ու լրտեսներով շրջապատուած, մարտի ընթացքին բազմաթիւ խոչընդոտներու հանդիպելով, յեղափոխականը, սակայն, ամենայն զգուշութեամբ շարունակեց իր առաքելութիւնը՝ զերծ պահելու իր ազգը նման խոչընդոտներէ: Գործադրելով գործունէութեան զանազան ձևեր՝ անոնց գործունէութիւնն արմատապէս իմաստաւորուեցաւ ծածկանուններու, կեղծանուններու, ծածկագիրներու, գաղտնագիրներու կամ ծածկագրութիւններու, գաղտնագրութիւններու գործածութեամբ:

Ծածկանուններու մասին այսպէս կը նկարագրէ Ռուբէն Տէր-Մինասեան (*). «Նկատած եմ, որ մեծ մասով յեղափոխական ընկերները երեք տեսակի կեղծանուններ որդեգրած են: Կենդանական և բնութեան անուններ՝ Առիւծ, Ասլան, Վիշապ, Մասիս, Սիփան, վերջապէս՝ Զաքիրկայ, Քոթոթ և այլն: Այս անունները բնազդօրէն կամ գիտակցօրէն ցոյց կու տան անուանափոխումներու ներքին ձգտումները: Տիտղոսներ՝ Կընեազ, Կոմս, Իշխան, Խան, Պարոն և այլն, որոնք կը հիմնաւորեն անուանափոխներու ձգտումները, որոնք երբեմն կը յարմարին, երբեմն ալ բնաւ չէին յարմարեր: Երրորդ տեսակն ալ պատմական անուններն են՝ Արամ, Տիգրան, Վարդան, Վաչէ, Ճափոն և այլն, որով անուանափոխը գիտակցօրէն կամ անգիտակցօրէն կ՚ուզէ նմանիլ պատմական իր ճաշակին համապատասխան հերոսներուն: Ասոնք կամովին եղած անուանափոխութիւններ են: Բայց չորրորդ տեսակի կեղծանուններ ալ կան, որոնք ակամայ են և չեն ընդունուիր անոնց տէրերուն կողմէ. հարազատը կամ թշնամի շրջապատը անուն մը կը փակցնէ, և այդ անունը պոկել կարելի չէ, օրինակ՝ Քեաչալ, Փաշա, Զաւուշ, Դահիճ, Թանաքճի, Ջուռնաճի և այլն: Այս ակամայ կեղծանուններն արտաքին աշխարհին կը պատկանին. անոնք կը բնորոշեն անձը, դէպքերու անցեալը և ներկան»:

Մեր ուսումնասիրութեան ընթացքին յայտնուեցաւ, որ կան այլ տեսակի կեղծանուններ ևս, որոնք կը յիշուին անձերու ծնունդավայրի և կամ գործած շրջանի անունով, օրինակ՝ Սկքարեցի Սագօ, Կիւմիւշխանեցի Աւօ, Սեբաստացի Մուրատ, և այլն:

Ինչպէս նշուեցաւ, թէ կան կեղծանուններ, որոնք արտաքին աշխարհին կը պատկանին՝ հարազատը կամ թշնամի շրջապատն անուն փակցուցած է: Շատ են այն մակդիրները, որոնք յատկապէս թուրքը և քիւրտը տուած են, ինչպէս՝ Դուման, Ղըրէ Ղոլ և այլն:

Այս խիստ կարևոր գործին համար աւելի քան 25 տարի երկարատև աշխատանք տարած ենք, հաւաքագրած ու դասակարգած ենք դաշնակցական գործիչներու մեծ թիւով ծածկանուններ: Հաւաքած ու կազմած ենք հազարներու հասնող ծածկանուններ՝ օգտուելով գրաւոր և բանաւոր տեղեկութիւններէ ու աղբիւրներէ: Տարիներու սպառիչ, դժուարին աշխատանք, որ կը պահանջէ տքնաջան աշխատասիրութիւն, համբերութիւն ու բծախնդրութիւն: Առայժմ դժուար է ստոյգ տալ թիւն ընդգրկուած ծածկանուններու, բայց ստուար այս բառարանն իր ծիրին մէջ ներառած է ֆետայիներու, ազատամարտիկներու, յեղափոխական գրականութեան, արուեստի ու մշակոյթի, պետական, քաղաքական, հասարակական գործիչներու, ինչպէս նաև զանազան մարզերու մէջ գործած դաշնակցականներու ծածկանուններ:

Հետազօտական այս աշխատութիւնն առանձնայատուկ կերպով կը ներկայացնէ ՀՅԴ-ի ֆետայական, հայդուկային, յեղափոխական, ազգային-ազատագրական, գրական, մարտական, պետական ու տարբեր բնագաւառներու մէջ գործող նուիրեալներու փաղանգը:

Այս բառարանը, բնականաբար, կ'ընդգրկէ արևելահայ և արևմտահայ, անցեալի ու ներկայի բոլոր դաշնակցականներու ծածկանունները:

««Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան ծածկանուններու բառարան» աշխատասիրութիւնը Դաշնակցութեան գործունէութեան ամբողջ ժամանակահատուածն ընդգրկած է՝ ծնունդէն մինչև օրս: Աշխատութիւնը պատմութեան մէջ եզակի է իր տեսակով՝ նկատի առնելով պատմութիւն դարձած կուսակցութիւնն ու իր զօրագունդի թիւը:

Դաշնակցականներու ծածկանունները հաւաքածոյի վերածելու այս աշխատանքը վստահաբար պիտի դիմագրաւէր շատ մը դժուարութիւններ ու բարդութիւններ: Ուստի կարելի եղած սահմաններուն մէջ փորձած ենք հարթել բոլոր այդ հարցերը: Սակայն կրնան վրիպած ըլլալ կարգ մը անուններ: Անթերի կամ կատարեալ գործ մը կատարած ըլլալու յաւակնութիւնը չունինք բնաւ: Կը գիտակցինք, որ մեր հասողութենէն վրիպեցան հայոց գոյամարտը կերտողներէն կարգ մը անուններ, արժանաւոր դէմքեր, որոնք, անտարակոյս, յաւելեալ արժէք մը պիտի տային այս աշխատութեան, եթէ իրենք ալ ներառուէին:

«Հայ յեղափոխական դաշնակցութիւն կուսակցութեան ծածկանուններու բառարան» աշխատասիրութեան մէջ նկատի առնուած են հետևեալ բնագաւառները.

– ցուցակ «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան շարքայիններու ծածկանուններուն, կեղծանուններուն,

– ցուցակ ՀՅԴ մարմիններու և դաշնակցականներու կողմէ տարբեր շրջաններու և վայրերու տրուած ծածկանուններուն, կեղծանուններուն,

– ցուցակ ՀՅԴ մարմիններու ծածկանուններուն,

– ցուցակ ՀՅ Դաշնակցութեան մարմիններու կողմէ կազմակերպուած գործողութիւններու ծածկանուններուն,

- ցուցակ կարևոր ծածկագրութիւններու և այլ անհրաժեշտ տեղեկութիւններու:

Նշուած դաշնակցականներու ծածկանունին կողքին տրուած է բուն անունն ու ազգանունն ամբողջութեամբ: Միևնակները նկատի առած ենք այբբենական շարքով:

Անուններու շարքին անոնց կցուած են ծննդեան և նահատակութեան, մահուան կամ ալ առևանգումի թուականները: Մէկէ աւելի թուականներ գտնուելու և շփոթ ստեղծելու պարագային՝ արձանագրած ենք երկուքն ալ (նկատի առած, որ երկու աղբիւրներու ալ հեղինակները լաւատեղեակ են անձի կենսագրութեան): Իսկ թուականը չգտնուելու պարագային, հարցման նշանով ճշդած ենք անոր չգոյութիւնը կամ անգտանելի ըլլալը: Արձանագրած ենք նաև մէկէ աւելի ծածկանուններ կրողներու շարքը: Այստեղ կարևորութեամբ կ'ընդգծենք, որ կարգ մը ծածկանուններու կողքին, ըստ հնարաւորութեան, յղում կատարուած է ծածկանունի ծագման և յառաջացման շարժառիթի համառօտ պատմութիւնը, որ ա՛լ աւելի կը հարստացնէ և կ'արժևորէ բառարանը:

Այս աշխատասիրութեան մաս կը կազմեն նաև այն դաշնակցականները, որոնք հետագային հեռացուած են կուսակցութեան շարքերէն և կամ սպաննուած՝ իբրև պատիժ: Ինչպիսիք են Միհրան (ծանօթ՝ «Միհրանական շարժում»), Շահան Նաթալի, Ակսել Բակունց, Սաֆօ, Վազգէն Շուշանեան և ուրիշներ:

(*) Տէր-Մինասեան Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», 6-րդ հատոր, էջ 250:

««Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան ծածկանուններու բառարան» աշխատութեան մէջ տրուած հիմնական հինգ բնագաւառներն, իրենց ենթագլուխներով, ստորև կը ներկայացնենք առանձին-առանձին, հակիրճ տեղեկութիւններով և անոնց հետ միասին կու տանք քանի մը օրինակ:

Ա. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցութեան շարքայիններու ծածկանուններ, կեղծանուններ:

– Աբրօ, Ռ. Սևեան, Շտաբի Աբրամ*, Աբրամ, Աբրամովիչ, Ա. Սևեան 1875-1946, Աբրահամ Գիւլխանդանեան:

*Գանձակի մէջ Շտաբի (Զինուորական մարմինի) պետը եղած է, և անոր համար ալ ժողովուրդը զինք կոչած է Շտաբի Աբրամ անունով:

Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, ԻԴ տարի, թիւ 4, յուլիս-օգոստ., 1946, էջ 85:

– Անտոն*, Սմբատ Օհանեան*, Սիմոն Զաւարօֆ** կամ Զաւարով, Սարգիս Անտոնեան***, 1866-1913, Սիմոն Զաւարեան:

*Սիմոն Զաւարեանի կուսակցական անուններն են՝ Անտոն և Սմբատ Օհանեան ծածկանունները:

Տե՛ս «Ազդակ-շաբաթօրեակ», Պէյրութ, 30 սեպտեմբեր, 1949, էջ 30:

Տե՛ս նաև «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Բ հատոր, էջ 34 ա:

** Սիմոն Զաւարօֆ ծածկանունով 1903 թուականին կ'այցելէ Կիլիկիա՝ իբրև ռուս գիտնականներ:

Տե՛ս «Ազդակ-շաբաթօրեակ», Պէյրութ, 30 սեպտեմբեր, 1949, էջ 30:

Տե՛ս նաև «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Բ հատոր, էջ 34 ա:

*** Սիմոն Զաւարեանի յեղափոխական անուններէն է Սարգիս Անտոնեանը:

Տե՛ս «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», յաւելուած «Հայրենիք» ամսագրի, հրատ. ՀՅԴ Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, հ. 1, 1934, էջ 113:

– Արշակ Վռամեան*, Վարազ, Վահապ[ը]**, Փալթոսըզ***, Նեռ****, Ա. Բակուր****, Օգիմդա****, 1871-1915, Օննիկ Դերձակեան:

* Օննիկ Դերձակեան. գրական ծածկանունով՝ Արշակ Վռամեան:

Տե՛ս «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Ա հատոր, էջ 43 բ:

** Կուսակցական ծածկանունով՝ Վահապ:

Տե՛ս «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան

համար», Ա հատոր, էջ 43 բ:

***Օննիկ Դերձակեան տնական, առանց բաճկոնի ըլլալուն համար, Պոլսոյ մէջ ստացած էր Փալթոսըզ մակդիրը:

Տե՛ս «Անմահներուն հետ Վասպուրական մեր աշխարհի մէջ», Խոսրով Թիւթիւնճեան, 1974, Պէյրութ, էջ 80:

**** Օննիկ Դերձակեան առաջին անգամ սկսած է գրել Արփիար-Շահնազարի «Հայրենիք»-ին (Պոլիս) մէջ «Օգիմդա» կեղծանունով (ՕԳԴ, սկզբնատառերն իր բուն անուն-ազգանունին՝ Օննիկ Գէորգեան-Դերձակեան):

«Ազատամարտ»-ի «Առտուան տոմսեր»-ուն մէջ՝ «Նեռ» ստորագրութեամբ: «Ազատամարտ»-ի մէջ ևս յօդուածներ գրած է «Ա. Բակուր» ստորագրութեամբ:

Տե՛ս «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Ա. հատոր, էջ 43 բ:

– Արամ Մանուկեան*, Արամ փաշա**, 1879-1919, Սարգիս (Սերգէյ) Յովհաննիսեան:

* Սարգիս կամ Սերգէյ Յովհաննիսեանը Վանի մէջ դարձաւ Արամ Մանուկեան:

Տե՛ս «Արամը», հրատարակութիւն ՀՅ Դաշնակցութեան, 1969, էջ 146:

** Յովհաննիսեան Վանի նահանգապետ եղած շրջանին Վանի ժողովուրդը՝ հայ, քիւրտ և տաճիկ, բոլորն ալ զինք կը կոչէին «Արամ փաշա»:

Տե՛ս «Ալան Ստեփանեանի յուշերը», գրի առաւ Հայկ Աճեմեան, Թեհրան, տպ. Մոդերն, 1966, էջ 177:

– Գարեգին Խաժակ*, Բաբա-Գասպար կամ Պապա-Գասպար**, Բաբայեան***, Ա. Արծիւեան****, 1876-1915, Գարեգին Չագալեան:

*Գարեգին Չագալեանի գրական ծածկանունը Գարեգին Խաժակ է:

Տե՛ս «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Ա հատոր, էջ 47 բ:

**1897 թուականին (ըստ հեղինակին- Ա.Գ.) եկած է Պոլիս՝ իբրև յեղափոխական գաղտնի գործիչ Պապա Գասպար ծածկանունով:

Տե՛ս «Իմ յուշերը», Վահան Փափազեան, հատոր երկրորդ, Պէյրութ, 1952, էջ 133:

***Կուսակցական ծածկանունով՝ Բաբա, Բաբայեան:

Տե՛ս «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Ա հատոր, էջ 47 բ:

****Դաշնակցական մամուլին մէջ գրած է Ա. Արծիւեան և Բաբա Գասպար կեղծանուններով:

Տե՛ս «Յեղափոխական ալպում», 1965, թիւ 11, էջ 301:

– Էլլէն*, Թոփալ (Թոփալեան), Նաֆթաթ, Սամուէլ Ֆայն, Միխայլով, Միխայիվօ, Էլլէն Լայլ*, 1859-1905, Քրիստափոր Միքայէլեան:

*Քրիստափոր Միքայէլեանի կուսակցական ծածկանունը գիտենք, որ Էլլէն է, սակայն ան իր գրած նամակներուն տակ ստորագրած է նաև Էլլէն Լայլ: Այդ նամակներէն մէկը Քրիստափոր ուղղած է Յոնան Դաւթեանին (23 յունիս 1896-ին):

Տե՛ս «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», յաւելուած «Հայրենիք» ամսագրի, հրատ. ՀՅԴ Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, հ. 1, 1934, էջ 392:

– Ռոստոմ, Քոթոթ*, Աբրահամեան**, Արտաշէս Ռոստոմեան***, Միքայէլ****, Ն.Ս.*****, Արիստակէս Ղարախանեան, Արմէն Կասբարեան, 1867-1919, Ստեփան Զօրեան:

*Ուսանողական շրջանէն սկսեալ՝ իր յաղթանդամ կազմուածքին համար ընկերները զինք Քոթոթ անուանած են, այդ անունը կը մնայ վրան մինչև վերջ:

Տե՛ս «Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան 1890-1950», Պոսթըն, 1950, էջ 106:

**Ստեփան Զօրեան 1886 թուականին իր բուն անունով մուտք գործած էր Վարշաւայի մօտակայքը գտնուող Ալեքսանդրեան գիւղատնտեսական ուսումնարանը, ուր քանի մը ամիս բանտարկուած ու ապա աքսորուած էր Կովկաս: Հետևաբար, 1887 թուականին ան կու գայ Պաքու, աւարտական քննութիւն կու տայ և կը մտնէ Պետրովսկայա ակադեմիան: Ստեփան ստիպուած կ՚ըլլայ Ստեփան Աբրահամեան անունով քննութիւն յանձնել, որովհետև Զօրեանը զրկուած էր արդէն ուսումը շարունակելու իրաւունքէն:

Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, ԺԲ տարի, թիւ 1, նոյեմբեր, 1933, էջ 75:

***Օգոստոս 1885-ին, Արտաշէս Ռոստոմեան կեղծանունով կ՚անցնի Կարին՝ որպէս ծպտեալ վաճառական, որ, իբրև պարսկահպատակ, ռուսական սամովարներ պիտի ծախէր այնտեղ:

Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, ԽԲ տարի, թիւ 7, յուլիս, 1964, էջ 47:

****Ստեփան Զօրեան Ժընև ապրած է Միքայէլ անունով:

Տե՛ս «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», յաւելուած «Հայրենիք» ամսագրի, հրատ. ՀՅԴ Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, հ. 1, 1934, էջ 111:

*****ՀՅ Դաշնակցութեան 10-ամեակին առիթով «Դրօշակ»-ի տասնամեակի համարին մէջ գրած է «Հայկական կարմիր խաչ» վերնագրով յօդուած մը և «ՆՍ» ստորագրութեամբ («ՆՍ», հաւանօրէն, «Նոր Սանասարեան» վարժարանի անունով- Ա.Գ.):

Տե՛ս «Ռոստոմ», հրատարակութիւն ՀՅԴ-ի, Պէյրութ, 1979, էջ 621:

Բ. ՀՅԴ մարմիններու և դաշնակցականներու կողմէ տարբեր շրջաններու և վայրերու տրուած ծածկանուններ, կեղծանուններ:

Այս ցուցակին մէջ յիշատակուած են տեղանուններ, կուսակցութեան հիմնադրութեան օրէն սկսեալ, հասնելով մինչև մեր օրերը, որոնք հրապարակուած են դաշնակցական մամուլով, գրականութեամբ և յայտարարութիւններով միայն: Ժամանակի ընթացքին այս անուններն անուանափոխուած են: Այդ անուանափոխումները կատարուած են զանազան պատճառներով: Պէտք է ըսել, որ կարգ մը տեղանուններ փոխարինուած են կուսակցական գործունէութեան ընթացքին նահատակուած դաշնակցականներու անուներով: Տեղին է նշել, որ նոյն անունը կրող կարգ մը այլ շրջաններ ալ գոյութիւն ունեցած են: Այս բնագաւառին մէջ ընդգրկուած կարգ մը շրջաններու

ծածկանուններ կը ներկայացնենք՝ իբրև օրինակ.

Այգեստան – Գանձակի շրջան,

Բարձրաբերդ – Կարին,

Դաշտ – Կիլիկեան կուսակցական տեղանուն մը,

Լեռնավայր* – Կիլիկիա (Հալէպի շրջան),

Լեռնավայր – Փասատենա (ԱՄՆ),

Ծաղիկ** (Կոռուածաղիկ, Լիս, Վիշապ) – Պոլիս և շրջակայքը,

Կոռուածաղիկ (Ծաղիկ, Լիս, Վիշապ) – Պոլիս և շրջակայքը,

Կոռուածաղիկ*** – Հոս կը ներառուին Դուրանի (Մուշ) հետևեալ գիւղերը՝ Կառնէն, Ձրիկ, Ծափնայ, Առինջվանք, Առինջ, Օղունք, Նորշէն, Սոխում, Ալիզըչնան, Մոկունք, Դերգեվանք, Առաղ, Բերդակ, Հաւատորիկ, Առուարինջ, Խասգեղ, Շմլակ, Քոլոսիկ, Բնդրխներ և Մառնիկ:

*Լեռնավայրը, որ նախապէս Կիլիկիոյ կուսակցական տեղանունն էր, Կիլիկիոյ պարպումէն սկսեալ՝ կը ներկայացնէր Սուրիոյ կազմակերպութիւնը (առաջին երկու տասնամեակներուն՝ Լիբանանը ներառեալ):

Տե՛ս Տասնապետեան Հրաչ, «ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. ժողովը (1890-1924)», Աթէնք, 1988, էջ 172:

**Ծաղիկ (կրճատումը՝ Կոռուածաղիկի), Լիս (կրճատումը՝ Պոլիսի) և, անշուշտ, Վիշապ մերթ ընդ մերթ կը գործածուէին՝ իբրև Պոլսոյ կուսակցական տեղանուն կամ անոր Պատասխանատու մարմինի ծածկանուն:

Տես՛ Տասնապետեան Հրաչ, «Քրիստափոր Միքայէլեանի նամակները», Պէյրութ, 1993, էջ 398:

***Այս Կոռուածաղիկ ծածկանունը երկրորդ շրջանի մը ծածկանունն է՝ իր մէջ ներառելով ընդամէնը 20 գիւղ:

Տե՛ս Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հատոր 6-րդ, էջ 111:

Պէտք է ընդգծել, որ այս բնագաւառին մէջ ներառուած են կուսակցական մարմիններու ծածկանուններն ալ, քանի որ տեղ մը նոյն անուններով յիշուած են՝ իբրև շրջան, վայր կամ մեկուսի կոմիտէութեան, կամ կեդրոնական կոմիտէութեան անուն:

Ժամանակի ընթացքին այս անունները ևս անուանափոխուած են:

Ստորև կը ներկայացնենք քանի մը օրինակ.

Անդրանիկ – Ֆրեզնոյի (ԱՄՆ) կոմիտէութիւն,

Արսէնեան – Տրապիզոնի կոմիտէ,

Ջոհ – Պոլսոյ կոմիտէ,

Համազասպ – Ֆրեզնոյի (ԱՄՆ) կոմիտէութիւն,

Հայկանուշ – Թաւրիզի կոմիտէ,

Գ. ՀՅԴ մարմիններու ծածկանուններ:

Այս մարմիններն այն մարմիններն են, որոնք յառաջացած են ընդհանուր կամ այլ ժողովներու ընդմէջէն: Ստորև կը ներկայացնենք այդ մարմիններու քանի մը անունները միայն.

– «Հրաւէր» կոմիտէ,

– Դաշնակցութեան կամքը ներկայացնող մարմին,

– Կովկասեան պատասխանատու մարմին,

– Ցուցական պատասխանատու մարմին,

– Կեդրոնական զինուորական մարմին կամ զինուորական բիւրո:

Դ. ՀՅ Դաշնակցութեան մարմիններու կողմէ կազմակերպուած գործունէութիւններու ծածկանուններ:

Այս ցուցակը կ՚ընդգրկէ բոլոր տեսակի կուսակցական նախաձեռնութիւններ՝ սկսելով գաղտնի զինագործարանի, մոսին հրացանի և կամ այլ կազմակերպուած աքթերու և գործողութիւններու անուններն՝ իրենց մանրամասն բացատրութեամբ: Այդ բազմազան նիւթերու վերնագրերէն հոս կը ներկայացնենք քանի մը հատը միայն.

– Ձինամթերք և «Ծծման եղանակ»,

– «Խարիսխ» զինագործարան,

– «Մարդասիրական»,

– «Դրախտ» և «Կախէթ»,

– Ծածկագիր շիֆր՝ («Մայր Արաքսի ափերով»),

– «Եսիչերիներ»,

– «Նժոյգի գործողութիւն»,

– «Նեմեսիս» գործողութիւն:

Բնականաբար, շարքը երկար է: Ամէն մէկ խորագրին տակ, վստահաբար, կայ երկար բացատրութիւն տուեալ նիւթին շուրջ:

Ե. Կարևոր ծածկագրութիւններ և այլ անհրաժեշտ տեղեկութիւններ:

Այս բաժինն, ընդհանրապէս, կ՚ընդգրկէ զանազան անուններու, ինչպէս՝ Ֆետայի կամ Ֆետայիներ, Հայդուկ, Վալադ և այլն, նաև՝ այլ դէպքերու, հաստատութիւններու, կազմակերպութիւններու, շարժումներու կամ գործունէութիւններու բացատրութիւններ: Ահա անոնցմէ քանի մը օրինակ.

«Պզտիկ դէպք»,

Կովկասեան նախագիծ,

Միհրանական շարժում,

«Անջատական շարժում»,

«ՀՅ Դաշնակցութեան գործ» կամ «Դաշնակցութեան գործ»,

«Հայկական Նիւրեմպերկ»:

««Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան ծածկանուններու բառարան»-ի պատառիկներ»-ը եզրափակելով՝ հարկ կը համարենք ըսելու հետևեալը. այնքան ատեն որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը գործէ յեղափոխական շունչով աշխարհի ամբողջ տարածքին՝ հասնելու իր իդեալներուն՝ ամբողջական հողին ու իրաւունքներուն, հետևաբար պիտի շարունակուի յեղափոխական գործընթացը և անոր ընդմէջէն արիասիրտ գործիչներու և մարտիկներու ծնունդն՝ անոնց ծածկանուններով, ինչպիսին էր երեկ և այսօր, նաև գալիք բոլոր օրերուն:

Վերջապէս, այս աշխատանքը թող պարտք սեպուի երկիւղածօրէն անոնց սուրբ անունին բիւրբիւրաւոր, անուանի թէ անանուն, ծանօթ թէ անծանօթ, թաղուած թէ անթաղ, առևանգուած, ողջակիզուած, կացինահարուած, անձնասպան եղած, կախաղան բարձրացած, քաղաքական բանտարկեալներուն, ողջ թէ մեռած գաղափարակիրներուն, որոնք արժանի դրօշակիրները հանդիսացան և մեծագոյն բաժինն ունին և մոլեռանդաբար պահելու հաւատարմութիւնը՝ ՀՅ Դաշնակցութեան անբիծ և արիւնոտ դրօշին: ■

Հայկական պատվիրակությունների ակնկալիքները և Սևրի դաշնագիրն ըստ Կ.Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի հրապարակումների (1918-1920 թթ.)

Մարիամ Վռամի Հովսեփյան
ԳԱԱ ՊԻ առաջատար գիտաշխատող բանասիրական գիտությունների թեկնածու

Պոլսահայ գրեթե բոլոր պարբերականներն այս կամ այն չափով անդրադարձել են Փարիզի Խաղաղության վեհաժողովի աշխատանքներին, հայ պատվիրակների գործունեությանը, Սևրի պայմանագրին և հարակից կարևոր այլ հիմնահարցերի: Այս հոդվածի շրջանակներում մեր վերլուծության համար հիմք ենք ընդունել 1918-1920 թվականներին Կ. Պոլսի առաջատար՝ «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի հրապարակումները, որոնք այդ բախտորոշ ժամանակահատվածում ոչ միայն պատկերացում են տվել ծավալված իրադարձությունների մասին, այլև նպաստել են իրենց ընթերցողների շրջանում հասարակական կարծիքի ձևավորմանը: Դրանցում արտահայտվել են նաև կուսակցական տեսակետներ Հայկական հարցի վերաբերյալ, քանի որ մասնավորապես «Ճակատամարտը» դաշնակցական ուղղվածություն ուներ, «Ժամանակը» ներկայացնում էր Հայ ռամկավարների կուսակցության մոտեցումները: Պետք է ասել, որ «Ճակատամարտը» խնդրո առարկա հարցերի մասին պատկերացում է տվել լրագրողական տարբեր ժանրերի՝ լուրի, թղթակցության, ռեպորտաժի, վերլուծական հոդվածի, հարցազրույցի միջոցով: Ընդ որում, դրանք պատրաստվել են առավելապես պարբերականի աշխատակիցների ու արտերկրի սեփական թղթակիցների կողմից: Գերակշռել է սեփական արտադրանքը, թեև եղել են նաև արտատպումներ հայաստանյան և ֆրանսիական, անգլիական ու ամերիկյան թերթերից: «Ժամանակ» օրաթերթում, ընդհակառակը, մեծ թիվ են կազմում հիմնականում ֆրանսիական պարբերականներից վերցված և թարգմանաբար տպագրված լուրերն ու վերլուծական հոդվածները: Եթե «Ճակատամարտի» խմբագրականներում շատ են անդրադարձները հայկական պատվիրակությունների աշխատանքին, նրանց տարաձայնություններին, Սևրի պայմանագրին և հայության երկու հատվածներում դրա արձագանքներին, ապա «Ժամանակը» դեպքից դեպք էր առաջնորդողներում տեղ տալիս հիշյալ թեմաներին՝ առավելապես կուսակցական դիրքերից հնչեցնելով գնահատականներ, ինչը բնորոշ չէր «Ճակատամարտին»: Տեղին է հիշատակել, որ վերջինս մշտապես կարևորել է միասնականության դերը թե՛ Փարիզում գործող հայ պատվիրակների, թե՛ Հայաստանի ու Կ.Պոլսի ազգային կառույցների աշխատանքի արդյունավետության համար: Այս լույսի ներքո էլ գրվել են օրաթերթի նյութերը՝ ձգտելով նախապատվություն չտալ այս կամ այն գործչին և լինել չեզոք՝ անգամ, եթե գրում էր Ավետիս Ահարոնյանի կամ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեսակետների մասին: Այնինչ բոլորովին այլ էր «Ժամանակի» մոտեցումը: Հայ պահպանողականների շունչը զգացվում էր ամենուրեք: Իհարկե, չկային կոնկրետ անձերին վիրավորող արտահայտություններ և նույնիսկ Պողոս Նուբարը կամ Ավետիս Ահարոնյանն, որպես գործող անձինք, երևում էին միայն նրանց պաշտոնական հանդիպումների վերաբերյալ տպագրված լուրերում: Թերթի կուսակցական դիրքորոշումները շեշտադրվում են մասնավորապես Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանում 1919 թվականի մայիսի 28-ին Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայտարարության ընդունումից հետո:

1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մուդրոսի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի առաջին հանրապետությունը պատերազմի ելքը փաստաթղթային տարբերակներով որոշելու միջազգային գործընթացների մեջ է ներառվում: Այդ մասին լուրեր կային «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերում: Պարբերականում կարդում ենք, որ Ժնևում գործող հայկական մամուլի գործակալությունը պաշտոնական աղբյուրներից տեղեկացել էր այդ մասին[1]: «Ֆրանսա, համախորհուրդ իր դաշնակիցներուն հետ, Հայաստանը ճանչցած է իբրև պատերազմիկ և դաշնակից պետութիւն: Հայերը առաջին պահէն իսկ յարեցան դաշնակիցներու դատին և չորս տարիէն աւելի կռուեցան անոնց կողքին: Հայաստանի

ներկայացուցիչներին, ուրեմն, պիտի թոյլատրուին աթոռ ունենալու Հաշտութեան համաժողովին մէջ»[2],- գրում էր «Ճակատամարտը»: Փարիզի Խաղաղության վեհաժողովին[3] Հայաստանի մասնակցելու մասին տեղեկությունը թերթում երկրորդվում էր Բաքվի Հայկական կոմիտեի ստացած հեռագրով, որը տպագրել էին կովկասահայ թերթերը[4]: «Ժամանակի» թղթակիցն իր հերթին ընթերցողներին վստահեցնում էր, թե զայրանալու կամ հուսահատվելու պատճառ չէր կարող լինել այն, որ Հայաստանը ներկայացուցիչ չուներ համաժողովում. «Հայերը վրդովուելու պատճառ չունին, Հաշտութեան ժողովին մէջ Հայաստանի կողմէ պաշտօնապէս ներկայացուցիչ չգտնուիլը նշմարելով: Այդ պարագան չի նշանակեր երբեք, թէ Հայկական Դատը լքուած է... Ժողովը որոշ յանձնառութիւն մը կ՚ընէ՝ զբաղելու «կազմուելու վրայ եղող» պետութիւններու խնդիրներովն ալ, որոնց կարգին նաև, անշո՛ւշտ, Հայաստանինը, որուն Դատին լքուած ըլլալուն ո՛ր և է ո՛չ իրաւական, ո՛չ երեւութական նշան չի կայ՝ ժողովին կողմէ»[5]:

«Ճակատամարտը» բավական ինտենսիվորեն է անդրադարձել հայկական երկու պատվիրակությունների գործունեությանը Փարիզի Խաղաղության վեհաժողովում: Գերակշռում են, սակայն, Պողոս Նուբարի և նրա նախագահությամբ գործող արևմտահայերի Ազգային պատվիրակության աշխատանքները լուսաբանող նյութերը: Դրանց մեջ արտացոլված էին Առաջին աշխարհամարտում հաղթած պետությունների միջոցով Հայկական հարցը՝ հօգուտ հայության լուծված տեսնելու հայ ժողովրդի հույսերը: Իհարկե, տարիների հեռավորությունից մենք այսօր կարող ենք փաստել, որ թե՛ մեր պետական այրերը, թե՛ ազգային ու կուսակցական գործիչները չկարողացան մեծ տերություններին որևէ կերպ շահագրգռել և մնացին միայն խնդրագրեր ուղարկող պետության ու ժողովրդի ներկայացուցիչների կարգավիճակում: Այնինչ, պատերազմում պարտված Թուրքիային հաջողվեց կրկին իր կողմը գրավել թուրքական պետության մասնատման մասին խոսող երկրներին և նրանց շուտով պարտադրեց ճանաչել սեփական սահմանների անձեռնմխելիությունը՝ նորից իրենից կախման մեջ դնելով շահամոլ եվրոպական ու ռուսական դիվանագետներին ու պետական պաշտոնյաներին[6]:

Արևմտահայերի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, որը թեև բավական փորձառու քաղաքական գործիչ էր, բայց, օրինակ, ֆրանսիական թերթերից մեկին տված հարցազրույցում Հայկական հարցի համար կարևորում էր միջազգային խորհրդաժողովների և հաղթանակած պետությունների դերը[7]: «Ինչ որ գիտենք, մեզ ենթադրել կուտայ, թէ համաձայնական պետութիւնները մեր իղձերը պիտի ընդունին և գոհացում պիտի տան մեր ցանկություններուն»[8],-

ահա այսպես լավատեսորեն տրամադրված՝ հայտարարում էր Պողոս Նուբարը: Նա երկու հանգամանք էր առանձնացնում.

- *«առաջին կէտ մը, որուն վրայ չենք կրնար զիջիլ, սա է, թէ որ և է կերպով և որ և է պայրուակով չենք ուզեր մնալ թուրք տիրապետութեան տակ,*
- *մեր երկրորդ բաղձանքը սա է, որ հայկական նոր պետութիւնը, որ հանրապետական ձեւը պիտի որդեգրէ, դրուի մեր ազատարարներուն պաշտպանութեան տակ, որոնք իրենցմէ մէկու պաշտօն յանձնեն խնամակալ դառնալ մինչեւ այն օրը, ուր մենք, ամբողջապէս կազմակերպուած, ինքզինքնիս կարող զգանք մենք զմեզ կառավարել»[9]:*

Պողոս Նուբարը փարիզյան «Էնֆորմասիոն» թերթում հանդես էր եկել Ազգային պատվիրակության նպատակների և հայության ակնկալիքների վերաբերյալ ուշագրավ հայտարարությամբ[10]: Այստեղ ևս նա նշում էր, որ Հայաստանի ճակատագիրը կախված էր դաշնակիցների կամքից. «Անոնք միշտ իրենց համակրութիւնը հաւաստեցին այս մարտիրոս ազգին և բազմիցս յայտարարեցին, թէ իր ճակատագիրը ուղղակի կը շահագրգռէ իրենց պատերազմական նպատակները»[11]: Անվանի հասարակական-քաղաքական գործիչը հատկապես մեծ հույսեր էր կապում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի[12] հետ, ում ջանքերի շնորհիվ, Նուբարի կարծիքով, Հայկական հարցը դրական լուծում էր ստանալու[13]: 1919 թվականի փետրվարի 7-ին Փարիզից ուղարկված թղթակցության մեջ տպագրված էր Վ. Վիլսոնի պատասխան նամակը հայերի պատվիրակությանը, որտեղ նա հույս էր տալիս Հայկական հարցն արդար ճանապարհով լուծելու՝ հայության ակնկալիքներին[14]: «Խորհրդաժողովին մէջ հայերդ ներկայացուցիչ չունիք, որովհետեւ ազգերու ընտանիքին մաս չէք կազմեր տակաւին: Մեծ համակրութիւն կայ

ձեր դատին համար, և կրնաք վստահ ըլլալ, որ ան պիտի պաշտպանուի այնպէս, ինչպէս պիտի ըլլար, եթէ ներկայացուցիչ մը ունենայիք»[15] ,- գրում էր ԱՄՆ նախագահը: Ընթերցողներն այդ թղթակցությունից նաև տեղեկանում էին այն փաստի մասին, որ ամերիկյան պատվիրակությունը հատուկ հանձնախումբ էր ստեղծել[16]: Այն սերտորեն պետք է համագործակցեր հայ պատվիրակների հետ՝ փորձելով դառնալ «հայ պահանջներուն խողովակը հաշտութեան խորհրդաժողովին առջեւ»[17]: Ի դեպ, թերթի փարիզյան թղթակիցը վստահեցնում էր, որ նմանատիպ մի մասնախումբ էլ որոշել էին կազմել Անգլիայի պատվիրակության ներկայացուցիչները[18]: Միացյալ Նահանգների նախագահի դրական վերաբերմունքը հայ ժողովրդի պահանջների նկատմամբ դրսևորվել էր փետրվարի 12-ին արևմտահայ պատվիրակների համար նրա կազմակերպած ընդունելության ժամանակ[19]: Նա Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին և պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյանին հավաստիացրել էր. «Պիտի աշխատիմ ձեր դատը պաշտպանել: Ես միայն ամերիկացիի մը տիպարն եմ: Դուք գիտեք, թէ որքան բուռն համակրութիւն կայ մեր երկրին մէջ ձեր ժողովրդեան մասին: Մեր ժողովուրդին եռանդուն փափագն այն է, որ ես ապահովեմ ձեր ազգին անկախութիւնը և անոր իրաւունքները պաշտպանեմ»[20]: Այս հանդիպման մասին լուր կար նաև «Ժամանակ» օրաթերթում[21]: Այն տպագրել էր Նյու Յորքում գործող Հայաստանի անկախության համար կազմված հայկական կոմիտեից ստացած հեռագիրը, որտեղ մեջբերված էր այդ կազմակերպությանը Վիլսոնի տված հետևյալ խոստումը.«Պիտի ջանամ բոլոր կրցածս ընել հայերուն ի նպաստ»[22]: Վուդրո Վիլսոնը շուտով ստիպված էր վերադառնալ Միացյալ Նահանգներ[23]՝ այնտեղ ծայր առած հասարակական-քաղաքական ընդվզումների և Հայկական հարցի նկատմամբ աստիճանաբար փոփոխվող տրամադրությունների ֆոնին[24]: Իրադարձությունների հետագա զարգացումը հայամետ այդ գործչին թույլ չի տալիս կյանքի կոչել հայությանն օգտակար լինելու նրա ծրագրերն ու մտահղացումները[25]: «Ճակատամարտը» պարբերաբար ներկայացրել է այդ ամենը՝ գերազանցապես լուրի և թղթակցության ժանրերի միջոցով: Միևնույն ժամանակ թերթը շարունակել է հանգամանորեն ներկայացնել Փարիզի Խաղաղության վեհաժողովի ընթացքը, քննարկումները, հատկապես Հայկական հարցին վերաբերող ելույթները, զեկույցները, այդ խնդրով շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ զանգվածային լրատվամիջոցների անցկացրած հարցազրույցները, Հայկական միացյալ պատվիրակության գործունեությունը:

Փարիզի Խաղաղության վեհաժողովում տեղի էր ունենում ազդեցության ոլորտների բաժանում, իսկ հայկական պատվիրակություններին, ըստ պոլսահայ վերոհիշյալ օրաթերթերի հրապարակումների,



Պողոս Նուբար

կարծես մտահոգում էին միայն նեղ ազգային խնդիրները, առ այսօր անիրականանալի «Ծովից ծով» Հայաստան ունենալու ծրագիրը: Հայաստանի առջև, այնինչ, առաջին հերթին ծառացած էին երկրի անվտանգության և նորաստեղծ պետականության պահպանման հարցերը: Դրանց լուծման ուղիների շուրջ էին հիմնականում վեճեր ծագում Պողոս Նուբարի, Ավետիս Ահարոնյանի և նրանց գաղափարակիցների միջև: Այդ անհաշտ մթնոլորտը, Նուբար փաշայի մաքսիմալիզմը և Ավետիս Ահարոնյանի ծայրահեղության հասնող լավատեսությունը խորհրդաժողովի մասնակիցների և ղեկավար կազմի համար անընդունելի էին: Այս կապակցությամբ ահա թե ինչ է գրել Գալուստ Գալոյանն իր «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» մենագրության մեջ. «Խորհրդաժողովում մեծ տերությունները որքան կարևոր նշանակություն էին տալիս այն հարցին, թե ում ազդեցության ոլորտում պետք է գտնվեր ապագա անկախ Հայաստանը, նույնքան հեգնանքով էին վերաբերվում հայոց պատվիրակության առաջարկներին, որոնք հետագայում Լլոյդ Ջորջի[26] կողմից բնութագրվեցին «Պողոսի (Պողոս Նուբար փաշայի) կախարդական հեքիաթներ»»[27]:

Ընթերցողների համար առանձնահատուկ նշանակություն ուներ Փարիզի վեհաժողովում Հայկական միացյալ պատվիրակության ներկայացրած հիշատակագրի պատճենի տպագրումը պոլսահայ գրեթե բոլոր օրաթերթերի էջերում[28]: Այս փաստաթղթում համառոտ կերպով շարադրված էին հայության պահանջները: Ահա թե մասնավորապես ինչ կետեր էին ներառված, ըստ «Ճակատամարտի» բնութագրման, «հայ ազգային պահանջների ծրագրում»[29].

- անկախ հայկական պետության ճանաչում, ընդ որում, այդ երկիրը պետք է կազմվեր յոթ կուսակալությունների, Կիլիկիայի և Հայաստանի առաջին հանրապետության տարածքների միավորմամբ,

• այդ նորաստեղծ հայկական պետությունը պետք է գտնվեր դաշնակից տերությունների և ԱՄՆ-ի կամ Ազգերի դաշնակցության երաշխավորության տակ,

• Փարիզի Խաղաղության վեհաժողովը դաշնակից տերություններից որևէ մեկին պետք է մանդատ կամ պաշտոն տար՝ առավելագույնը 20 տարով Հայաստանին օժանդակելու և օգնելու համար,

• Փարիզի Խաղաղության վեհաժողովը պետք է նյութական որոշակի գումարի չափով հատուցում սահմաներ՝ դարմանելու համար ջարդերի, կողոպուտների, ավերումների և տարագրության հետևանքով հայ ժողովրդի կրած վնասները,

• Հայաստանը պետք է պատրաստ լիներ կրելու պատերազմից առաջ «քօնսօլիտէ» եղած օսմանյան հանրային պարտքի իր բաժինը,

• Հայաստանի մանդատը վերցնող պետությունը պետք է ստիպեր հայերի հողամասերը գրաված թուրք-թաթարական իշխանություններին հրաժարվել դրանցից, պետք է զինաթափեր նրանց, պատժեր կողոպուտին մասնակցած և հայ զոհերի լքված գույքը յուրացնողներին,

• արևմտահայ գավառից պետք է վտարեր համիդյան ու երիտթուրքական վարչակարգերի կողմից այնտեղ բնակության համար բերված մուհաճիրներին կամ իսլամ դավանող զանգվածներին, վաչկատու ցեղերին և կարգազանցներին,

• պետք է ձեռնարկեր միջոցներ՝ բռնի իսլամացված հայ կանանց, տղամարդկանց, երեխաներին և մասնավորապես հարեմներում պահվող հայուհիներին հայ համայքին վերադարձնելու ուղղությամբ[30]:

Համազգային պատվիրակության նշված հիշատակագրում առաջարկվում էր Թուրքիային պարտավորեցնել, որ հանձն առներ ու վճարեր հայերից բռնագրավված գույքի և ունեցվածքի փոխարժեքն ու հայ իրավատերերին տրվելիք որոշակի տուգանքը՝ վերահաստատելով հայկական անշարժ կալվածքները (եկեղեցիներ, վանքեր, վարժարաններ) դրանց նախկին տեղերում՝ ետ վերադարձված դրանց հողատարածքով ու գույքով, որոնք բռնագրավել էին հայ հասարակությունից[31]:

Համահայկական պահանջների այս ծրագրում լուծում էր նախատեսված նաև անժառանգ մնացած հայերի ազգային և անհատական գույքերի հետագա ճակատագրի համար: Ըստ այդմ, դրանք պետք է հանձնվեին Կ. Պոլսի հայ կրոնական իշխանություններին, որոնց իրավունք էր տրվելու դրանք գործածել կամ վաճառել և ստացած արդյունքով հոգալ իրենց հոգևոր համայնքի կարիքները[32]: Տարագիր կամ օտար ափերում բնակվող հայերին թույլ պետք է տրվեր որ հինգ տարվա ընթացքում նրանք կամ նրանց զավակները դառնային «հայ քաղաքացիներ»[33]:

Պահանջների հիշյալ հիշատակագրի վերջաբանում այն կազմողները հայտնում էին հայության լիակատար

Ավետիս Ահարոնյան

վստահությունը Փարիզի Խաղաղության համաժողովի «արդարապաշտ» ոգուն՝ չտարակուսելով, որ «ան պիտի նուիրագործէ իրենց ազգային պահանջներուն այս ծրագիրը»[34]:

«Ժամանակ» օրաթերթը երկու համար[35] էր հատկացրել համահայկական հիշատակագրին՝ կարծիք հայտնելով, թե իր ընթերցողները «գերազանց շահագրգռութիւնով մը պիտի ողջունեն այս պատմական մեծ արժեքով վաւերաթուղթը, որով այնքա՛ն հետաքրքրուած է ամէն հայ միտք, եւ որ կոչուած է ամէնէն մեծ դերը կատարելու Միացեալ Անկախ Հայաստանի ճակատագիրին վրայ, յիշատակագիրը կը լուսաւորէ հայութիւնը մտատանջող բոլոր խնդիրները՝ բանաձեւելով հայ ազգին բաղձանքները»[36]: Հատկապես կարևորվում էր փաստաթղթի այս հատվածը, որը չի կորցրել իր արդիական հնչեղությունը.«Հայկական խնդիրը լոկ տեղական և ազգային խնդիր մը չէ: Ան կը շահագրգռէ Եւրոպայի խաղաղութիւնը, և իր լուծումէն կախում պիտի ունենայ խաղաղումը, առաջդիմութիւնը և բարգաւաճումը մօտաւոր Արեւելքի»[37]:

Դրական տրամադրվածությամբ և մեծ հույսերով էր Փարիզ գործուղվել Հայկական միացյալ պատվիրակությունը, թեև ամիսներն անցնում էին՝ նրանց համար ստեղծելով դաշնակից պետություններից հիասթափվելու բազում պատճառներ: Իհարկե, հայ դիվանագետ այս և Հայաստանի առաջին հանրապետության հասարակական-քաղաքական այլ գործիչները վաղուց պետք է դասեր քաղած լինեին եվրոպական պետությունների, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Թուրքիայի հետ հարաբերությունները կառուցելիս և Հայկական հարցը դիվանագիտական սեղանին դնելիս: Չէ՞ որ խաղադրույք կատարելու համար հայ ժողովուրդն ու հայոց պետությունը չունեին անհրաժեշտ նյութական միջոցներ և որոշիչ այլ լծակներ: Համենայն դեպս, կամաց-կամաց տրամադրվածությունը և աշխարհաքաղաքական հանգամանքները փոխվում են՝ ի վնաս հայության ու Հայաստանի: Ի դերև

են լինում Փարիզի համաժողովին մասնակցող հայկական երկու պատվիրակությունների հույսերը, ջուրն են լցվում նրանց բոլոր անպտուղ ջանքերը: Երկփեղկվում են անգամ այդ պատվիրակություններն իրենց հետապնդած նպատակներով: Բնականաբար, այս իրադարձություններին անմասն չէր մնում «Ճակատամարտ» օրաթերթը: Հատկապես ուշագրավ էր «Հայկական դատը Հաշտության ժողովին առջև» վեց մասից բաղկացած վերլուծական հոդվածաշարը[38], որտեղ մանրամասն պատկերացում էր տրվում համահայկական պատվիրակության պահանջների մասին, ինչպես նաև հիմնավորապես հերքվում էին թուրքական պատվիրակության կողմից Փարիզի Հաշտության համաժողովին ներկայացված կեղծ թվային տվյալները և հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության վարած քաղաքականության վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող «փաստերը»: Առանձին հոդվածաշար էլ նվիրված էր Կիլիկիայի ճակատագրի կապակցությամբ Հայկական միացյալ պատվիրակության պահանջներին[39]:

«Ճակատամարտը» 1919 թվականի հունիսին 2-ին ուշագրավ հարցազրույց էր տպագրել Փարիզի Հաշտության համաժողովի Հայկական միացյալ պատվիրակության անդամների հետ առնչված և այդ քաղաքում տեղի ունեցած արևմտահայերի առաջին համագումարին իբրև Կ. Պոլսի ներկայացուցիչ մասնակցած Արմենակ Բարսեղյանի հետ[40]: Այդտեղ շեշտվում էր այն միտքը, որ մինչև հունիսի վերջ պետք է իր լուծումն ստանար Հայկական հարցը: Ա. Բարսեղյանը մասնավորապես ասում էր. «Հայկական հարցը շատ լաւ վիճակի մէջ է: Մեր խնդիրը շահուած է արդէն ամիսներ առաջ: Պիտի ունենանք միացեալ և անկախ Հայաստան մը, 6 նահանգները, Տրապիզոնը և Կիլիկիան»[41]: Նա նաև համոզմունք էր հայտնում, որ Հայաստանի մանդատը Ազգերի ընկերակցությունը հանձնելու էր ԱՄՆ-ին, որտեղ անգամ Ծերակույտի անդամները համակրանք ունեին հայոց խնդրի նկատմամբ[42]: Ա. Բարսեղյանը ոչ պաշտոնական հավաստիացումների հիման վրա ասում էր, որ հայկական պատվիրակությունն այն հաստատ համոզումն ուներ, թե «իր կողմէ Հաշտութեան համաժողովին ներկայացուած հայկական պահանջներու քարտէսը եթէ ոչ նոյնութեամբ, գոնէ մեծագոյն մասով իրականութիւն պիտի գտնէ»[43]: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ դիվանագիտական ոլորտում հայ պատվիրակները չէին կարողանում սթափ և իրատեսական գնահատականներ տալ Հայկական հարցին առնչվող իրողություններին, Փարիզի Խաղաղության վեհաժողովին մասնակցող պետությունների վարած քաղաքականությանը և որդեգրած մարտավարությանը: Ա. Բարսեղյանը, սակայն, մատնանշում էր, իր կարծիքով, համահայկական պատվիրակության անարդյունավետ գործունեության 2 պատճառ՝ դրամական միջոցների անբավարարությունը և Հայաստանից հեռու, մեկ այլ երկրի մայրաքաղաքում բուն աշխատանքը ծավալելը[44]:

«Ժամանակ» օրաթերթը նույնպես տպագրել էր հարցազրույցներ Կ. Պոլսում գործնական այցով գտնվող այն անձանց հետ, որոնք Փարիզում հանդիպել էին միացյալ պատվիրակության անդամներին: Պարբերականի՝ Փարիզում աշխատող սեփական թղթակիցների հարցազրույցները վերջիններիս հետ իրենց կարևոր տեղն էին գտել «Ժամանակի» էջերում: Օրինակ՝ 1919 թվականի հուլիսին թերթում հարցազրույց կար Փարիզի հայկական խորհրդաժողովի պատվիրակ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի հետ, որն արդեն վերադարձել էր Կ. Պոլիս[45]: Նա որևէ խոսք չէր ասել Հայաստանի Առաջին հանրապետության պատվիրակության աշխատանքների մասին, բայց դրվատանքով էր հիշատակել Պողոս Նուբարին, ինչը միակողմանի պատկերացում էր տալիս ընթերցողներին իրավիճակի վերաբերյալ: Սրբազանը մասնավորապես ասել էր հետևյալը. «Իշխան Պօղոս Նուպար կատարելապէս իր գործին նուիրուած անձնաւորութիւն մըն է»[46]:

Հարցազրույցներից մեկը բուլղարահայ փաստաբան Ս. Հինդլյանի հետ էր, որը Ֆրանսիայի մայրաքաղաքում մասնակցել էր Արևմտահայ խորհրդի կազմակերպած համաժողովին, հանդիպումներ էր ունեցել հայկական պատվիրակության անդամների հետ և եկել էր Կ. Պոլիս: Նա հիշատակության արժանի էր համարում այն հանգամանքը, որ հայկական երկու պատվիրակությունները համատեղ, այլ ոչ թե անջատ-անջատ էին Հիշատագիրը ներկայացրել Խաղաղության վեհաժողովում, քանի որ միասին պետք է հետապնդեին «Միացեալ Անկախ Հայաստանի դատը»[47]: Հինդլյանի կարծիքով՝ Հայկական հարցի լուծման համար էական նշանակություն էին ունենալու հայկական պատվիրակությունների ներկայացրած Հիշատակագիրը և Միացյալ Նահանգների նախագահ Վ. Վիլսոնի տրամադրվածությունը, որն արտահայտվել էր նրա հետևյալ արտահայտության մեջ.«Հայերը ապահովաբար պիտի ունենան իրենց հայրենիքը, իրենց գծած սահմաններով»[48]: Գրեթե մեկ տարի անց Հինդլյանը մեկ այլ հարցազրույցում բավական վիճահարույց տեսակետ էր արտահայտել, որին չէր հակադարձել թերթի թղթակիցն՝ այդպիսով կարծես իր համակարծիք լինելը ցույց տալով: Անդրադառնալով Սևրի դաշնագիրը միայն Ա. Ահարոնյանի կողմից ստորագրվելու փաստին՝ նա ասում էր. «Դաշնագիրը պ. Պողոս Նուպարի կողմէ չստորագրուիլը թուրք դիւանագիտութեան մէկ յաղթանակն էր, որովհետեւ այսպէսով անիկա կը յաջողի Հայկական հարցը փակել իր հողամասին մէջ»[49]: Պետք է փաստենք, որ անվանի փաստաբանը և թերթի խմբագրությունը, փաստորեն, չէին կարողացել օբյեկտիվորեն և իրատեսորեն գնահատել այդ կարևոր միջազգային փաստաթղթի դերն ու իրական նշանակությունը Հայկական հարցի և հայ ժողովրդի ճակատագրի համար: Նույնը չի կարելի ասել «Ճակատամարտ» օրաթերթի համար, որտեղ իրատեսական հողի վրա էին արվել այս պատմական արժեք ունեցող փաստաթղթի հետ կապված վերլուծությունները:

Երկու օրաթերթերը, թեև տարբեր համամասնությամբ, բայց անդրադարձել էին Փարիզում գործող հայկական պատվիրակությունների միջև եղած հակասություններին և հակամարտությանը: Իսկ դրանց հիմքում ընկած էին թե՛ անձնական նկրտումները և առաջինը երևալու ցանկությունը, թե՛ գաղափարական տարաձայնությունները: «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.» վերնագրով գրքում Արարատ Հակոբյանը, վերլուծելով պատվիրակությունների միջև առկա անհամաձայնությունները, նշում էր, որ ի սկզբանե նրանք միասնական պետք է լինեին՝ համատեղ ջանքերով նպաստելով Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացմանը: «Եթե հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունը, Հայաստանի պատվիրակությունը հանդես էին գալիս համեմատաբար չափավոր պահանջներով՝ առավելագույնը արևմտահայ վեց նահանգ, իսկ նվազագույնը՝ երեք նահանգ՝ ծովային ելքով, ապա Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան, Հայ ս. ռամկավարները, նրանց գաղափարակից ու ձայնակից ՀԺԿն, որը կոալիցիայի մեջ էր ՀՅԴ-ի հետ, ինչպես նաև գաղութահայ Ս.Դ. հնչակյանները պահանջում էին ծովից ծով Հայաստան՝ թուրքահայ յոթ նահանգներ՝ Կիլիկիայի չորս սանջակների հետ միասին»,- կարդում ենք այդ մենագրության մեջ[50]: Պատմաբանը շեշտում էր, որ Նուբար փաշան և արևմտահայ ռամկավարները միմյանցից տարանջատում էին Տաճկահայ դատը և Ռուսահայաստանի հարցը՝ գտնելով, որ սկզբնապես անհրաժեշտ էր հասնել Արևմտյան Հայաստանի, այդ թվում՝ Կիլիկիայի անկախությանը: «Մեր կարծիքով՝ Պողոս Նուբար փաշայի, Հայ ռամկավարների ու Հայ ժողովրդականների սխալն այն էր, որ կարևորություն չտալով Հայաստանի Հանրապետության գործոնին, որի առանցքի շուրջ հենց պետք է միավորվեին հայկական միացյալ հողերը, և ստեղծվեր Միացյալ և Անկախ Հայաստան, նրանք Արևմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) հարցը կտրում էին իրատեսական հիմքից և Միացյալ, Անկախ Հայաստան ասելով՝ հասկանում էին տաճկահայ նահանգները և Կիլիկիան միասին: Վերջիններիս հավակնություններից մեկն էլ այն էր, որ նրանք ապագա Միացյալ Հայաստանի կառավարության ղեկին տեսնում էին միայն իրենց պաշտելի Պ. Նուբար փաշային՝ նրա գլխավորությամբ»[51]:

Ավետիս Ահարոնյանի նամակներից կարելի է գալ այն եզրակացության, որ հանրապետության ղեկավարները փարիզյան բանակցություններում հաջողության հասնելու նպատակով որոշել էին չարել հարաբերությունները Պողոս Նուբարի հետ: Նա Ալեքսանդր Խատիսյանին Նուբարի մասին գրել էր հետևյալը. «Երբ նա զգում է, որ իշխանությունը ձեռքից գնում է, ընդունակ է ամենավատ արարքների, մինչև հանցանք: Ահա թե ինչու միակ ելքը մենք նկատում ենք, այս դրությունից դուրս գալու, համաձայնության մեջ է՝ այս շատ վտանգավոր ծերունու հետ»[52]: 1919 թվականի դեկտեմբերի 9-ին Հայաստանի կառավարությունը Պողոս Նուբարին այդ բովանդակությամբ նամակ էր ուղարկել, որտեղ առաջարկել էր, հանուն համազգային մեծ երազի, մի կողմ թողնել բոլոր խանգարող հանգամանքներն ու ցանկությունները: Մեջբերենք մեկ հատված. «Ինչ էլ լինի Ձեր վճիռը, Դուք միջոցներ ձեռք կառնեք Ձեր հեղինակավոր ազդեցությամբ թույլ չտալու հրապարակային պայքարի վերսկսման, որ արտաքին աշխարհում այնպիսի տպավորություն կ'թողնե, որ իբր թե մեր մեջ գոյություն ունի էական անհամերաշխություն ու պայքար ազգային-քաղաքական հիմնական հարցերի վերաբերմամբ: Ընդհակառակը, մոտիկ ծանոթությունը Ձեր ներկայացուցիչների հետ ցույց տվեց, որ Հայաստանի քաղաքական այսօրվա ճակատագրին վերաբերող գլխավոր հարցերի նկատմամբ մեր մեջ հայացքների նույնություն է տիրում, և նկատվող անհամաձայնությունն ավելի շուտ արդյունք է փոխադարձ անվստահության, ինչ որ դժվար չպիտի լինի վերացնել գործի ընթացքում»[53]:

Այս բանավեճերն ու քննարկումներն իրենց արձագանքն էին գտել պոլսահայ մամուլի էջերում: «Մենք անժամանակ և անօգուտ կը գտնենք այդ վէճերը: Անձնաւորութիւններու վերագրածները մեզի չեն հետաքրքրեր: Երբ հարցը անձնական հանգամանքէն դուրս կ'ելլէ, կը մնայ հետևեալը. Հայաստանը միացեալ և անկախ, Հայաստանի Հանրապետութիւն մը գոյութիւն ունի, որ լաւ, թէ վատ, մեր իրականութեան միակ ուժն է և միակ իրական երկիրը: Մենք այդ կ'ընդունինք որպէս կորիզը մեր պետութեան»[54],- «Ճակատամարտ» օրաթերթում գրում էր Կարո Սասունին: Նա կարծում էր, որ Հայաստանի կառավարությունն ու խորհրդարանը կարող էին կազմվել արևմտահայերի և արևելահայերի հավասար մասնակցությամբ կամ՝ մեկի ու մյուսի առավելությամբ, տարբեր կուսակցությունների անդամներով. «Միայն ըլլան միացեալ խորհրդարան, միացեալ կառավարութիւն, միացեալ դիւանագիտութիւն և միացեալ դիմադրութիւն: Առանց այս հաւաքական ուժին՝ մենք չենք կրնար դիմադրել մեր բազմաթիւ թշնամիներուն»[55]:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Հոդվածագիրը ճղճիմ էր համարում որոշ անհատների անձնավորված պայքարը ապագա միացյալ Հայաստանի վարչապետի պաշտոնի համար այն դեպքում, երբ կրկին պատմության նժարին դրված էր հայ ժողովրդի գոյատևման ծանր կշռաքարը[56]: «Վէճի անհատական, կուսակցական բնոյթ կրելը աւելի կը հաստատուի, երբ նկատի առնենք Փարիզ հրատարակուող «Ժողովուրդի ձայն» թերթին յուլիս 31ի խմբագրականը, որով կը հաւաստէ, թէ Փարիզի 2 պատուիրակութեանց միջեւ համաձայնութեան բոլոր կէտերը ճշտուած են: Միայն թէ, կ'աւելցնէ, վէճի նիւթը սա կէտն է, որ Ազգ. պատուիրակութեան նախագահը և Հայաստանի վարչապետը կրնան միեւնոյն անձնաւորութիւնը ըլլալ: Ուրեմն…մնացած է այն հարցը, թէ պ. Պօղոս Նուպար կրնա՞յ իր վրայ կեդրոնացնել վարչապետի և պատուիրակութեան նախագահի պաշտօնները»[57],- հանգամանորեն բացատրում էր Սասունին: Նա դիմում էր այս խնդրում երկու պատվիրակություններին կամ գաղափարական երկու տարբեր մոտեցում ունեցողներին այն կոչով, որ կարողանային գտնել հաշտության եզրեր՝ հրաժարվելով պաշտոնամոլությունից և եսասիրությունից, քանզի կենաց-մահու մարտեր էին մղվում Հայաստանի Առաջին հանրապետության սահմանների մոտ, ու վտանգված էին հայրենիքը և հայ ժողովուրդը[58]: «Ժամանակ» օրաթերթում սակավաթիվ են հայկական երկու պատվիրակությունների հակասությունների վերաբերյալ գրված նյութերը: Դա հավանաբար պայմանավորված էր եղել այն հանգամանքով, որ խմբագրակազմը բնական էր համարել գաղափարական տարաձայնությունները, տարակարծությունները: Իրադրությունը փոխվել էր, սակայն, Միացյալ և Անկախ Հայաստանի մասին ընդունված հայտարարությունից հետո, երբ Հայ ռամկավարներն ու նրանց գաղափարախոս «Ժամանակն» իրենց դժգոհությունն էին հայտնել: Նրանք անընդունելի էին համարել այն, որ հաշվի չէին առնվել Պողոս Նուբարի և «ողջ» արևմտահայության տեսակետները, թեև իրականում կրկին առաջ էին քաշել ապագայում կազմվելիք Միացյալ և Անկախ Հայաստանում Նուբար փաշայի վարչապետության հարցը: Մեջբերենք հատված նման բովանդակություն ունեցող հայտարարություններից մեկից, որը Պողոս Նուբարին էր ուղարկել Հայ ռամկավար կուսակցության Կովկասի կենտրոնական կոմիտեի վարչությունը: Ահա թե ինչ էր գրված այնտեղ. «Կովկասի սահմաններում ապրող թրքահայութիւնը, ինչպէս նաեւ ռուսահայութեան ստուար մասը այդ առիթով յուզած են, տեսնելով… Բռնաբարումն ժողովրդական կամքի և իրաւունքի, և պահանջում են հայկական կառավարութիւնից օրինականացնել Մայիս 28-ի ակտը՝ անմիջապես բանակցութեան մտնելով Պարիզի թրքահակ պատուիրակութեան հետ, որի համաձայնութիւնից յետոյ միայն կազմել Միացեալ Հայաստանի ժամանակաւոր կառավարութիւն և պարլամենտ, որոնց և տալու է իրաւունք ժամանակաւորապէս վարելու ընթացիկ գործերը, մինչեւ նոր և օրինական կառավարութեան կազմուիլը»[59]: Պարբերականում տպագրված Հայ ռամկավար կուսակցության Կ. Պոլսի խորհրդի հայտարարության մեջ նշվում էր, որ Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությունը նրանք չէին համարում ամբողջական Հայաստանի կառավարությունը, իսկ «թրքահայութեան միակ օրինաւոր և իրաւասու մարմինն է Բարիզի Ազգ. պատուիրակութիւնը, Հայ ռամկ. կուսակցութիւնը իր կատարեալ վստահութիւնը կը յայտնէ Բարիզի Ազգ. պատուիրակութեան և անոր պատկառելի նախագահ Պօղոս Նուպար փաշային»[60]: Գործ և խոսք» խմբագրականն էլ հանիրավի էր համարել այն, որ Պողոս Նուբարն «այնքան անտեղի կերպով քննադատուեցաւ կառավարական կուսակցութիւններու օրկաններու կողմէ իշխանութեան բաղձալուն համար»[61]:

Չնայած հայկական երկու պատվիրակությունների տարաձայնություններին և անհաշտություններին՝ նրանք պարբերաբար փորձում էին միավորել իրենց ջանքերը, թեև հազվադեպ էր դա ստացվում[62], օրինակ, երբ 1919 թվականի նոյեմբերին փարիզյան մամուլից տեղեկացել էին Անգլիայի և Ֆրանսիայի՝ Հայկական հարցում նոր դիրքորոշման մասին[63]: Հայ պատվիրակների համար անակնկալ էր եղել այն, որ այդ պետություններն այլևս չէին ցանկանում նպաստել արևմտահայերի անկախությանը և թուրքական բռնապետությունից նրանց ազատագրմանը. «Նկատի առնուած է Թրքական խնդիրը: Անգլիա և Ֆրանսա միասին պիտի գործեն անոր համար: Անոնց քաղաքականութիւնը անփոփոխ կը մնայ՝ ազատելու համար թրքական տիրապետութենէն ոչ-թուրք շրջանները և զօրաւոր կերպով պաշտպանելու համար այն ազգերը, որոնք, ինչպէս հայերը, ցրուած են բազմաթիւ թուրք նահանգներու մէջ, առանց խօսելու մասնաւորապէս հայկական երկրի մը մասին»[64]: Ինչպես տեղեկացնում էր Հայկական տեղեկատու դիվանը, Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը Հայկական միացյալ պատվիրակության անունից բողոքի նամակ էին ուղարկել Հաշտության վեհաժողովին, որն էլ իր էջերում տպագրել էր «Ճակատամարտը»[65]: Այնտեղ մասնավորապես գրված էր. «Հակառակ դաշնակիցներու հակակշռին՝ թրքական տիրապետութիւնը անկարելի պիտի ըլլար Հայաստանի աղէտէն վերապրողներու համար: Մենք վստահ ենք, թէ դաշնակիցները այսքան մեծ անարդարութիւն չպիտի գործեն: Անընմբռնելի պիտի ըլլար, որ Արաբիան, Միջագետքը, իսլամական շրջաններ, Սուրիա՝ մեծ մասով իսլամներով բնակուած, ազատագրուին թրքական տիրապետութենէն, իսկ քրիստոնեայ Հայաստանը, ամենէն ճնշուած ազգը, չազատագրուի թրքական լուծէն»[66]:

Ինչպես նշված է ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմություն» մատենաշարում, այդ միջազգային համաժողովում «հայկական դիվանագիտությունը կարող էր շոշափելի արդյունքների հասնել միայն այն դեպքում, եթե գործեր միասնաբար և ունենար ռազմավարական ու մարտավարական ճիշտ դիրքորոշում»[67]:

Ավետիս Ահարոնյանը, վերլուծելով հայկական

երկու պատվիրակությունների աշխատանքը և մասնավորապես Պողոս Նուբարի հետ պարբերաբար անհամաձայնություններ ունենալու դրվագները, իրենց անհամաձայնությունների ու վեճերի հիմնական պատճառը համարում էր Նուբար փաշայի փառասիրությունը և դրանից բխող նկրտումները: Ահարոնյանի կարծիքով՝ դրանք առավելապես կտրված էին իրականությունից ու չէին բխում Հայկական հարցին առնչվող հասարակական-քաղաքական իրողություններից և հայաստանյան իրավիճակից: Հերթական վեճի ժամանակ, երբ փաշան նշել էր, թե Հայաստանի առաջին հանրապետությունը հնարավոր է, որ կործանվեր, ուստի ինքը պետք է Փարիզի վեհաժողովում ներկայացներ Թուրքահայաստանը, Ահարոնյանն ասել էր հետևյալը. «Դուք, շարունակելով ձեզ յայտարարել Թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ, թուլացնում էք մեր կառավարութիւնը, որ թիւրքական դաշնագիրն իսկ նկատում է որպէս Միացեալ Հայաստանի միակ կառավարութիւնը: Եւ յետոյ դուք շարունակ հակասութեան մէջ էք: Դուք այդ կառավարութիւնը չէք համարում համայն Հայաստանի, բայց եւ Խաղաղութեան համաժողովում նոյն կառավարութեան բանակին էք յենում, երբ պէտք է Թիւրքաց Հայաստանի հողը գրաւել: Յետոյ, ես լսել եմ, որ դուք փորձում էք անգլիական ու ֆրանսիական կառավարութիւնների միջոցով ձեր դիրքը, իբրեւ Թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ, ամրապնդել: Սա լաւ ճամբայ չէ, որ դուք ընտրել էք, ո՛չ ձեզ համար եւ ոչ հայ հայրենիքի»[68]: Նա նաև տանջանք էր համարել «գործակցել Փաշայի հետ, նորից տեսնուել, նորից ժողովներ անել, դիմումներ կատարել միասին»[69], քանի որ Նուբարը պահանջում էր ամեն մանրուք իր հետ քննարկել, համաձայնեցնել, ուզում էր իր ստորագրությունը լիներ դրանց տակ, իսկ նման պահվածքը միշտ չէ, որ տեղին էր: Պողոս Նուբարի՝ Միացյալ Հայաստանի կառավարության և Փարիզի հայկական պատվիրակության ղեկավար լինելու, երկրի կառավարմանը վերաբերող հարցերում գրեթե միանձնյա իշխելու փառասիրական ձգտումները Սիմոն Վրացյանն էլ պայմանավորում էր նրա քաղաքական ու գաղափարական կողմնորոշումներով: Նաև վստահեցնում էր, որ հենց դրանց պատճառով միասնական դիրքորոշում չէր ձևավորվել նույնիսկ Միացյալ ու Անկախ Հայաստանի մասին 1919 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանի ընդունած հայտարարության վերաբերյալ Նուբար փաշայի կողմնակիցների և հայկական իշխանության ներկայացուցիչների միջև: «Նուպարեանների համար մենք նախ եւ առաջ սօցիալիստներ էինք ու յեղափոխականներ, որոնք մեծ պետութիւնների աչքին վստահութիւն չունին: Եւ որովհետեւ նրանց համոզումով Հայաստանի փրկութիւնը միայն մեծ պետութիւններից է կախուած, ապա, ուրեմն, սօցիալիստների մնալը պետութեան գլխին երբէք թոյլատրելի չէր: Բացի այդ, մենք, իբրեւ սօցիալիստներ, պէտք է ձգտէինք որոշ ընկերային բարենորոգումներ իրականացնելու, այսինչ, իրենց ներկայացրած հոսանքը՝ հայ մեծատունների եւ դրամատէրերի շրջանները, որոնց համար Հայաստանը ամենից առաջ նաեւ հարուստ շահաստան է, չէր կարող հաշտուել այն մտքի հետ, որ հայկական պետութեան ղեկը իրենց ձեռքին չգտնուի»[70],- գրում էր Վրացյանը:

Ամիսներ անց 1920 թվականի օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում կնքվում է հայ ժողովրդի դարավոր երազանքներն ամփոփող պայմանագիրը[71], որով Արևմտյան Հայաստանի տարածքների մեծ մասը վերադարձվելու էր հայությանը: Դրանց գումարվելու էին նաև Թուրքիայի որոշ հայաբնակ տարածքներ, իսկ Տրապիզոն նավահանգստով ապահովվելու էր ապագա Միացյալ Հայաստանի ելքը դեպի Սև ծով[72]: Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթը մշտապես տեղեկատվություն էր տպագրել Փարիզում ընթացող հաշտության դաշնագիրը կնքելու համար տարվող բանակցությունների, դրանցում հայկական և թուրքական պատվիրակների ունեցած ներդրման, կազմվելիք փաստաթղթի վերաբերյալ հնչող կարծիքների և տեսակետերի մասին: Օրինակ՝ պարբերականում զետեղված էր Հաշտության համաժողովին թուրքական պատվիրակության տված պատասխանը, որտեղ ֆիքսված էր Թուրքիայի՝ Արևելյան նահանգները (այն է՝ Արևմտյան Հայաստանը) Հայաստանին չհանձնելու պահանջ-ցանկությունը[73]: Վերջին ժամ» խորագրի ներքո ընթերցողներին տեղեկացվում էր, որ «Հաշտութեան համաժողովին տրուած թրքական պատասխանը, շատ մը մերժումներու կարգին, կը մերժէ նաև Հայաստանին կցել «Արեւելեան նահանգները»»[74]: Տպագրել էին նաև Թուրքիայի կառավարությանը Համաժողովի անունից ուղարկված պատասխանն առ այն, որ «դաշնակիցները չեն կրնար ո եւ է փոփոխութիւն մտցնել դաշնագրի այն պայմաններուն մէջ, որոնք ազատ Հայաստանի մը ստեղծումը կը տրամադրեն այն սահմաններով, զոր արդար կերպով պիտի ճշտէ Միացեալ Նահանգներու նախագահը»»[75]: Թերթում իր անչափ սպասված տեղն էր գտնել ոչ միայն օգոստոսի 10-ին Սևրից ստացված հեռագիրը հաշտության դաշնագիրն ստորագրելու մասին[76], այլև օգոստոսի 11-ին Փարիզից Ավետիս Ահարոնյանի ուղարկած հեռագիրը Կ.Պոլսում Հայաստանի առաջին հանրապետության ներկայացուցիչ Պ. Թահիթաջյանին[77]: Նա հպարտությամբ էր գրում, որ ինքն էր Հայաստանի անունից ստորագրել հայ ժողովրդի համար այդ պատմական կարևորություն ունեցող փաստաթուղթը. «Սէվրի մէջ մեր դաշնակիցներուն հետ ստորագրեցի Միացեալ Հայաստանի անկախութիւնը նուիրագործող թրքական դաշնագիրը: Այս հանդիսաւոր գործողութիւնը, որ կը ճանչնայ հայ ազգին ազատութիւնն ու անկախութիւնը, մեր սիրտը կը լեցնէ հրճուանքով ու ջերմագին երախտագիտութեամբ բոլոր անոնց հանդէպ, որոնք փառքով ինկան հայրենիքին համար»[78]: Այն, որ Սևրի դաշնագիրն ստորագրել էր ոչ թե արևմտահայ պատվիրակության ներկայացուցիչ Պողոս Նուբարը, այլ արևելահայ գործիչ Ա. Ահարոնյանը, օրաթերթը համարում էր օրինաչափ,

քանի որ, ըստ միջազգային իրավունքի նորմերի, նա Հայաստանի լիազոր պատվիրակը և հայկական միակ պետության պաշտոնական ներկայացուցիչն էր Փարիզի Հաշտության վեհաժողովում[79]: «Հարցը այն չէ, թէ ստորագրողը ռուսահայ է, թէ թրքահայ, այլ այն, որ մենք ունինք պետութիւն, կառավարութիւն, պատուիրակութիւն, որոնք արտաքին աշխարհին առջեւ կը ներկայացնեն միայն մէկ դատ: Դաշնագիրը ստորագրուեցաւ, բայց անոր տրամադրութիւնները գործադրելու համար ասպարէզ պիտի գան ոչ թէ պատահական մարմիններ, այլ բոլորէն ճանչուած պետութիւնը, որ շարժման մէջ պիտի դնէ իր զօրքը և ժողովրդական ամբողջ ուժերը»[80],- խմբագրականում այսպես էր իր տեսակետը ներկայացնում պարբերականը:

«Ժամանակ» օրաթերթն իր հերթին պատմական օր էր համարել 1920 թվականի օգոստոսի 10-ը, երբ Սևրում ստորագրված պայմանագրի հանդիսավոր արարողությունը կարծես կոչված էր. «ամբողջ հայ ազգին համար նոր ժամանակներու արշալոյսներ արփաւեւտելու»[81]: Պարբերականի մասնավոր թղթակիցը Փարիզից մանրամասներ էր հաղորդել օգոստոսի 15-ին այդ կապակցությամբ ֆրանսահայերի կազմակերպած միջոցառումներից, ի թիվս որոնց Հայ հանրապետական պատվիրակության շենքում տեղի ունեցած պաշտոնական ընդունելությունից: Դրանց մասնակցել էին նաև Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը: Վերջինն իր ելույթում Սևրի դաշնագրի կնքումը բնութագրել էր իբրև հայոց պետության հիմնասյուն: «Ասկէ ետք չկան ո՛չ թրքահայ, ո՛չ ռուսահայ: Ա՛լ դադրի թող մանաւանդ արտասահմանի տգեղ գրապայքարը: Ամէն ինչ երկրի համար և երկրի մէջ: Ո՛չ մէկ բան երկրէն դուրս և երկրին դէմ... Ապրի՛ Հայաստան»[82]: Իր խմբագրականներում թերթն իրավացիորեն այն միտքն էր զարգացնում, թե Սևրի պայմանագրի կնքումով «Հայկական հարցը դեռ վերջնապէս եւ իրապէս չլուծուեցաւ»[83]: Հայաստանի առաջին հանրապետությանն սպառնացող վտանգներ կային, որոնց շարքում նշվում էին սահմանների խնդիրը, բոլշևիկյան և համիսլամական ուժերի հարձակումները: Հայաստանը շարունակում էր գոյապայքար մղել՝ ամփոփված մնալով «խոստացեալ երկրին մէկ մասին մէջ» ու կրելով տնտեսական ծանր տագնապներ[84]: «Ժամանակը» գրում էր, որ Հայկական հարցի ծանրության հիմնակենտրոնը Ամերիկայի Միացյալ Նահանգներն էին: Խմբագրության կարծիքով՝ այդ պետությունն առայժմ միայն նյութական օժանդակություն էր ցուցաբերել Հայաստանին՝ շարունակ հետաձգելով և այդպես էլ կյանքի չկոչված խոստումների շարքին դասելով ռազմական ու քաղաքական օգնությունը: Այնինչ, Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը, համատեղ քայլեր ձեռնարկելով, լրջորեն անհանգստացնում էին հայոց երկրի կառավարությանն ու հայության կարող ուժերին. «Նկատի առնելով իրերու և դէպքերու վիճակն ու ընթացքը Թուրքիոյ և Ռուսիոյ մէջ, մենք մեր հարցին վերջնական լուծումը չենք կրնար պատահականութեանց ձգել»[85]: Հայկական հարցի լուծումը պարբերականը մեծապես պայմանավորում էր վիլսոնյան սահմանագծման, սակայն՝ ո՛չ ամերիկյան աջակցության հետ: Միևնույն ժամանակ գիտակցում էր, որ դիվանագիտական ճանապարհով դժվար թե լուծվեր Վիլսոնյան կամ Սևրի պայմանագրով նախատեսված Հայաստանի սահմանների խնդիրը. «Սահմաններու հարցին ամենադժուարին մասը Վիլսօնի կողմէ Հայաստանի սահմանները գծուելէն ետքը, զանոնք գրաւելու խնդիրն է»[86]: Ինչպե՞ս գրավել, ո՞ւմ հետ համագործակցել հարցերի պատասխաններն այդպես էլ չենք գտնում օրաթերթի էջերում:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ, «Ճակատամարտի» խմբագրակազմի համոզմամբ, կարևոր չէր ոսկե գրիչով[87] էր ստորագրել Ա. Ահարոնյանը Սևրի պայմանագիրը, կամ ինչ տեսք ուներ նրա օգտագործած կնիքը[88]: Առաջնահերթն այն էր, որ հայոց նորաստեղծ և բազում վտանգներ, թշնամական հարձակումներ դիմագրավող պետությունն առաջիկայում կարողանար կազմակերպված ձևով ընթացք տալ այդ փաստաթղթին[89]: Նույն մտահոգությունն առկա էր նաև «Ժամանակ» օրաթերթի էջերում, որի խմբագրակազմը, թեև ոչ պարբերաբար, բայց անդրադարձել էր ողջ հայության համար այդ կարևոր խնդրին՝ փորձելով առաջարկել լուծման ուղիներ: Այլ հարց է, որ դրանք անարդյունավետ էին, թեև ժամանակաշրջանն ինքն էլ անկայուն ու փոփոխական էր և պահանջում էր փորձառու դիվանագիտական մոտեցումներ ու լուծումներ: Իրադարձությունների հետագա ընթացքն այլ ելք էր նախանշել Հայկական հարցի համար: ԱՄՆ-ի ու եվրոպական տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ ձեռքերը լվանալու պիղատոսյան քաղաքականությունը, Հայաստանի խորհրդայնացումը, Թուրքիայում Մուստաֆա Քեմալի իշխանության գալը և հատկապես ռուս-թուրքական կապերի առավել սերտացումն անորոշ ժամանակով հետաձգում են Սևրի պայմանագրի կենսագործումը: Առ այսօր հայ ժողովուրդը շարունակում է սպասել աշխարհաքաղաքական առումով իր աստեղային ժամին, երբ հնարավոր կլինի կյանքի կոչել Սևրի դաշնագիրն ու Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը, որոնցում միջազգային իրավունքի տեսանկյունից ճանաչված են հայության իրավունքներն իր իսկ բնօրրան հայրենիքի նկատմամբ, որը Թուրքիան ժամանակին կարողացել էր բռնազավթել՝ իրականացնելով Հայոց ցեղասպանությունը: Վստահ եմ, որ այս պահանջատիրական պայքարում Հայ դատին մեծապես կօգնեն նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերում վավերագիր-փաստաթղթերի բազմաթիվ արժեքավոր հրապարակումները, որոնք վկայում են այդ պարբերականների հայրենանվեր աշխատակիցների հավատի մասին առ այն, թե վաղ կամ ուշ վերականգնվելու է պատմական արդարությունը Հայկական հարցում, և Սևրի պայմանագիրը դրանում մեծ դեր է խաղալու:

Հղումներ

1- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1918, թիվ 37 («Հայաստան կը ճանչցուի իբրև դաշնակից և պատերազմիկ»):
2- Նույն տեղում:
3- Փարիզի խաղաղության վեհաժողովի ընթացքը տևել է 1919 թվականի հունվարի 18-ից մինչև 1920 թվականի հունվարի 21-ը: Աշխատանքներին մասնակցել են 27 երկրի ներկայացուցիչներ: Հայաստանի Առաջին հանրապետությունը, թեև չէր ստացել մասնակցության պաշտոնական իրավեր, բայց Փարիզ էր ուղարկել պատվիրակություն, որը ղեկավարում էր Ավետիս Ահարոնյանը: Այդ վեհաժողովին մասնակցելու նպատակով այնտեղ էր ուղարկվել նաև մեկ այլ՝ Ազգային պատվիրակությունը, որը պետք է լսելի դարձներ արևմտահայության ձայնը: Դրա նախագահը Պողոս Նուբարն էր (տես Հակոբյան Ա., «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», Ե., 2018, էջ 116-119, «Հայոց պատմություն», Ե., 2010, հ. 4, գ.1-ին, էջ 144-145):
4- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 39 («Հայաստանի մասնակցությունը խաղաղության ժողովին»):
5- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիվ 3449 («Հաշտության ժողովը. բացումի նիստը»):
6- «Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 157, 161:
7- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 43 («Տեսակցություն մը պ. Պողոս Նուբարի հետ»):
8- Նույն տեղում:
9- Նույն տեղում:
10- Նույն տեղում, 1919, թիվ 42 («Պ. Պողոս Նուպարի խոսքը»):
11- Նույն տեղում:
12- http://encyclopedia.am/pages.php?bId=1&hId=1348
13- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 42 («Պ. Պողոս Նուբարի խոսքը»):
14- Նույն տեղում, 1919, թիվ 94 («Դեպի անկախ Հայաստան-Ուիլսընի պաշտոնական հավաստիքները»):
15- Նույն տեղում:
16- Նույն տեղում:
17- Նույն տեղում:
18- Նույն տեղում:
19- Նույն տեղում, 1919, թիվ 98 («Թրքահայ պատվիրակները Ուիլսընի մոտ»):
20- Նույն տեղում:
21- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիվ 3463 («Ուիլսընն և հայերը»):
22- Նույն տեղում, 1919, թիվ 3461 («Ամերիկայի նախագահին խոստումը հայերուն համար»):
23- Գասպարյան Կ., «Համընդհանուր խաղաղության հղացքը և Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը» ատենախոսություն, էջ 127-133 (http://etd.asj-oa.am/719/1/Karen_Gasparyan-atenaxosutyun.pdf):
24 Ղազարյան Հ., «Սևրի պայմանագիրը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաբաժանման վերաբերյալ», Ե., 2012, էջ 395:
25- Խուրշուդյան Լ., «Հայաստանի բաժանումը 1920 թվականին», Ե., 2002, էջ 104-109 (տե՛ս նաև http://www.aniarc.am/2017/10/25/usa-armenia-mandate-1920-khur-shudyan/):
26- Բրիտանացի հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը Մեծ Բրիտանիայի վարչապետն է եղել 1916-1922 թթ. և ի պաշտոնե ընդգրկվել է Փարիզի Հաշտության վեհաժողովի ներկայացուցչական մարմնի կամ Անտանտի Գերագույն խորհրդի կազմում (տե՛ս https://bit.ly/3hYtIn5):
27- Գալոյան Գ., «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.», Ե., 1999, էջ 88:
28- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 111 («Համազգային պատվիրակության հիշատակագիրը»):
29- Նույն տեղում:
30- Նույն տեղում:
31- Նույն տեղում:
32- Նույն տեղում:
33- Նույն տեղում:
34- Նույն տեղում:
35- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիվ 3473 («Իշխան Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի ներկայացուցած հիշատակագիրը Խաղաղության համաժողովին, մաս 1-ին»), 1919, թիվ 3474 («Իշխան Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի ներկայացուցած հիշատակագիրը Խաղաղության համաժողովին, մաս 2-րդ»):
36- Նույն տեղում, 1919, թիվ 3473 («Իշխան Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի ներկայացուցած հիշատակագիրը Խաղաղության համաժողովին, մաս 1-ին»):
37 Նույն տեղում:
38- Այդ հոդվածաշարը լույս է տեսել «Ճակատամարտի»՝ 1919 թվականի համապատասխանաբար 115-118, 120, 121 համարներում:
39- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 128 («Հայկ. պատվիրակության պատճառաբանությունը Կիլիկիո մասին» (մաս 1-ին), 1919, թիվ 130 («Հայկ. պատվիրակության պատճառաբանությունը Կիլիկիո մասին» (մաս 2-րդ)):
40- Նույն տեղում, 1919, թիվ 170 («Դեպի ամբողջական և անկախ Հայաստան»), 1919, թիվ 172 («Ազգային պատվիրակության գործունեությունը»):
41- Նույն տեղում, 1919, թիվ 170 («Դեպի ամբողջական և անկախ Հայաստան»):
42- Նույն տեղում:
43- Նույն տեղում:
44- Նույն տեղում, 1919, թիվ 234 («Փարիզի Ազգ. Պատվիրակությունը և Հայաստանի Հանրապետությունը»):
45- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիվ 3559-3560 («Տեսակցություն մը Դուրյան Ս.ի հետ»):
46- Նույն տեղում:
47- Նույն տեղում, 1919, թիվ 3520 («Տեսակցություն մը պ. Ս. Հինդլյանի հետ»):
48- Նույն տեղում:
49- Նույն տեղում, 1920, թիվ 584 («Տեսակցություն մը Բարիզի համագումարի պուլկարահայ պատվիրակ տքթ.Հինդլյանի հետ»):
50- Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 118:
51- Նույն տեղում, էջ 119:
52- «Դաշնակցական կառավարության դոկումենտներից: 1-ին. Ա. Ահարոնյանի զեկույց նամակները», Ե., 1922, էջ 24:
53- «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», նշվ. աշխ., էջ 146:
«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 234 («Փարիզի Ազգ. Պատվիրակությունը և Հայաստանի Հանրապետությունը»):
54- Նույն տեղում:
55- Նույն տեղում:
56- Նույն տեղում:
57- Նույն տեղում:
58- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիվ 3559-3560 («Ռամկավարները կրոողքեն»):
59- Նույն տեղում, 1919, թիվ 3567 («Հայտարարություն Հայ ռամկավար կուսակցության»):
60- Նույն տեղում, 1920, թիվ 584 («Գործ և խոսք»):
61- «Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 145-148:
62- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 324 («Հայկ. պատվիրակ. բողոքի նամակը Հաշտության համաժողովին»):
63- Նույն տեղում:
64- Նույն տեղում:
65- Նույն տեղում:
66- Նույն տեղում:
67- «Հայոց պատմություն», նշվ. աշխ., էջ 148:
68- Ահարոնեան Ա., «Սարդարապատից մինչև Սևր և Լօզան», Պօսթըն, 1943, էջ 85:
69- Նույն տեղում, էջ 65:
70- Վրացեան Ս., «Բանակցութիւններ Ազգային պատուիրակութեան և Հայաստանի Հանրապետութեան միջև», Պօսթըն, 1920, էջ 63-64:
71- «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ե., 1972, էջ 672-683:
72- Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 279-283:
73- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, թիվ 506 («Արևելյան նահանգները» չեն տար Հայաստանին»):
74- Նույն տեղում:
75- Նույն տեղում, 1920, թիվ 508 («Դաշնակիցներու վճռական պատասխանը թուրքերուն»):
76- Նույն տեղում, 1920, թիվ 526 («Վերջապես ստորագրվեցավ»):
77- Նույն տեղում, 1920, թիվ 527 («Հայաստանի կողմե պ. Ահարոնյան կստորագրե թրք. դաշնագիրը»):
78- Նույն տեղում:
79- Նույն տեղում, 1920, թիվ 527 («Ստորագրությունը»):
80- Նույն տեղում:
81- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1920, թիվ 570 («Պատմական օր մը Բարիզի մեջ»):
82- Նույն տեղում:
83- Նույն տեղում, 1920, թիվ 567 («Հայկական հարցին ծանրության կեդրոնները»):
84- Նույն տեղում:
85- Նույն տեղում:
86- Նույն տեղում:
87- «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, թիվ 535 («Ինչպե՞ս ստորագրվեցավ դաշնագիրը. պ. Ահարոնյանի ոսկե գրիչը»):
88- Նույն տեղում, 1920, թիվ 529 («Ահարոնյանի կնիքի լուսանկարը»):
89- Նույն տեղում, 1920, թիվ 527 («Ստորագրությունը»):

Ձերբազատինք նաեւ ներքին խտրականութենէն

Վրէժ-Արմէն

Խտրականութեան դէմ ի յայտ եկող ընդհանուր շարժումի խորապատկերին վրայ կ'արժէ տեսնել նաև ներազգային խտրականութիւնը, որուն դէմ մենք պարտաւոր ենք կեցուածք ունենալ:

Ազգ մը ազգ է կամ ազգ կոչուելու արժանի հաւաքականութիւն է, երբ ունի ազգային նպատակներ, ազգային արժէքներ ու ազգային մտածելակերպ: Մնացեալ բոլոր հարցերն երկրորդական հարթութեան վրայ կու գան: Յարգելի են բոլոր տեսակէտները, մօտեցումներնու համոզումներն այնքան ատեն, որ հասարակաց են նպատակները, արժէքներն ու մտածելակերպերը: Իսկ բոլոր տարբերութիւնները, այլութիւնները գոյութիւն կրնան ունենալ հաւաքականութեան մը մէջ, եթէ առկայ են փոխադարձ սէրն ու յարգանքը: Նորութիւն չէ այդ սիրոյ ու յարգանքի պակասը մեր մէջ: Այսինքն՝ նորութիւն չէ ներքին խտրականութիւնը: Նորութիւն չէ մանաւանդ մեր օտարամոլութիւնը, այսինքն՝ հայուն դէմ՝ ի նպաստ օտարին խտրականութիւնը, զոր այնքան լաւ ձաղկած է Յակոբ Պարոնեան շուրջ մէկուկէս դար առաջ: Սա ոչ միայն անհատական, այլև հաւաքական երևոյթ է, համախտանի՛շ է: Այսօր, սակայն, այդ մասին ալ չեմ ուզեր խօսիլ, այլ կ'ուզեմ անդրադառնալ ներքին խտրականութեան տարբեր երևոյթներու:

Միտք չունիմ պատմական ակնարկ մը նետելու այս հարցին վրայ, սակայն շատ լաւ գիտենք, թէ ինչպէս մեր հաւատարմութիւններուն և մեր յոյսերուն մէջ տատանած ենք ոչ միայն Արևելքի ու Արևմուտքի միջև, այլև Հիւսիսի ու Հարաւի ալ միջև ու զոհ ենք գացած մեզ շրջապատող ուժերու խարդաւանքներուն ու խաղերուն՝ չկարենալով դիմադրել մեզ բաժնող, մեզ իրարու հակադրող ու այդպիսով մեզ տևաբար տկարացնող ուժերուն:

Այս երևոյթը զգալի դարձաւ մանաւանդ Հայաստանի խորհրդայնացումէն ետք, երբ, Մեծ եղեռնէն հազիւ ճողոպրած ու վերականգնելու համար բոլորին միահամուռ ճիգերուն կարիքն ունեցող հայութիւնը բաժնուեցաւ «Հայաստանասէր» ու «Հակահայաստանեան» արուեստական ճամբարներու, և մեր ուժերուն մէկ կարևոր մասն սպառեցաւ իրար հարուածելու և իրարու դէմ պայքարելու ճամբուն՝ փոխանակ ի խնդիր միասնական ուժերով ինքզինք վերագտնելու և մեր իրաւունքները պաշտպանելու գործին:

Բաւական ճամբայ կտրեր էինք այս ախտէն ձերբազատելու համար: Մեր մեծ յոյսն էր, որ Հայաստանի վերանկախացումով ներքին խտրականութիւնը կը վերանար միանգամ ընդմիշտ: Սխալեցանք, չարաչար սխալեցանք: Շարունակուեցան մեզ պառակտելու և մեր ուժերը յումպէտս վատնելու մղող փորձերը, քանի որ մեր գոյութիւնն իսկ ցանկալի չէր, ու կը թուի, թէ տակաւին ցանկալի չէ մեր հողատարածքին վրայ աչք ունեցող բարեկամներուն կամ թշնամիներուն համար: Իսկ մենք ենթարկուեցանք ու տակաւին կ'ենթարկուինք այդ փորձերուն:

Այսօր կրնանք տեսնել փոխադարձ խտրականութիւն այլևս ոչ թէ պարզապէս կամ ոչ միայն գաղափարական գետնի վրայ, որ արուեստական գետին մըն էր, քանի որ խորքին մէջ գաղափարական տարբերութիւններով չէ, որ կը հակադրուէինք իրարու, այլ մեր երկրին վրայ տիրապետող ուժին հետ թէ դէմ ըլլալու իրավիճակով:

Այսօր ալ ահա տակաւին կը հակադրուինք իրարու՝ որպէս հայաստանաբնակ ու արցախաբնակ, հայրենաբնակ ու արտերկրաբնակ, որպէս էջմիածնական թէ անթիլիասական, որպէս առաքելական թէ կաթոլիկ կամ աւետարանական, տակաւին որպէս այլևայլ աղանդներու հետևող, նոյնիսկ ունևոր և չունևոր, ուսեալ և անուս և այլն: Եւ չմոռնանք. կայ տևական խտրականութիւնն ընդդէմ կիներուն, ընդդիմութիւնը կիներու իրաւունքներուն, այլև այլ փոքրամասնութիւններուն: Չեմ հնարեր այս բաները, իրողութիւններ են ասոնք մեր այսօրուան՝ 21-րդ դարու կեանքին մէջ: Բոլորն ալ նոյնքան արուեստական բաժանումներ են, քանի որ պատճառ չկայ, որ բոլորս ալ զիրար չընդունինք ու չյարգենք՝ առանց այդ նկատումներուն:

Պատճառ չկայ, չի կրնար ըլլալ, եթէ կայ նպատակի, արժէքներու ու մտածելակերպի հասարակ յայտարար: Ահա այդ յայտարարն է, որ կ'ուզենք գտնել ու պահպանել, ինչ ալ ըլլան արտաքին պայմաններն ու ճնշումները: Ըստ իս՝ այդ հասարակ յայտարարը կրնայ կայանալ հետևեալ հասկացութիւններով.

- Հայաստանն է մեր հայրենիքը, ի՛նչ պայմաններու տակ ալ գտնուի, ի՛նչ իրավիճակ ալ ունենայ՝ անկախ, կիսանկախ կամ գերեալ,
- հայերէնն է մեր լեզուն, որքան ալ որ հետզհետէ նուազ ու նուազ գործածուի ան, հետզհետէ աւելի ու աւելի աղաւաղուի,
- հայ ընտանիքն է մեր հաւաքանութեան առանցքը, նոյնիսկ եթէ ընտանիքի յղացքն անգամ այսօր մթագնիլ սկսեր է ժամանակակից քաղաքակրթութեան այս օրերուն:

Ի՞նչ պիտի ընենք, որ ազգովին համոզուած ըլլանք այս հասկացութիւններուն: Ի՞նչ պիտի ընենք, որ կարելի եղած չափով մեր առաւելագոյն թիւն ապրի հայրենի հողին վրայ, նախընտրէ՛ ապրիլ հոն, հոգեպէս ու տնտեսապէս լա՛ւ զգայ, հոն ապրելով ապահով ու հանգիստ՝ փոխանակ դիմելու կամաւոր տարագրութեան:

Ի՞նչ պիտի ընենք, որ մեր առօրեայ կեանքը կարենանք ապրիլ մեր լեզուով, իսկ մեր լեզուն ապրի մեզմով, ու լեզուին հետ՝ մեր մշակոյթը, մեր բարոյական ըմբռնումները, մեր էութիւնն ու ինքնութիւնը՝ կամայ-ակամայ ո՛ւր որ ալ գտնուինք:

Ի՞նչ պիտի ընենք, որ պահպանուին ընտանեկան սրբութիւնները, այն սրբութիւնները, որոնք դիմացեր են ամենէն դաժան ժամանակներուն ու պահեր են ազգը, իսկ հիմա կը գտնուին անհետանալու վտանգին առջև:

Ի վերջոյ, լա՛ւ է հայ ըլլալը, թէ՛ ոչ: Կ'ուզենք հայ ըլլալ, թէ՝ ոչ: Եւ հո՛ս է, որ կրնանք ըլլալ, պարտաւո՛ր ենք ըլլալ խտրական: ■



Հովհաննես Քաջազնունի

Ազգ և հայրենիք (հատված)

Կեանքի անբարեյաջող պայմանները, արտաքին ոյժերն ու ճնշումները կարող են կաշկանդել կամ դժուարացնել մարդու ազատ ընտրութիւնը, մղել նրան՝ հակառակ իր կամքի, այս կամ այն կողմը:

Ես ուզում եմ հայախօս մնալ՝ սա է իմ ցանկութիւնը, ընտրութիւնը, պահանջը: Բայց ինձ ասում են. եթէ ուզում ես պետական պաշտօն ստանալ, պէտք է լաւ ռուսերէն գիտենաս. կամ՝ եթէ ուզում ես ապրանք ծախել ինձ, պէտք է ընտիր թուրքերէն խօսես հետս:

Ռուսէրէնն ու թուրքերէնը գալիս են խեղդելու իմ հայերէնը: Ինչ անեմ ես, ինչ դիրք բռնեմ՝ պայքարեմ թէ տեղի տամ:

Պայքարը պահանջում է ոյժերի լարում ու սպառում, հարկադրում է զրկանքների ու զոհաբերութիւնների... Յանուն ինչի՞ դժուարացնեմ իմ կեանքը, կամ վտանգեմ բարեկեցութիւնս:

Յիշեցնեմ, որ ազգութեան դէմ արտայայտուողների սովորական առարկութիւններից մէկն էլ այն է, որ ազգերի անջատ գոյութիւնը պատճառ է դառնում մշտական ու անվերջ պայքարների:

Անշուշտ այդպէս է, քանի կան տարբեր ազգեր, անհրաժեշտօրէն պիտի լինի նաև ազգային պայքար: Բայց մի՞թէ լուրջ առարկութիւն է սա:

.....

Եթէ ուզենանք վերացնել ասպարէզից պայքարը, պէտք է վերացնենք կեանքը առհասարակ, որովհետև ինքը ուրիշ բան չէ, քան անընդհատ պայքար: Կենսական բոլոր երևոյթները ըստ էութեան պայքարի երևոյթներ են: Պայքարը կեանքի հիմնական ու անհրաժեշտ պայմանն է. առանց պայքարի չկայ կեանքում մանաւանդ առաջադիմութիւն: Անպայքար գոյութիւնը գերեզմանումն է (ու այն էլ մարդու համար միայն, որովհետև գերեզմանի խորքերումն էլ շարունակվում է պայքարը, թէև պայքարողը մարդը չէ այլևս):

(Հովհաննես Քաջազնունի, Երկեր, Երևան, Լուսակն հրատարակչություն, 2018 թ., էջ 347-348)

ԴՐՕՇԱԿ